ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

(Քննարկվել և հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի ապրիլի 25-ի նիստի թիվ 7/1 որոշմամբ)




ԵՐԵՎԱՆ 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՓԱՍՏԵՐ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ....................................................................................... 3

ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ............................................. 7

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.................................. 14

ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ................................ 26

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.......................................................................... 39

ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ ......................................................................................................... 56

ՉԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ........................................... 69

ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ..................................... 81

ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ................................... 96

ՉԱՓԱՆԻՇ 9.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ.................................106

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ................................117

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..........................................................................................129

ԵՊՀ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ .....173

## ՓԱՍՏԵՐ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 1919 թ.՝ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման տարիներին: Այն Հայաստանի մայր բուհն է, քանի որ նրա առանձին ֆակուլտետների և բաժինների հիմքի վրա են ստեղծվել հանրապետության բուհերից շատերը: Իր գոյության ավելի քան 90 տարիների ընթացքում ԵՊՀ-ն տվել է 100 հազարից ավելի շրջանավարտ, ստեղծվել են բազմաթիվ ֆակուլտետներ և հետազոտական կենտրոններ:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999 թ.) 28-րդ հոդվածի 8-րդ կետի՝ Երևանի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է ՀՀ Կառավարությունը: ԵՊՀ-ն Հայաստանի և Հարավային Կովկասի բուհերի շարքում մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր: Այդ են փաստում նաև միջազգային վարկանշային դասակարգումները (Վեբոմետրիքս, Քոլեջների և համալսարանների միջազգային վարկանշային դասակարգում, Համալսարանների ակադեմիական գործունեության վարկանշավորում), ըստ որոնց՝ ԵՊՀ-ն առաջինն է Հայաստանի բուհերի շարքում և լավագույններից է Հարավային Կովկասում (տե՛ս www.webometrics.info, www.4:cu.org, www.urapcenter.org):

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանն իր շրջանավարտների մրցունակությունը տեղական և գլոբալ աշխատաշուկայում ապահովելու նպատակով տրամադրում է բարձրորակ կրթական ծառայություններ: Ժամանակի մարտահրավերներին դիմագրավելու և իր կրթական առաքելությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար ԵՊՀ-ն մշտապես նորացնում է իր կրթական ծրագրերի տեսականին ու բովանդակությունը, կիրառում դասավանդման և ուսուցման արդիական մեթոդներ, արդյունավետ օժանդակ ծառայություններ է մատուցում իր ուսանողներին:

ԵՊՀ կրթական ոլորտում նշանակալի կառուցվածքային փոփոխություններ են մեկնարկել դեռևս 1990-ականների կեսերից: 1995-ին ԵՊՀ-ն վերանայեց իր կրթական որակավորումների կառուցվածքը՝ անցնելով որակավորումների երկաստիճան համակարգի՝ բակալավրի և մագիստրոսի աստիճաններով: 2007 թ-ին ECTS կրեդիտային համակարգը ներդրվեց մագիստրոսի բոլոր ծրագրերում, իսկ մեկ տարի հետո՝ բակալավրի ծրագրերում:

Ներկայումս, ԵՊՀ-ն իրականացնում է 60 բակալավրի, 130 մագիստրոսի և 70 ասպիրանտական ծրագրեր, որտեղ ընդգրկված է շուրջ 18000 ուսանող (13500՝բակալավրիատում, 4000՝ մագիստրատուրայում և 400՝ ասպիրանտուրայում) (2013թ. հունվարի 1-ի դրությամբ), որից մոտ 5000-ը հեռակա ուսուցման համակարգում: Համալսարանն ունի 19 ֆակուլտետ՝ 100-ից ավելի ընդհանուր և մասնագիտական ամբիոններով և մեկ մարզային մասնաճյուղ Իջևան քաղաքում՝ 4 ֆակուլտետներով: ԵՊՀ-ն ունի մոտ 3000 աշխատակից, որից գրեթե 1300-ը հիմնական դասախոսական կազմն է (166 պրոֆեսոր, 461 դոցենտ, 639 ասիստենտ և դասախոս): Համալսարանում գիտակրթական գործունեություն են իրականացնում նաև

Գիտությունների ազգային ակադեմիայի 23 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմում է 12,5:

Համալսարանն ունի իր հրատարակչությունն ու գրադարանը:

Բակալավրի ծրագիրը 4 տարի է՝ 240 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ, իսկ մագիստրոսի ծրագիրը՝ 2 տարի և 120 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ: Համալսարանն ունի նաև հետազոտողի (ասպիրանտական) եռամյա ծրագիր՝ 180 ECTS կրեդիտ գիտաուսումնական բեռնվածությամբ: ԵՊՀ-ում գործում են գիտական աստիճանաշնորհման 11 մասնագիտական խորհուրդներ:

Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով ԵՊՀ-ն այժմ ստեղծում է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանող որակի ներքին ապահովման համակարգ: Կրթական ծրագրերն աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ներդրվել են ուսանողների և շրջանավարտների հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ:

Դասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացումը ԵՊՀ առաջնահերթությունների ցանկում է, ինչը հանդիսանում է բարձրորակ կրթություն տրամադրելու կարևորագույն նախապայմանը: Վերջերս ԵՊՀ-ն ներդրեց դասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրեդիտային հենքով կառուցված կրթագիտական ծրագիրը: Այն կազմված է հատուկ վերապատրաստման դասընթացներից, որոնք միտված են զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառման ասպարեզում:

ԵՊՀ-ն իր լրացուցիչ կրթության ծրագրերի և դասընթացների միջոցով հասարակության տարբեր խմբերին տրամադրում է նաև մասնագիտական ուսուցում, շարունակական կրթության դասընթացներ և հարատև ուսումնառության այլ հնարավորություններ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն ոչ միայն Հայաստանի, այլ նաև ողջ կովկասյան տարածաշրջանի խոշորագույն գիտակրթական կենտրոններից է: 2011թ. վիճակագրության համաձայն՝ ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ոլորտում ընդգրկված են մոտ 1000 հետազոտողներ (որոնցից 350-ը՝ հիմնական հաստիքով): Ներկայիս գիտահետազոտական գործունեության բյուջեն կազմում է 3,2 մլն ԱՄՆ դոլար, ինչը երեք անգամ գերազանցում է 2005 թ-ի ցուցանիշը:

Ներկայումս ԵՊՀ-ում գործում են գիտահետազոտական 1 ինստիտուտ, 24 լաբորատորիա և 9 կենտրոն: Գիտահետազոտական լաբորատորիաների մեծ մասը ներգրավված է բնական գիտությունների տարբեր ոլորտներում իրականացվող հետազոտություններում, ներառյալ՝ ֆիզիկան, քիմիան և կենսաբանությունը: Հումանիտար գիտություններում առաջատար դիրք է զբաղեցնում հայագիտությունը:

2012թ-ին ԵՊՀ-ում հրատարակվել է շուրջ 2000 գիտական հոդված, ինչպես նաև ավելի քան 300 մենագրություն, դասագիրք և ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ-ում տարեկան իրականացվում է 85 թեմատիկ գիտահետազոտական նախագիծ, որոնք ֆինանսավորվում են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դրամաշնորհներից:

Համալսարանը հրատարակում է ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածուների և տեղեկագրերի 9 շարքեր, որոնցից վեցը՝ հումանիտար և սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում, իսկ երեքը՝ բնագիտական (մեկը՝ անգլերեն):

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն Հայաստանում կրթության միջազգայնացման առաջատարներից է: Ներկայումս այն համագործակցության շուրջ 200 պայմանագրեր ունի միջազգային գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ ամբողջ աշխարհում:

Ի լրումն երկկողմ միջբուհական համագործակցության, ԵՊՀ-ում տարեկան իրականացվում են ավելի քան 50 միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր: Դրանք ֆինանսավորվում են տարբեր միջազգային գործակալությունների և ֆոնդերի կողմից, ինչպիսիք են՝ NATO SFP, ANSEF, NFSAT-CRDF, ISTC, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Ֆոլքսվագեն հիմնադրամ, DAAD, ԲՀՀ, Русский Мир և այլն: Այժմ ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է Եվրամիության կողմից ֆինանսավորվող ՏԵՄՊՈՒՍ ծրագրում: Վերջին տարիներին ԵՊՀ-ն իրականացրել է ՏԵՄՊՈՒՍ-III և ՏԵՄՊՈՒՍ-IV նախագծեր այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են համալսարանական կառավարումը, միջազգայնացումը և որակի ապահովումը, մշակել և արդիականացրել է ուսումնական ծրագրերն ու դասընթացները:

ԵՊՀ-ն «Էրազմուս-Մունդուս արտաքին համագործակցության պատուհան» ուսանողական փոխանակման ծրագրերում կոնսորցիում-համալսարանների անդամ է, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնառելու եվրոպական համալսարաններում և այնտեղ ստացած կրեդիտները որպես իրենց կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս փոխանցելու համալսարան: ԵՊՀ-ն անդամակցում է նաև «ԱՊՀ ցանցային համալսարան» միջազգային կրթական ցանցին, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին մագիստրատուրայի առաջին տարին ուսումնառելու արտասահմանում, իսկ երկրորդը՝ ԵՊՀ-ում, արդյունքում ստանալով դիպլոմ երկու բուհերից:

ԵՊՀ-ն անդամակցում է Համալսարանների միջազգային ընկերակցությանը, Եվրոպական համալսարանների ընկերակցությանը, Եվրասիական համալսարանների ընկերակցությանը, Սևծովյան համալսարանների ցանցին և Համալսարանների նախագահների միջազգային ընկերակցությանը: Գործընկեր համալսարանների հետ համագործակցությունը ծավալվում է հետևյալ ոլորտներում.

- Բուհական գիտնականների, դասախոսական և հետազոտական կազմերի, տեխնիկական և վարչական աշխատակիցների փոխադարձ այցելություններ: ԵՊՀ ավելի քան 400 դասախոսներ և հետազոտողներ յուրաքանչյուր ուստարի ներգրավվում են միջազգային ծրագրերում, կրթական կամ հետազոտական դրամաշնորհային նախագծերում:

- ԵՊՀ-ն խրախուսում է ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերում: Վերջին տարիներին, ԵՊՀ ավելի քան 300 ուսանողներ ամեն տարի մասնակցում են տարբեր միջազգային ծրագրերի:

ԵՊՀ ուսանողական համակազմի անքակտելի մասն են կազմում օտարերկրյա ուսանողները: ԵՊՀ-ում սովորել են մոտ 7600 օտարերկրյա ուսանողներ՝ ավելի քան 80 երկրներից (3700-ը՝ սփյուռքահայեր): Ներկայումս, ավելի քան 500 օտարերկրացի ուսանողներ են սովորում ԵՊՀ-ում, որոնցից մոտ 50-ը ասպիրանտներ են: ԵՊՀ-ում իրենց թեկնածուական ատենախոսություններն են պաշտպանել մոտ 115 օտարերկրացի սովորողներ (35-ը՝ սփյուռքահայեր):

## ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄՈՒՀ) ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ՈՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.1. ՄՈւՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Համալսարանի առաքելությունը սահմանում է նրա հիմնադիր փաստաթուղթը՝ կանոնադրությունը (նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թ.): ԵՊՀ կանոնադրության 1-ին հոդվածն ամրագրում է, որ համալսարանի՝ որպես պետական ինքնավար բուհի գործունեությունը նպատակամղված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության և հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով: ԵՊՀ առաքելությունից երևում է, որ այն բազմապրոֆիլ դասական համալսարան է: Այդուհանդերձ, կան բնագավառներ (օր.՝ բժշկագիտություն, ինժեներական գիտություններ, գյուղատնտեսություն և այլն), որոնք խորհրդային ավանդույթի համաձայն՝ ընդգրկված չեն համալսարանի գիտակրթական գործունեության մեջ:

Համալսարանի կանոնադրական կարգավիճակին համապատասխան՝ նրա առաքելությունն ընդգրկում է գործունեության երեք հիմնական ուղղություն՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ՈԱՇ-ի սահմանած մակարդակներով (բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի որակավորումներ), գիտական հետազոտություններ, հանրային ծառայություններ:

Համալսարանի կանոնադրական առաքելությունը և դրանից բխող նպատակներն ու խնդիրներն ամրագրված են նաև ԵՊՀ (2010-2014 թթ.) զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ, ընդունել է ԵՊՀ խորհուրդը 2009 թ.), որը հստակ սահմանում է դրանց հասնելու ուղիները և համապատասխան ռազմավարությունները: Որպես համալսարանի ռազմավարական պլանավորման փաստաթուղթ՝ այն բացահայտում է համալսարանի ներկան և փորձում է կանխատեսել ապագան՝ նախանշելով զարգացման համար առավել նպաստավոր ուղիները:

ՌԾ-ն ԵՊՀ զարգացման ռազմավարությունը կառուցել է առաքելության, տեսլականի, հիմնարար արժեքների, ռազմավարական նպատակների, աջակցող նպատակների, ընթացիկ գերակայությունների և կոնկրետ գործողությունների հենքի վրա:

ԵՊՀ առաքելության կատարումը և հեռանկարում նրա տեսլականի իրականացումը պայմանավորված են ՌԾ-ում սահմանված 3 ռազմավարական նպատակների իրագործմամբ.

1) Բարձրորակ կրթություն, որի իրագործման համար սահմանվել են 5 խնդիրներ՝ 34 ռազմավարություններով[1]:

2) Բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն, որի իրականացման համար սահմանվել են 4 խնդիրներ՝ 28 ռազմավարություններով:

3) Հանրային ներգրավում և ծառայություններ, որի իրականացման համար սահմանվել են 2 խնդիրներ՝ 16 ռազմավարություններով:

Ռազմավարական նպատակներից յուրաքանչյուրի կատարման առաջընթացը ստուգելու համար սահմանվել են նաև առաջընթացի պարբերական գնահատման ցուցանիշներ:

Համալսարանի ռազմավարական նպատակները կազմում են նրա գործունեության 3 առանցքային ոլորտները: Աջակցող 3 նպատակները (որակյալ կադրային ներուժ, որակյալ ենթակառուցվածքներ, որակյալ ծառայություններ) ներկայացնում են այն, ինչն անհրաժեշտ է համալսարանին՝ ռազմավարական նպատակներն իրականացնելու համար, իսկ ընթացիկ 3 գերակայությունները (ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն, ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում, ռազմավարական գործակցություն և միջազգայնացում) ուղղորդում են ռազմավարական նպատակներին հասնելու մոտեցումները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.2. ՄՈւՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահեկիցների կարիքները:**

ԵՊՀ-ն ունի իր առաքելությամբ պայմանավորված արտաքին և ներքին շահեկիցների հստակ շրջանակ, որում ընդգրկված են՝

- ուսանողները, շրջանավարտները, դիմորդները և նրանց ծնողները,
- դասախոսական, գիտական և վարչական կազմերը,
- գործատուները,
- գիտամանկավարժական հանրությունը, կրթության, գիտության և մշակույթի ոլորտների շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները,
- ՀՀ Կառավարությունը և լիազորված պետական մարմինը:

ԵՊՀ-ում գործում են նրանց պահանջմունքները բացահայտող մի շարք մեխանիզմներ: Ինչպես համալսարանի, այնպես էլ նրա ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ապահովված է և՛ ներքին, և՛ արտաքին շահեկիցների ներկայացուցիչների մասնակցությունը: Այսպես, ԵՊՀ խորհուրդը ձևավորվում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերից (25 %), ուսանողների ներկայացուցիչներից (25 %), ինչպես նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչներից (պետական պաշտոնյաներ), լիազորված պետական մարմնի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներից: Վերջիններս

[1] Գործողություններ, քաղաքականություն, ծրագրեր, նախագծեր, որոշումներ, ռեսուրսային հատկացումներ և այլն:

առաջադրվում են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված գործիչներից, ինչպես նաև ԵՊՀ-ի հետ համագործակցող գործատուներից:

ԵՊՀ գիտական խորհրդի անդամների 25 %-ը սովորողներն են: Շահեկիցների մասնակցության սկզբունքով են կառուցված նաև ԵՊՀ ֆակուլտետների խորհուրդների ու գիտական խորհուրդների կազմավորման կարգերը:

Շահեկիցների պահանջմունքների բացահայտման մեխանիզմ է նաև համահամալսարանական և ֆակուլտետային զանազան հանձնաժողովներում ու հանձնախմբերում շահեկիցների տարբեր խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

ԵՊՀ-ում կարևոր է ուսանողների շահերի և պահանջմունքների բացահայտումը: Այդ մեխանիզմներից են նաև ուսանողական ինքնավարությունը, համալսարանի կառավարմանը ուսանողների մասնակցությունը, համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունների գործունեությունը, ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումները և այլն:

Ինչպես ԵՊՀ կանոնադրությունը, այնպես էլ ՌԾ-ն համալսարանի առաքելության իրականացումը կառուցել են մասնակցականության և կոլեգիալության սկզբունքներով: Ներքին և արտաքին շահեկիցներն իրենց մասնակցությունն են ունեցել ՌԾ-ի մշակմանը, որի մասին են վկայում այն փաստերը, որ առաջին՝ ռազմավարական պլանավորման հանձնախումբը բավականին ներկայացուցչական էր: Դրանում ներգրավված էին ներկայացուցիչներ ԵՊՀ հիմնական կառույցներից՝ կենտրոնական և ֆակուլտետային մակարդակի վարչական աշխատողներ և դասախոսներ: Երկրորդ՝ ՌԾ-ի և' առաջին, և' երկրորդ նախագծերը շրջանառվել են համալսարանի ներքին և արտաքին շահեկիցների շրջանում՝ լայն քննարկման և հետադարձ կապի ստացման նպատակով: Երրորդ՝ ՌԾ-ն քննարկվել և ընդունվել է նախ ԵՊՀ գիտխորհրդի, ապա և ԵՊՀ խորհրդի կողմից, որտեղ ընդգրկված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահեկիցներ: Նախագծի քննարկման ընթացքում շահեկիցների կողմից կատարվել են մի շարք առաջարկություններ և լրացումներ: Օրինակ՝ ԵՊՀ ուսանողական խորհրդի և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության առաջարկությունների հիման վրա ՌԾ-ում ներառվել են Խնդիր VIII. զ)-ն և Խնդիր VIII. է-ն (տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 40-41): Ֆակուլտետներից և այլ ստորաբաժանումներից ստացված առաջարկությունների հիման վրա ընդհանուր առմամբ 23 լրամշակում կատարելուց հետո ՌԾ-ն վերջնական տարբերակով ընդունվել է ԵՊՀ խորհրդի կողմից:

Նույն ընթացակարգով են կատարվում նաև ԵՊՀ կանոնադրության փոփոխությունները և լրացումները՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելուց առաջ:

ԵՊՀ կարևորագույն շահեկիցներն են ուսանողները: Ըստ այդմ՝ ՌԾ-ում համալսարանի հիմնարար արժեքներ են հռչակված «ուսանողի հաջողությունը» և «մատչելի կրթությունը» (տե՛ս ԵՊՀ ՌԾ «Հիմնարար արժեքները» բաժինը, էջ 9), իսկ նրանց կրթական կարիքների բավարարման համար ռազմավարական նպատակ է սահմանվել բարձրորակ կրթությունը (տե՛ս ԵՊՀ ՌԾ «Բարձրորակ կրթություն» բաժինը, էջ 13): ՌԾ-ն ԵՊՀ-ի առջև խնդիր է դնում բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը համալսարանում իրենց ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից:

Համալսարանի կարևորագույն շահեկիցների՝ դիմորդների կարիքների բավարարման նպատակով ԵՊՀ ՌԾ-ն համալսարանի ընթացիկ գերակայություն է սահմանել «ընդունելության բազմազանեցված մուտքը և համապատասխանությունը» (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիրներ VII. ա, VII.բ, VII. գ, էջ 32-35): ՌԾ-ն նախատեսում է նաև բազմակողմանի կապերի հաստատում իր շրջանավարտների հետ՝ այն նպատակամղելով համալսարանի զարգացմանն ու շրջանավարտների հարատև կրթության ապահովմանը:

Ներքին կարևոր շահեկիցներից է համալսարանի գիտամանկավարժական կազմը: Դրանից ելնելով՝ որակյալ գիտական և մանկավարժական կադրային ներուժը ՌԾ-ն սահմանում է որպես ԵՊՀ առաքելության իրականացմանն աջակցող նպատակ: ՌԾ-ն նախատեսում է շահեկիցների այս խմբի որակական բարելավման բարեփոխումների ծրագիր:

ՌԾ-ն հաշվի է առնում նաև համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողների սոցիալական շահերը: Ծրագիրը, որակյալ կադրային ներուժը դիտարկելով որպես համալսարանի առաքելությանն աջակցող նպատակներից մեկը, խնդիր է դնում բարձրացնել ԵՊՀ աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

ԵՊՀ արտաքին շահեկիցներից են հատկապես գործատուները, ուստի ՌԾ-ն ռազմավարական գործակցությունը հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ դիտարկում է որպես համալսարանի առաքելության իրականացման ընթացիկ գերակայություն: Այն կոչված է ուղղորդելու ռազմավարական նպատակներին հասնելու մոտեցումները (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր IX. ա, էջ 42-43): Սակայն դեռևս չկա շրջանավարտների գիտելիքներից և հմտություններից գործատուների բավարարվածությունը բացահայտող հարցման մեխանիզմը: Այս առումով, ԵՊՀ-ում արդեն մեկնարկել է կոնկրետ մասնագիտական բնագավառներում իր հիմնական գործատուների բավարարվածության մակարդակը հարցումների միջոցով բացահայտող մշտադիտարկման մեխանիզմի ստեղծման գործընթացը:

ԵՊՀ արտաքին շահեկիցներ են նաև Կառավարությունը և ԿԳ նախարարությունը: Համալսարանում իրականացվող բարեփոխումները համահունչ են գիտության և կրթության ոլորտում պետական քաղաքականությանը, այդ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերին, կրթության զարգացման ծրագրերին: Այդ քաղաքականությանը համապատասխան՝ ԵՊՀ-ն փորձում է ապահովել կրթության ավելի բարձր որակ՝ համահունչ գիտելիքահենք տնտեսության և գլոբալացվող աշխարհի առաջադրած պահանջներին և միջազգային կրթական չափանիշներին: Ըստ այդմ՝ համալսարանում մեկնարկեցին և արագորեն ծավալվեցին կրթական բարեփոխումների գործընթացներ՝ բազմաթիվ ուղղություններով:

ԵՊՀ ՌԾ-ից բխում է, որ համալսարանի շահեկից է հայաստանյան հանրությունը, քանի որ համալսարանի առաքելության մաս է համարվում հանրության տնտեսական, սոցիալական, հումանիտար, մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը նպաստելը: Բացի այդ՝ համալսարանի հիմնարար արժեք է հռչակված «համալսարանի համազգային պատասխանատվությունը»: Այս առումով կարևոր քայլ էր 2008 թ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հիմնադրումը հայագիտական կենտրոնի հիման վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.3. ՄՈւՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:**

ԵՊՀ-ում գործում են մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը գնահատելու համար: ԵՊՀ ՌԾ-ի իրականացման ընթացքը գնահատելու նպատակով մշակվել է «ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը» (հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի կողմից 2010 թ.): Փաստաթղթում ներկայացված են յուրաքանչյուր ռազմավարական խնդրի իրագործման համար պլանավորված գործողությունները/միջոցառումները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատու մարմինները կամ անձինք և անհրաժեշտության դեպքում՝ պահանջվող լրացուցիչ ռեսուրսները: Այս գործիքը հնարավորություն է տալիս կառավարելու ՌԾ-ի իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում՝ կատարելու շտկումներ: Ժամանակացույց-պլանի իրականացումը յուրաքանչյուր ուստարվա ավարտին քննարկվում և գնահատվում է նախ ԵՊՀ գիտխորհրդի, ապա նաև ԵՊՀ խորհրդի կողմից: Անհրաժեշտ է, որ ԵՊՀ ամեն մի ստորաբաժանում ԵՊՀ ՌԾ-ի հիման վրա մշակի իր զարգացման ծրագիրը՝ իրավագիտության ֆակուլտետի և Իջևանի մասնաճյուղի օրինակով:

ՌԾ-ի կատարման առաջընթացի վերահսկման նպատակով երկու անգամ կազմվել և հրատարակվել է ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը (համապատասխանաբար՝ 2003-2009 թթ. և 2005-2010 թթ., շուտով կիրապարակվի նաև ԳԱՑ-երի լրակազմը՝ 2007-2012 թթ. համար): Փաստաթուղթը վերլուծական ուսումնասիրություն է, որն ընդգրկում է ԵՊՀ գործունեության բոլոր հիմնական 6 ոլորտներին վերաբերող կարևորագույն ցուցանիշների փոփոխման դինամիկան և վերլուծությունը (տե´ս Երևանի պետական համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշները, Եր., 2009 թ., 2010 թ.):

ՌԾ-ի իրականացման նպատակով յուրաքանչյուր տարի կազմվում են կարճաժամկետ օպերատիվ պլաններ, որտեղ տվյալ ուստարվա համար նախատեսված գործողությունների կատարողականը ենթարկվում է մոնիթորինգի: Օրինակ՝ 2010/2011 և 2011/2012 ուստարիների համար ՌԾ-ում նախատեսված խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների/միջոցառումների կատարողականները քննարկվել են ԵՊՀ գիտխորհրդի 2011 և 2012 թթ. տարեվերջյան նիստերում և հաստատվել ԵՊՀ խորհրդի կողմից: Ծրագրի կատարողականները հավելվածի տեսքով ներկայացված են ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններում:

ԵՊՀ ֆինանսական պլանավորումը ոչ միշտ է համարժեք համալսարանի ռազմավարական նպատակներին և խնդիրներին, որովհետև տարեկան ֆինանսական մուտքերի ծավալները լիովին կանխատեսելի չեն: Այդ պատճառով համալսարանը չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ՌԾ-ում սահմանված հիմնական նպատակների ու խնդիրների իրագործման ռեսուրսային բազա ապահովելու համար:

ԵՊՀ առաքելության և հիմնական նպատակների իրականացումը գնահատող ինքնատիպ մեխանիզմներից է նաև ԵՊՀ-ում գործող վարից վեր հաշվետվողականությունը, որի բաղադրիչներն են՝ ամբիոնների տարեկան հաշվետվությունները, ֆակուլտետների տարեկան հաշվետվությունները, ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունը (ԵՊՀ-ում հաշվետվողականության մասին տե´ս չափորոշիչ 2.4.): 1996 թ. սկսած՝ ԵՊՀ գործունեության համակողմա-

նի ներկայացումը և գնահատումը կատարվում են նաև համալսարանի՝ հրապարակվող տարեկան ընդհանուր հաշվետվության օգնությամբ, որտեղ մեկ առ մեկ ներկայացվում են ԵՊՀ բոլոր կառույցների, ֆակուլտետների և ստորաբաժանումների գործունեության արդյունքները նախորդ ուստարում: Հաշվետվության այդ մեխանիզմը Հայաստանում առաջինը գործարկել է ԵՊՀ-ն:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ն Հայաստանի առաջին դասական համալսարանն է՝ մայր բուհը, որն ունի ավելի քան 90-ամյա պատմություն: Նրա ֆակուլտետների կամ բաժինների հիման վրա ստեղծվել են հանրապետության պետական գրեթե բոլոր բուհերը: Այն համարվում է Հայաստանի բազմաթիվ գիտական ու կրթական դպրոցների, ուղղությունների հիմնադիրը: ՀՀ կրթության ու գիտության համակարգում ԵՊՀ-ի բացառիկ դերը պաշտոնապես ճանաչված է ՀՀ նախագահի հրամանագրով՝ դեռևս 1992 թվականին: ԵՊՀ-ի նման դերակատարությունը վերահաստատել է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1999 թ.):

2. ԵՊՀ-ն ունի հստակ սահմանված առաքելություն: ԵՊՀ-ում ներդրված ռազմավարական պլանավորման գործընթացը նպատակ է հետապնդում մշտադիտարկելու և երաշխավորելու առաքելության իրագործումը, ինչը կարևոր քայլ է շրջափուլային ռազմավարական կառավարման իրականացման ուղղությամբ:

3. ԵՊՀ ռազմավարությունը հաշվի է առնում իր հիմնական շահեկիցների կարիքները՝ դրանք բացահայտող մի շարք մեխանիզմների առկայության շնորհիվ, իսկ հիմնական շահեկիցները ներգրավված են ՌԾ-ի նախապատրաստման, քննարկման և հաստատման գործընթացներում: Այդ նպատակին են ուղղված նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ իրականացվող հարցումները:

4. ՌԾ-ի պատշաճ իրագործումն ապահովելու համար ներմուծված է օպերատիվ տարեկան պլանավորման գործընթաց՝ իրականացման ժամանակացույց-պլանով և կատարման առաջընթացը գնահատող ցուցանիշների կազմով, որը ԵՊՀ խորհրդին և ԵՊՀ գիտխորհրդին թույլ է տալիս վերահսկել և գնահատել գործընթացը:

5. Դեռևս 1996 թվականից սկսած՝ ԵՊՀ-ն ամեն տարի հրապարակում է նախորդ ուստարվա գործունեության ընդհանուր հաշվետվությունը:

### Բացթողումները

1. Չնայած «Կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջին՝ ԵՊՀ կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում դեռևս սահմանված չեն ՀՀ կառավարության կողմից:

2. ԵՊՀ ՌԾ-ի որոշ դրույթների իրագործման համար սահմանված հնգամյա ժամկետը հավակնոտ է թվում (օրինակ՝ «գերազանցությունը.... ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում»):

3. ԵՊՀ հիմնական շահեկիցների կարիքների բացահայտման ներքին մեխանիզմները ամբողջական չեն: Անհրաժեշտ են համալսարանի շրջանավարտների հիմնական գործատուների հետ հետադարձ կապի լրացուցիչ մեխանիզմներ, որոնք թույլ կտան համակողմանիորեն բացահայտել գործատուների կարիքները:

4. Ոչ բավարար ֆինանսավորման պատճառով ԵՊՀ-ն չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ՌԾ-ում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման ռեսուրսային հենքի ապահովման նպատակով:

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՆՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ ԵՎ ՄԻՏՎԱԾ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1. **Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

ԵՊՀ կառավարման համակարգի իրավական հիմքերը սահմանված են ՀՀ մի շարք օրենքներով՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» (որը որոշում է համալսարանի՝ որպես իրավաբանական անձի տեսակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն, այսուհետ՝ ՊՈԱԿ): ԵՊՀ կառավարման համակարգն ունի երեք մակարդակ՝ ա) պետության մասնակցությունը ԵՊՀ կառավարմանը, բ) համալսարանական մարմինների և կառույցների միջոցով կառավարում, գ) ստորաբաժանումների կառավարում:

ԵՊՀ գործունեության մեջ պետական կառավարումը հանդես է գալիս երկու հիմնական ձևով՝ լիազորությունների և մասնակցության: ԵՊՀ-ն ունի հիմնադիր և պետական կառավարման լիազոր մարմին. երկուսն էլ մասնակցում են համալսարանի կառավարմանը՝ օրենքով ամրագրված իրենց լիազորություններով: Պետական մարմինների ներկայացուցիչներն ընդգրկված են ԵՊՀ կառավարման կոլեգիալ մարմիններում (տե՛ս չափորոշիչ 1.2.):

ԵՊՀ կառավարումը համահամալսարանական մարմինների (խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտոր), ինչպես նաև կառավարման կենտրոնական կառույցների (պրոռեկտորներ, վարչություններ, բաժիններ) միջոցով իրականացվող ընթացիկ կառավարումն է (տե՛ս Հավելված 2.1.): Համահամալսարանական կառավարումը կառուցված է ինքնակառավարման և ինքնավարության, կոլեգիալ ու միանձնյա կառավարման զուգակցման սկզբունքների վրա (դրանց մասին տե՛ս չափորոշիչ 2.5.):

ԵՊՀ խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի, պրոռեկտորների, ռեկտորատի իրավասության, ձևավորման կարգերը, աշխատակարգերը սահմանված են վերը թվարկված օրենքներով, ԵՊՀ կանոնադրությամբ (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 17-20-րդ, 27-28-րդ, 35-39-րդ կետերը), «Երևանի պետական համալսարանի խորհրդի աշխատակարգով» (ընդունել է ԵՊՀ խորհուրդը 2006 թ.), ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգով (նոր խմբագրությամբ ընդունել է ԵՊՀ գիտական խորհուրդը 2011 թ.), «Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգով» (ընդունել է ԵՊՀ խորհուրդը 2006 թ.), «ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգով» (գործողը ընդունել է ԵՊՀ գիտական խորհուրդը 2011 թ.): ԵՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները կառավարման մարմինների գլխավորությամբ կազմում են միասնական համակարգ՝ կառուցված կենտրոնացման և մասնակցականության սկզբունքներով:

Ֆակուլտետների կառավարման կարգը սահմանված է օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությամբ (նոր խմբագրությամբ հաստատել է ԵՊՀ գիտական խորհուրդը 2012 թ., դրա հիման վրա ամեն ֆակուլտետ ընդունել է իր կանոնադրությունը), «ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգով» (նոր խմբագրությամբ հաստատել է ԵՊՀ գիտական խորհուրդը 2012 թ.)։ Ֆակուլտետների ստորաբաժանումները՝ ամբիոններ, կենտրոններ, լաբորատորիաներ, ձևավորվում, գործում և կառավարվում են ԵՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետների կանոնադրությանը համապատասխան։ Գործում է նաև «ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը» (նոր խմբագրությամբ ընդունել է ԵՊՀ գիտական խորհուրդը 2012 թ.)։

ԵՊՀ-ն ունի մասնաճյուղ Իջևան քաղաքում, որի կառավարման հիմքը ԵՊՀ կանոնադրությունն է (տե՛ս 74-82-րդ կետերը)։ Մասնաճյուղի կառավարման մարմիններն են գիտական խորհուրդը և տնօրենը։ Գիտահետազոտական ինստիտուտները և կենտրոնները գործում են ԵՊՀ և իրենց կանոնադրություններին համապատասխան (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 83-88-րդ կետերը)։

ԵՊՀ-ն ունի կառավարման համակարգի բարեփոխումների ծրագիր։ ԵՊՀ ՌԾ ընթացիկ գերակայություններից է համարվում համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացումը՝ արդյունավետ կառավարումը։ Այս նպատակով ՌԾ-ն ծրագրավորել է 5 ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների համակարգ (տե՛ս ՌԾ, խնդիր VIII. ե), էջ 39-40)։

ԵՊՀ իրավական ակտերը պատշաճ ուշադրություն են դարձրել մարդկային ռեսուրսների կառավարմանը։ ՌԾ-ն հիմնարար արժեք է համարում համալսարանի գիտամանկավարժական կազմը։ ԵՊՀ կանոնադրությունն ունի «ԵՊՀ-ի աշխատողները և սովորողները» բաժինը (102-117-րդ կետեր)։ Աշխատողների ընդհանուր կարգավիճակի կարևոր ակտերից է ԵՊՀ-ի և արհմիության կնքած կոլեկտիվ պայմանագիրը (2010 թ.), ինչպես նաև «ԵՊՀ պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները» (հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2007 թ.)։ ԵՊՀ գիտամանկավարժական տարակարգի աշխատողների թափուր պաշտոնների զբաղեցումը կատարվում է «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգով» (հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2012 թ.)։

Համալսարանի գործունեության գույքային-ֆինանսական հիմքերն ամրագրված են օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրության 118-129-րդ կետերով։ ԵՊՀ-ն ունի սեփականության իրավունքով, ինչպես նաև օգտագործման իրավունքով իրեն ամրացված գույք։ ԵՊՀ-ն ունի իր կողմից հիմնադրված ՍՊԸ[2]-ներ։ ԵՊՀ ֆինանսական քաղաքականությունն իրականացվում է օրենսդրությամբ և ԵՊՀ ակտերով՝ «ԵՊՀ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականություն» (հաստատել է ռեկտորը 2007 թ.), «ԵՊՀ ՊՈԱԿ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվ» (հաստատել է ԵՊՀ խորհուրդը), «ԵՊՀ ՊՈԱԿ-ի եկամուտների և ծախսերի (բյուջե) տարեկան կատարողական» (հաստատել է ԵՊՀ խորհուրդը)։ Ֆինանսական աուդիտի նշանակումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով («ԵՊՀ ՊՈԱԿ-ի կողմից աուդիտորական, խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով իրականացվող մրցույթներում հաղթողի որոշման կարգ», հաստատել է ԵՊՀ ռեկտորը 2010 թ.)։

---

[2] Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն։

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2. ՄՈւՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:**

ԵՊՀ ՌԾ-ն համալսարանի հիմնարար արժեքներից մեկն է համարում համալսարանականների մասնակցությունը և որոշումների կայացման հարցում կոլեգիալությունը (տե՛ս ՌԾ-ի 10-րդ էջը): Պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունն իրեն առնչվող որոշումների կայացմանն ունի իրավական երաշխիքներ: «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն ամրագրում է մասնակցության իրավունքը՝ ա) աշխատողի իրավունքը՝ ընտրելու և ընտրվելու պաշտոններում և կառավարման մարմիններում, բ) աշխատողի իրավունքը՝ մասնակցելու բուհի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը:

Դասախոսներն անդամակցում են ԵՊՀ խորհրդին (ԵՊՀ կանոնադրության 18-րդ կետ): ԵՊՀ խորհրդի անդամներից 18-ը նրանց ներկայացուցիչներն են. առաջադրվում են կառուցվածքային ստորաբաժանումներից և ընտրվում են ԵՊՀ ԳԽ-ի կողմից: ԵՊՀ բոլոր հիմնական կառուցվածքային ստորաբաժանումները՝ ի դեմս իրենց ղեկավարների, ներկայացված են ԵՊՀ գիտական խորհրդում: Գիտական խորհրդի ընտրովի անդամներն ընտրվում են ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում՝ հատկացված տեղերի քանակին համապատասխան: Բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները ԵՊՀ ռեկտորատի անդամ են (տե՛ս «ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգի» 6-րդ կետը):

Պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկված է ֆակուլտետների կառավարման մարմիններում՝ ընտրովի ներկայացուցչության հիման վրա: Ֆակուլտետի խորհրդում մասնակցությունը դրսևորվում է ի պաշտոնե և ընտրովի ձևերով: Ի պաշտոնե անդամները ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներն են, որոնք պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներն են: Ընտրովի անդամներն առաջադրվում են ֆակուլտետների կառուցվածքային ստորաբաժանումների, հիմնականում՝ ամբիոնների կողմից:

Ֆակուլտետների գիտական խորհուրդների կազմավորման հիմքում դրված են դասախոսների մասնակցության ի պաշտոնե և ներկայացուցչական ձևերը: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալները, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը: Ֆակուլտետի գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրվում են կառուցվածքային ստորաբաժանումներում՝ ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Նման կարգը ապահովում է լայն ներկայացուցչություն: Դասախոսները մասնակցում են ֆակուլտետի դեկանատի և մեթոդական խորհրդի նիստերին (տե՛ս ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 56-58-րդ կետերը):

Ամբիոններում մասնակցության սկզբունքը համատարած է. ամբիոնի ողջ պրոֆեսորադասախոսական կազմը ամբիոնի անդամ է և ամբիոնի վարիչի գլխավորությամբ մասնակցում է ամբիոնի կրթական, գիտական հարցերի քննարկմանը (տե՛ս ԵՊՀ ֆակուլտետների օրինակելի կանոնադրության 61-րդ, 68-րդ, 72-րդ կետերը): Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներ:

ԵՊՀ կառավարմանը դասախոսների լայն մասնակցության հիմքում դրված է ժամկետայնության սկզբունքը, համաձայն որի՝ 5 տարին մեկ անգամ տեղի են ունենում համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինների վերընտրություններ, որոնց արդյունքում այդ մարմինների կազմը նորացվում է (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 37-րդ, 60-րդ կետերը):

Մասնակցության յուրօրինակ ձև է ԵՊՀ խորհրդում բաց մրցույթի կարգով համալսարանի ռեկտորի ընտրությունը: Ընտրովի են նաև ֆակուլտետների դեկանները: Նրանք ընտրվում են ֆակուլտետի խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով:

«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածն ամրագրում է բուհի կառավարմանը ուսանողների մասնակցության իրավունքը: Այդ մասնակցության ձևերը երկուսն են՝ ա) մասնակցելու բուհերի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ օրենքով կամ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով, բ) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը:

Համալսարանում գործում է ուսանողական ինքնակառավարման կազմակերպություն՝ ուսանողական խորհուրդ (ՈւԽ, տե՛ս ԵՊՀ կանոնադրության 116-րդ կետը), որի գործող կանոնադրությունն ընդունվել է 2010 թ.: ԵՊՀ-ում գործում է ուսանողական գիտական ընկերություն (ՈւԳԸ), որի գործող կանոնադրությունն ընդունվել է 2001 թ.: Այդ կառույցները ԵՊՀ բյուջեում ունեն մասնաբաժին՝ նախատեսված ինչպես միջոցառումների, այնպես էլ գործուղումների համար:

Օրենքը սահմանում է, որ բուհի կառավարման մարմինների անդամների 25 %-ը պետք է լինեն ուսանողներ (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 108-րդ կետի 3-5-րդ ենթակետերը): ԵՊՀ խորհրդի, ԵՊՀ գիտական խորհրդի 25 %-ը կազմում են ուսանողները (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 18-րդ կետի 4-5-րդ ենթակետերը, 32-րդ կետը, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 6-րդ կետը, ինչպես նաև ԵՊՀ ՈւԽ կանոնադրության 5.17. կետը): ԵՊՀ ռեկտորատի ի պաշտոնե անդամ է ԵՊՀ ՈւԽ նախագահը (տե՛ս ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգի 6-րդ կետը): ԵՊՀ կառավարմանը ուսանողների մասնակցությունը ձևական բնույթ չի կրում: Նրանք համալսարանի կառավարման կոլեգիալ մարմինների միջոցով մասնակցում են բոլոր տեսակի ընտրություններին, օրինակ՝ ռեկտորի, դեկանների, ամբիոնների վարիչների և այլն: Նրանց նախաձեռնությամբ և առաջարկով քննարկվել են իրենց կարիքներին վերաբերող մի շարք հարցեր, ընդունվել համապատասխան որոշումներ:

Ուսանողները մասնակցում են համալսարանի ստորաբաժանումների կառավարմանը: Ուսանողները 25 % մասնակցություն ունեն ֆակուլտետի խորհրդում, ԵՊՀ մասնաճյուղի գիտական խորհրդում (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 51-րդ և 78-րդ կետերը, ինչպես նաև ԵՊՀ ֆակուլտետների օրինակելի կանոնադրության 20-րդ կետը): Ուսանողները՝ ի դեմս ֆակուլտետի ՈւԽ-ի և ՈւԳԸ-ի մեկական ներկայացուցիչների, մասնակցում են ֆակուլտետի գիտական խորհրդին (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 55-րդ կետը, ինչպես նաև ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 37-րդ կետը): Նրանք մասնակցում են ֆակուլտետի դեկանատի նիստերին. ՈւԽ նախագահը համարվում է ֆակուլտետի դեկանատի ի պաշտոնե անդամ (տե՛ս ԵՊՀ ֆակուլտետների օրինակելի կանոնադրության 56-րդ կետը): Ասպիրանտները մասնակցում են ԵՊՀ ամբիոնների գիտամանկավարժական կազմի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Ուսանողներն իրավունք ունեն մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին ու գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը: Այդ իրավունքն ամրագրված է «Կրթության մասին» ՀՀ օրենքով և ԵՊՀ կանոնադրությամբ:

Համալսարանական կյանքին ուսանողների մասնակցությունն ակտիվացնելու նպատակով ղեկավարությունը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ ուսանողների և նրանց ակտիվի հետ: Համալսարանն ունի ուսանողների հետ աշխատանքի գծով պրոռեկտոր, ուսանողական բաժին, որոնք կոչված են վեր հանելու և հոգալու ուսանողների համալսարանական կարիքները, լիարժեք և լիիրավ դարձնելու նրանց մասնակցությունը, օժանդակելու նրանց ոչ ուսումնական առօրյայի կազմակերպմանը:

ԵՊՀ այս պահի հրամայականներից մեկը սովորողների՝ համալսարանական գործընթացներում մասնակցության ակտիվացումն է: Այս հրամայականից ելնելով՝ ԵՊՀ ՌԾ-ն նախատեսում է. «Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, հզորացնել համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունները» (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր VIII գ), էջ 40-41): Ռազմավարական այս խնդրի իրագործման համար ԵՊՀ ՌԾ-ն անհրաժեշտ է համարում այդ ուղղություններով բարեփոխիչ գործընթացների իրականացումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3. ՄՈւՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ**:

Պլանավորումը՝ որպես կառավարչական գործընթաց, ԵՊՀ-ում ունի յուրահատուկ համակարգ և ձևեր, որոնք պայմանավորված են ԵՊՀ-ի՝ որպես բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությամբ: Պլանավորումը նրա գործունեության մեջ դրսևորվում է 2 մակարդակով՝ ա) ռազմավարական պլանավորում, բ) ընթացիկ ուսումնական և գիտական գործունեության տարեկան պլանավորում: Այդ մակարդակներից յուրաքանչյուրն ունի կենսագործման իր մեխանիզմները: Պլանավորման առաջին մակարդակն ուղղված է համալսարանի զարգացման և բարեփոխումների ռազմավարության ամրագրմանը, իսկ երկրորդը համալսարանի ուսումնագիտական գործընթացի օպերատիվ պլանավորումն է:

Ռազմավարական երկարաժամկետ պլանավորման, իրականացման և մշտադիտարկման վերաբերյալ տե՛ս չափանիշ 1:

Օպերատիվ պլանավորումը ԵՊՀ գործունեության մեջ դրսևորվում է առաջին հերթին կրթական գործընթացի պլանավորմամբ, որի իրականացման ձևը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պլանավորումն է: Պլանավորման այս համակարգի իրավական հիմքը «Կրթության մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է, որ ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կազմակերպվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով (տե՛ս նշված օրենքի հոդված 14, 1-ին մաս): Կրթական ծրագրերի ուսումնական պլանները մշակում են ֆակուլտետները (ամբիոնները), այնուհետև դրանք հատուկ ընթացակարգով ներկայացվում են ԵՊՀ

գիտական խորհրդի հաստատմանը (տե՛ս չափորոշիչ 2.6.)։ Ուսումնական պլանների հիման վրա կատարվում է դասախոսների հաստիքների և ուսումնական բեռնվածության տարեկան պլանավորում։

Համալսարանի կառավարման գործընթացում իրականացվող կարևորագույն գործառույթներից է կանոնակարգումը ներհամալսարանական ակտերի ընդունման միջոցով։ Այս գործառույթի իրականացումը թափ առավ 2000-ական թվականների սկզբներին և շարունակվում է համալսարանական բարեփոխումներին զուգընթաց։ Այդ գործառույթի համակարգված և արդյունավետ իրականացման նպատակով գործում է ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովը։ Այն մշակում և փորձաքննության է ենթարկում ներհամալսարանական հիմնական լոկալ նորմատիվ ակտերի (կանոնադրությունների, կանոնակարգերի, ընթացակարգերի, աշխատակարգերի և այլն) նախագծերը։ Հանձնաժողովի գործունեության արդյունքում մշակվել և համալսարանի կառավարման իրավասու մարմիններին են ներկայացվել մի քանի տասնյակի հասնող ներկազմակերպչական (լոկալ) իրավական ակտեր՝ կանոնադրություններ, կանոնակարգեր, ընթացակարգեր, կարգեր և այլն, որոնք միտված են համալսարանի կառավարման հարաբերությունների բարենորոգմանը և արդյունավետության բարձրացմանը, կրթագիտական գործընթացի կառավարման իրավական հիմքերի ուժեղացմանը։ Դրանցում զգալի տեղ են զբաղեցնում ուսումնական գործընթացը կանոնակարգող ակտերը, որոնք սովորողների համար հստակ ու կանխատեսելի են դարձնում ուսումնական գործընթացը։ Օրինակ՝ ամեն կիսամյակի համար ռեկտորի հրամանով հաստատվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և ֆակուլտետների կողմից ուսումնամեթոդական վարչություն համապատասխան փաստաթղթերի ներկայացման ժամանակացույցները։ Ուսումնական կիսամյակի ժամանակացույցով հստակ սահմանվում են առկա և հեռակա ուսուցման համակարգերում բակալավրիատի և մագիստրատուրայի ստուգարքների ընդունման, քննաշրջանի անցկացման, պարտքերի մարման ժամկետները, ինչպես նաև տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտը և հաջորդ կիսամյակի պարապմունքների մեկնարկը։ Միաժամանակ, ֆակուլտետների կողմից ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման համար ըստ ամիսների սահմանվում են որոշակի ժամկետներ։ Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտվում է որպես կատարողական կարգապահության խախտում և քննարկվում ռեկտորատի նիստում։

ԵՊՀ-ում իրականացվում է նաև գիտահետազոտական գործունեության պլանավորում՝ ֆակուլտետային մակարդակով (տե՛ս չափորոշիչ 6.2)։

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4. ՄՈւՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա։**

ԵՊՀ կառավարման համակարգում որոշումների կայացումը կատարվում է կանխատեսման, պլանավորման, կազմակերպման, ընդհանուր ղեկավարության, վերահսկողության ու հաշվետվողականության կառավարչական գործառույթների իրականացմամբ, ինչը հնարավորություն է տալիս հավաքելու հավաստի տվյալներ և հաշվի առնելու ազդող գործոնները, ո-

րոնք հիմնավորում են կայացված որոշումները և, որպես արդյունք, հանգեցնում են դրանց կատարման արդյունավետությանը:

Համալսարանի կառավարման գործընթացում կանխատեսումը ենթադրում է համալսարանի գործունեության և զարգացման գործընթացում փոփոխությունների կանխագուշակում՝ օգտագործելով արտաքին և ներքին գործոնների վերաբերյալ հավաքված հավաստի տվյալները: Հատկապես վերջին տասնամյակներին կանխատեսումը կարևոր դեր է խաղացել համալսարանի կրթագիտական գործունեության կայունացման և զարգացման ապահովման մեջ, ինչը համալսարանն իրականացրել է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության կատարման միջոցով: Սա էլ իր հերթին ապահովել է կրթագիտական գործընթացին և համալսարանի գործունեության այլ ոլորտներին վերաբերող որոշումների կայացումը հավաստի տվյալների հիման վրա:

ԵՊՀ կառավարման համակարգը հիմնված է պլանավորման վրա (տե՛ս չափորոշիչ 2.3.): Ուսումնական գործընթացի պլանավորումը հիմնված է հայտնի տվյալների վրա, ուստի անորոշության գործոններն այստեղ քիչ են: ԵՊՀ ուսանողների ակադեմիական տվյալները մուտքագրելու, առաջադիմությունը հաշվարկելու, ուսանողների վարձավճարները զեղչելու, նպաստներ հատկացնելու, ուսանողների փոխատեղումները կատարելու, ուսումնական բեռնվածությունները հաշվարկելու գործընթացները առավել հստակ և վերահսկելի դարձնելու նպատակով ստեղծվեց և ներդրվեց էլեկտրոնային ավտոմատացված կառավարման տեղեկատվական SuperVision համակարգը: Այն գործուն և արդյունավետ համակարգ է, որը թույլ է տալիս ամբողջ ուսումնական գործընթացը դարձնել ավելի վերահսկելի և թափանցիկ:

ԵՊՀ-ում պլանավորման երկրորդ մակարդակը ռազմավարական պլանավորումն է, որն ունի անորոշության տարրեր, քանի որ համալսարանի գործունեության և կառավարման վրա ազդում են բազմաթիվ արտաքին գործոններ: Դրանք երբեմն անորոշ են իրենց դրսևորումներում և վերաբերում են հասարակության տնտեսական, սոցիալական (դեմոգրաֆիական), պետական-քաղաքական, իրավական, մրցակցային և այլ ոլորտներին: Ուստի համալսարանի կառավարման գործընթացում կարևորվում են նրա վրա ազդող հիմնական գործոնների վերհանումը, դրանց վերլուծությունը, ապագա հնարավոր սցենարի մշակումը և համալսարանի գործունեության վրա դրանց ներգործության կանխատեսումը: Դրա լավագույն ապացույցը ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմն է, որը համալսարանի վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմ է (տե՛ս չափորոշիչ 1.3.): ԳԱՑ-երի առկայությունն ապահովում է ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունն ու ԵՊՀ-ի կապը իր արտաքին և ներքին միջավայրերի կարևորագույն տարրերի հետ:

ԳԱՑ-ում հավաքագրվող և վերլուծվող տվյալները վերաբերում են ԵՊՀ գործունեության 6 կարևորագույն ոլորտներին, որոնք են՝ ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և նորամուծություն, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն: ԳԱՑ-ում տեսանելի են թվարկված 6 ոլորտների վրա ազդող գործոնները, և համալսարանը, հիմնվելով այս հավաստի փաստերի վրա, կարողանում է ճիշտ որոշումներ կայացնել տվյալ ոլորտներում իր ռազմավարությունը մշակելիս:

Հատկապես վերջին տասնամյակում կանխատեսումը կարևոր դեր է խաղացել համալսարանի կրթագիտական գործունեության պլանավորման մեջ: Օրինակ՝ դպրոցական կրթությունը 12 տարի դարձնելու պատճառով 2011 թ. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական դպրոցները շրջանավարտներ չտվեցին, հետևաբար 2011/2012 ուսումնական տարում համալսարանն ունեցավ շատ քիչ թվով դիմորդներ: Այս պարագայում համալսարանի նախապես պլանավորած գործողությունների շնորհիվ տեղի չունեցավ աշխատակազմի կրճատում կամ աշխատավարձի նվազեցում: Համալսարանը, հետազոտելով դեմոգրաֆիկ խնդիրները, բացահայտելով դպրոցական շրջանավարտների թվի կրճատման միտումը, կարողացավ մշակել համապատասխան կանխիչ միջոցառումներ, օրինակ՝ հեռակա կրթության զարգացումը: Դիմորդների թվի աճին նպաստեցին նաև մինչհամալսարանական կրթության վարչության ստեղծումը և ակտիվ գործունեությունը:

Որոշումների կայացման համար տվյալների հավաքագրման արդյունավետ միջոց են նաև վերահսկողությունը և դրա տարրերից մեկը՝ հաշվետվողականությունը: Համալսարանում վերահսկողությունը դրսևորվում է կառավարման մարմինների գործառույթների իրականացման միջոցով: Կիրառվում են ընտրովի ստուգումներ և աուդիտներ՝ համապատասխան կառուցվածքային օղակների նկատմամբ: ԵՊՀ գործունեության մեջ վերահսկողությունն իրականացվում է նաև ուղղահայաց գծով՝ վերադասի կողմից ստորադասի գործունեության գնահատում և հիմնավորված որոշումների ընդունում:

Վարից վեր հաշվետվողականության համակարգը նույնպես ծառայում է անհրաժեշտ տվյալների հավաքագրմանը՝ հիմնավորված որոշումներ ընդունելու համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):**

Հայաստանի անկախացումից ի վեր ԵՊՀ-ն անընդհատ փոփոխել և վերկառուցել է համալսարանական կառավարման համակարգը՝ այն համապատասխանեցնելով ընդհանուր հասարակական և պետական բարեփոխումներին ու դրանց ծրագրերին:

Դեռևս 1996 թ. ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված ԵՊՀ օրինադրությամբ համալսարանում ներդրվեց նրա կառավարման բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ համալսարանի խորհուրդը, որի անդամների ընդհանուր թվաքանակը չէր կարող գերազանցել 250-ը: Այն ներկայացնում էր համալսարանի բոլոր աշխատողներին և ուսանողներին: Համալսարանի խորհրդի կազմի մեջ մտնում էին ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, մասնաճյուղի, գիտահետազոտական կենտրոնների տնօրենները, ֆակուլտետների դեկանները, համահամալսարանական ամբիոնների վարիչները, գրադարանի տնօրենը, «Երևանի համալսարան» բազմատպաքանակ թերթի խմբագիրը, գլխավոր հաշվապահը, արհմիութենական կազմակերպության, ուսանողական խորհրդի և շրջանավարտների միության նախագահները, ինչպես նաև ռեկտորի առաջարկությամբ համալսարանի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարները՝ ի պաշտոնե: Համալսարանի խորհրդի մյուս անդամներն ընտրվում էին ռեկտորի հաստատած կանոնակարգով: Ընտրվող անդամների թվի

ոչ պակաս, քան 70 %-ը պետք է կազմեին դասախոսները և գիտաշխատողները, 15 %-ը՝ սովորողները, մնացած 15 %-ը՝ վարչատնտեսական աշխատողները: Ի թիվս այլ գործընթացների՝ համալսարանի խորհուրդը սահմանված կարգով քննարկում էր ԵՊՀ տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը:

ԵՊՀ կառավարման ներկա համակարգի հիմքերը դրվել են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների ընդունմամբ, որոնց համապատասխան՝ ԵՊՀ-ն վերակառուցվեց որպես պետական ոչ առևտրային իրավաբանական անձ: Այդ պահից համալսարանի ներքին կառավարման համակարգում կատարվել են էական բարեփոխումներ, ինչն արտացոլվեց ԵՊՀ ներկայումս գործող կանոնադրության մեջ (հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից 2011 թ.): Կանոնադրությունը հստակեցնում է համալսարանի կառուցվածքը, կառավարման մարմինների կազմավորման և իրավասության հարցերը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը:

Համալսարանական կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ԵՊՀ խորհրդի և գիտական խորհրդի, ռեկտորի գործառույթների իրականացմամբ (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 3-րդ բաժինը): Այդ մարմիններից յուրաքանչյուրն ունի կանոնադրությամբ և իրենց աշխատակարգերով ու կանոնակարգերով սահմանված իրավասություն համալսարանի կառավարման գործում (տե՛ս չափորոշիչ 2.1.):

ԵՊՀ կառավարումը համալսարանի առանձին ստորաբաժանումների մակարդակում դրսևորվում է որպես իրարահաջորդ գործընթացների ամբողջություն՝ ա) հիմնախնդիրների վերհանում, բ) բարելավող միջոցառումների մշակում, գ) իրականացման համար որոշման ընդունում, դ) որոշման կատարում, ե) կատարման նկատմամբ վերահսկողություն և գնահատում: Նշված գործընթացների իրականացման համար ընդունվել են կառավարման մարմինների գործառույթները և աշխատակարգերը կարգավորող բազմաթիվ կանոնակարգեր, ընթացակարգեր, այլ իրավական ակտեր: Ներքին իրավական ակտերի իրագործումն ընթանում է որակի կառավարման պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (PDCA) շրջափուլով:

ԵՊՀ գործունեության մեջ կարևոր դեր են խաղում կառավարման այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են վերահսկողությունը և դրա տարրերից մեկը՝ հաշվետվողականությունը (տե՛ս չափորոշիչ 2.4.): ԵՊՀ կառավարումը, համալսարանական քաղաքականությունն ու ընթացակարգերը իրականացվում են կառավարման ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնք կոչված են ապահովելու առավելագույն արդյունավետություն: Այդ սկզբունքներն են՝

1) Կառավարման մարմինների գործառույթների ու լիազորությունների տարանջատումը: Համալսարանը կրթական օրենսդրության բարեփոխումներին զուգընթաց հնարավորինս հստակեցրել է կառավարման յուրաքանչյուր մարմնի և պաշտոնատար անձանց իրավասությունները (տնօրինմանը ենթակա հարցերի շրջանակը), դրանց փոխհարաբերությունները (տե՛ս չափորոշիչ 2.1.):

2) ԵՊՀ կառավարման համակարգում կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցումը: Կոլեգիալությունը ստեղծում է ներքին շահեկիցների լայն մասնակցության հնարավորություն և պայմաններ բազմակողմանի քննարկումների համար, որոնք նախադրյալ են հիմնավորված և արդյունավետ որոշումների կայացման համար: Միանձնյա կառավարումը (ռեկտոր, դեկաններ, մասնաճյուղի տնօրեն և այլն) հնարավորություն է ստեղծում արագ և օպերատիվ արձագանքման ու որոշումներ ընդունելու համար: Սակայն որպեսզի միանձնյա կառավարումը չբերի միակողմանիության, ԵՊՀ կառավարման համակարգում գործում է կոլեգիալ մարմինների գերակայության սկզբունքը: Աշխատակարգերի, կանոնակարգերի և ընթացակարգերի հաստատումը իրականացվում է գիտական խորհրդի կողմից: Միաժամանակ, միանձնյա կառավարման մարմինները ընտրովի են, ժամկետային, հաշվետու և պատասխանատու են կոլեգիալ մարմինների առջև:

3) ԵՊՀ կառավարումն ընթանում է ինքնավարության և ինքնակառավարման սկզբունքներով: Ինքնավարությունը դրսևորվում է սահմանված ոլորտներում և կարգով (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 10-րդ կետը): ԵՊՀ ինքնակառավարումը բացարձակ չէ, այլ զուգակցվում է հիմնադրի, լիազոր մարմնի գործառույթների իրականացմամբ (տե՛ս չափորոշիչ 2.1.):

4) Համալսարանական կառավարումը հիմնված է նաև կենտրոնացման և ապակենտրոնացման սկզբունքների զուգակցման վրա: Համալսարանը՝ որպես կազմակերպություն, ըստ իր կանոնադրության, կազմում է միասնական համակարգ, որում վերադաս մարմինների ու պաշտոնատար անձանց ակտերը պարտադիր են ստորադասների համար: Միաժամանակ, կառուցվածքային օղակներն ունեն ինքնուրույնություն իրենց կանոնադրություններով սահմանված շրջանակներում: Ներկայումս այդ ինքնուրույնությունը լրացվել է նաև ֆինանսական երաշխիքներով: ԵՊՀ ֆակուլտետները համալսարանի բյուջեից ստանում են ինքնուրույն տնօրինման ենթակա գումարային հատկացումներ:

5) ԵՊՀ-ում գործում են կառավարման որակի ապահովման մեխանիզմներ: Այդպիսիք են վերադասների վերահսկողությունը ստորադասների նկատմամբ, հաշվետվությունների համակարգը, ուսանողական հարցումները, որոնց օգնությամբ գնահատվում է նաև կառուցվածքային ստորաբաժանումների վարչական մարմինների աշխատանքը: Որակի ապահովման մեխանիզմներ են նաև հիմնադրի և պետական լիազորված մարմնի իրականացրած վերահսկողական գործառույթները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.6. ՄՈւՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանզմներ:**

ԵՊՀ կրթական ծրագրերի արդյունավետության և որակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կիրառման մեխանիզմները մանրամասն ներկայացված են 3.5. չափորոշչում (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»): Մնացած գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների վերաբերյալ տե՛ս չափորոշիչ 1.3:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.7. ՄՈւՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:**

ԵՊՀ կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման քաղաքականությունը կոչված է ապահովելու ծրագրերի թափանցիկությունը և սովորողների տեղեկացվածությունը: Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման ԵՊՀ քաղաքականությունը կառուցված է հետևյալ սկզբունքների վրա. ա) յուրաքանչյուր անձ կարող է ամբողջական տեղեկատվություն ստանալ ցանկացած ծրագրի բովանդակության վերաբերյալ, բ) յուրաքանչյուր ուսանող և դասախոս կարող է մասնակցել կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ քննարկումներին:

ԵՊՀ-ում կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման կիրառվող ընթացակարգերը երկուսն են՝

ա) մասնագիտական կողմնորոշման նպատակով կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում՝ 2007 թ-ից ի վեր՝ դիմորդների ամենամյա ուղեցույցների, ԵՊՀ-ի և ֆակուլտետների վերաբերյալ տեսասկավառակների, ինչպես նաև ԵՊՀ պաշտոնական կայքի միջոցով: Կայքում կա նաև  հարց/պատասխան էջը,

բ) ուսումնառության կազմակերպման նպատակով կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ուսանողներին՝ 2007 թ-ից սկսած՝ հրատարակվող և տեսասկավառակների տեսքով ամենամյա տեղեկագրքեր, ուսումնառության ուղեցույցներ, դասընթացների տեղեկագրքեր և այլն:

Կրթական ծրագրերի մասին հրապարակումների գնահատման համար ԵՊՀ-ում կիրառվում են մի շարք անուղղակի  ընթացակարգեր և մեխանիզմներ, որոնցից են.

ա) հանրային կարծիքի ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն են տալիս վեր հանելու դասախոսների, սովորողների, գործատուների և այլ շահեկիցների վերաբերմունքը կրթական ծրագրերի վերաբերյալ,

բ) ԵՊՀ և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների ու դասախոսների՝ ուսանողության հետ հանդիպումների ընթացքում ծավալվող քննարկումները,

գ) ուսանողների շրջանում անցկացվող անանուն հարցումները, որոնք անդրադառնում են նաև կրթական ծրագրերի որակական ասպեկտներին,

դ) ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումը:

Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության (հրապարակումների) տրամադրման ձևերի մասին ավելի մանրամասն  տե՛ս 4.1., 8.3. և 10.6. չափորոշիչները:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. Հայաստանի անկախացումից հետո ինքնակառավարման համակարգին անցած ԵՊՀ-ում կառավարման համակարգը հստակ կանոնակարգված է և ապահովում է կառավարման սկզբունքներին համապատասխան որոշումների կայացումը:

2. ԵՊՀ կառավարման համակարգն ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ՝ իր առաքելությամբ սահմանված խնդիրները լուծելու համար:

3. ԵՊՀ ուսանողները լայնորեն ընդգրկված են կառավարման մարմիններում՝ համալսարանի և առանձին ստորաբաժանումների մակարդակով:

4. Համալսարանն իրականացնում է երկու մակարդակի պլանավորում՝ երկարաժամկետ հնգամյա ռազմավարական պլանավորում՝ որպես իր զարգացման բարեփոխումների ծրագիր, և կարճաժամկետ տարեկան օպերատիվ պլանավորում՝ արդյունավետ ուսումնագիտական գործունեություն ապահովելու համար:

5. ԵՊՀ-ն կանոնավոր կերպով իրականացնում է իր ներքին և արտաքին միջավայրերի կարևորագույն տարրերի վերլուծություն և տվյալների հավաքագրում՝ մի շարք կարևորագույն ոլորտներում հիմնավորված որոշումներ ընդունելու համար (ընդունելություն, ուսումնական գործընթաց, ֆինանսական պլանավորում և այլն):

### Բացթողումները

1. ԵՊՀ կառավարման համակարգում նախատեսված է ուսանողների լայն մասնակցություն իրենց առնչվող որոշումների կայացմանը: Այստեղ հիմնախնդիր է ուսանողների՝ այդ մարմիններում աշխատելու փորձի և գիտելիքների պակասը: Ուստի, նախատեսված է 2013 թ. ընթացքում կազմակերպել համապատասխան վերապատրաստումներ: Միաժամանակ, ուսանողների ակտիվությունը խթանելու համար ԵՊՀ ՌԾ-ն նախատեսում է զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, հզորացնել համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունները (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր VIII զ), էջ 40-41):

2. Որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում (PDCA) դասական շրջափուլային գործընթացը դեռևս ոչ բոլոր գործընթացներում է լիարժեք իրականացվում: Թույլ են գործում հատկապես գնահատման և բարելավման փուլերը: Պատճառն այն է, որ բուհական կառավարման համակարգը Հայաստանում անընդհատ փոփոխություններ է կրում և կայացման փուլում է: Այդ բացը վերացնելու համար ստեղծվել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, որը հետևում է գործընթացի արդյունքների գնահատմանը և նպաստում է բարելավման միջոցառումների ներդրմանը:

3. ԵՊՀ կոլեգիալ կառավարման մարմիններում ցածր է դասախոսների ընդգրկվածությունը. հիմնականում ներկայացված են դեկանները: Ցածր է նաև գործատուների՝ իբրև արտաքին շահեկիցների ներգրավվածության աստիճանը:

## ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### ՄԿԾ-ՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ԵՎ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.1. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:**

ԵՊՀ-ն, որպես բազմապրոֆիլ դասական համալսարան, առաջարկում է կրթական ծրագրերի լայն ցանկ կրթական բոլոր երեք մակարդակներում (բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում), ինչը համահունչ է համալսարանի առաքելությամբ սահմանված գործունեության հիմնական ուղղություններին: Այն ընդգրկում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ հայագիտությունը, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունները և տարբեր ուղղություններով հիմնարար հետազոտությունների կատարումը: Համալսարանի 19 ֆակուլտետներում և Իջևանի մասնաճյուղում իրականացվում է մոտ 260 կրթական ծրագիր, որոնցից 60-ը՝ բակալավրի, 130-ը՝ մագիստրոսի, 70-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում (տե՛ս Հավելված 3.1): Ինչպես երևում է հավելված 3.1-ից մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերը գիտակրթական ծրագրեր են, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում ընդգրկվելու համալսարանում իրականացվող հետազոտություններում: Այս հանգամանքը նույնպես համահունչ է համալսարանի՝ որպես գիտահետազոտական հաստատության առաքելությանը: Հիմնադրման օրվանից համալսարանում զարկ է տրվել բնական և հումանիտար գիտությունների, ինչպես նաև հայագիտության զարգացմանը, որոնք մինչ օրս համարվում են գերակա ուղղություններ և առավել զարգացած են, իսկ սոցիալական և տնտեսական ուղղությունները հարաբերականորեն երիտասարդ են, սակայն արդեն իսկ ունեն իրենց ուրույն և պահանջված տեղը համալսարանական կրթության և հետազոտության համակարգում: Ընդ որում, ԵՊՀ-ն մի շարք ֆունդամենտալ ուղղություններով մասնագետների պատրաստմամբ միակն ու առաջատարն է ՀՀ-ում:

1995/1996 ուստարում ԵՊՀ-ն անցում կատարեց 5-ամյա կրթությամբ միաստիճան համակարգից բակալավրի և մագիստրոսի որակավորումներով երկաստիճան կրթական համակարգին: Հիմնական խնդիրը միաստիճան հնգամյա կրթական ծրագրից դեպի աշխատաշուկա ինքնուրույն ելքերով և փոխկապակցված բովանդակությամբ բակալավրի և մագիստրոսի ծրագրեր սինթեզելն էր: Սակայն այդ էտապում ԵՊՀ-ում դեռևս չկար ծրագրերի մշակման համապատասխան փորձ և շուկայի կարիքներին նրանց համապատասխանությունը գնահատող որևէ պաշտոնական ընթացակարգ, ինչը կուղղորդեր պատշաճ ծրագրերի մշակման գործընթացը: Այդ փուլում որակավորումների կառուցվածքային փոփոխությունները չուղեկցվեցին անհրաժեշտ բովանդակային փոփոխություններով, հստակ ձևակերպված չէին բակալավրի և մագիստրոսի որակավորումների ելքային բնութագրիչները և աշխատաշուկայի պահանջներին նրանց համապատասխանությունը:

Այս տարիների ընթացքում ծրագրերի իրականացման արդյունքները վերլուծելու և թե-րությունները շտկելու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամաններով (2000 և 2001 թթ.) ստեղծվե-ցին համապատասխան հանձնաժողովներ, որոնք, համագործակցելով համալսարանի ֆա-կուլտետների և այլ ստորաբաժանումների հետ, ուսումնասիրեցին գործող կրթական համա-կարգը և առաջարկներ ներկայացրեցին ԳԽ-ին՝ ուսումնական գործընթացը բակալավրիա-տում և մագիստրատուրայում բարելավելու վերաբերյալ: Ներքին գնահատման արդյունքում վերանայվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի կառուց-վածքը, բովանդակությունը և իրականացման գործընթացները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչը» (2001 թ.) և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված չափորոշիչների ձևաչափը (2003 թ.)՝ 2003/04 թթ-ին ԵՊՀ-ն վերամշակեց այդ ձևաչափը, որի արդյունքում համալսարանում բա-կալավրի և մագիստրոսի մի քանի տասնյակ մասնագիտությունների համար մշակվեցին համապատասխան չափորոշիչներ:

2006 թ-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց «Երևանի պետական համալսարա-նում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը», որը նախատեսում էր աստի-ճանական անցում կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպմանը նախ մագիստ-րոսի (2007-ից), ապա բակալավրի (2008-ից)՝ կրթական ծրագրերում:

Մագիստրատուրայում և բակալավրիատում ուսուցումը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով մշակվեցին և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից (2007թ.) հաս-տատվեցին ԵՊՀ-ում կրեդիտային համակարգով մագիստրոսի և բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը մեթոդական փաստաթղթերը: ԵՊՀ ծրագրերը վերառակուցվեցին՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը և վերջիններիս ար-տահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն արտահայտող ECTS կրեդիտ-ներով: Մագիստրատուրայում բոլոր մասնագիտությունների գծով կրեդիտային համակարգը ներդրվեց 2007/08, իսկ բակալավրիատում՝ 2008/09 ուստարվանից: Հեռակա ուսուցման ձևե-րում կրեդիտային համակարգը ներդրվեց 2009/10 ուստարվանից: Այդ նպատակով նախապես մշակվեցին և ԵՊՀ ԳԽ-ի կողմից հաստատվեցին հեռակա ուսուցմամբ մագիստրոսի և բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2008 թ. և 2009 թ.) մեթոդական փաստաթղթերը:

Բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ներ-դրմանը զուգընթաց աշխատանքներ էին իրականացվում նաև նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ: Արդյունքում ԵՊՀ-ում վերջին տարիներին բոլոր ուղղություններով ներդրվեցին մի շարք նոր մասնագիտություններ, որոնք համապատաս-խանում են ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին: Մասնավորապես՝ «Հեռահա-ղորդակցություն և ազդանշանների մշակում», «Սերվիս», «Հանրային կառավարում», «Լեզվա-բանություն և միջմշակութային հաղորդակցություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Սոցիալական մանկավարժություն», «Սփյուռքագիտություն» և այլն:

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը (ՌԾ) խնդիր դրեց «Իրակա-նացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի մի-ջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ»

(Խնդիր I. ա), ինչը նշանավորեց ծրագրային բարեփոխումների երրորդ փուլը 2011/12 ուստարվանից: Կրթական ծրագրերի տրամաբանական արժանահավատությունն ապահովելու նպատակով դրանց մշակման համար հիմք ընդունվեցին ՀՀ պետական կրթական չափորոշիչները, ինչպես նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները): Ուսումնական ծրագրերի պահանջվող կրթական վերջնարդյունքների կազմը սահմանելու համար մշակվեց և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվեց «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշները» (2010 թ.), որը հիմք հանդիսացավ կրթական վերջնարդյունքների հիմքով ծրագրերի վերափոխման համար: Ուղենիշները պարունակում են ԵՊՀ կրթական ծրագրերին ներկայացվող հիմնական պահանջները և դասախոսական կազմին տրամադրում գործնական խորհուրդներ դրանց իրագործման համար: Փաստաթուղթը ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերի համար սահմանում է նաև համապատասխան մասնագրի (սպեցիֆիկացիայի) պարտադիր առկայություն:

Սահմանված պահանջներին համապատասխան ԵՊՀ մի քանի ֆակուլտետներում կրթական վերջնարդյունքների հիման վրա մշակվեցին մի շարք պիլոտային ծրագրեր, որոնցից են.

- Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության օժանդակությամբ 2010 թ-ին մշակված «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը,

- TEMPUS ծրագրի շրջանակներում 2010 թ. մշակված «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական ծրագիրը,

- Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2011 թ-ին մշակված «Կենսաինֆորմատիկա» բակալավրի ծրագիրը:

Վերոնշյալ մեթոդական հենքի և արդեն մշակված պիլոտային ծրագրերի փորձի հիման վրա ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում 2011/12 ուստարում մշակվեցին կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ծրագրեր: Այդ նպատակով ֆակուլտետներում ստեղծված աշխատանքային խմբերի համար կազմակերպվեցին համապատասխան խորհրդատվություններ:

Ներկայումս ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերն ունեն սահմանված ձևաչափի մասնագրեր, որտեղ ներկայացված են ծրագրի նպատակը (պրոֆիլը), կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն, հմտություն), դասընթացի դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերը, ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև ծրագրի ուսումնական պլանի քարտեզը, որի օգնությամբ ծրագրի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք կապակցվում է իրեն ձևավորող դասընթացների կամ ուսումնական մոդուլների հետ (Հավելված 3.2): 2007/08 ուստարվանից սկսած ԵՊՀ-ն մագիստրոսի, իսկ արդեն 2008/09 ուստարվանից նաև բակալավրի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար յուրաքանչյուր տարի հրատարակում է ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, որն ապահովում է համալսարանում առկա կրթական ծրագրերի մասին մանրամասն և հասանելի տեղեկատվություն ինչպես ԵՊՀ ներկա և ապագա ուսանողների, այնպես էլ այլ շահառուների համար: 2012 թ-ից յուրաքանչյուր կրթական ծրագրի համար (60 բակալավրի և 130 մագիստրոսի) պատրաստվել է «Կրթական ծրագրերի տեղեկագիրքը», որը ներառում է կրթական ծրագրի մասնագիրը և համապատասխան մոդուլ/դասընթացների մանրամասն նկարագրիչները (դասընթացի նպատակը, կրթական վերջ-

նարդյունքներ, ուսուցման և դասավանդման մեթոդներ, գնահատման մեթոդներ և չափանիշներ):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2. ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:**

ԵՊՀ-ում նախաձեռնված բարեփոխումների շրջանակում՝ կրթական ծրագրերի և նրանց ուսումնական պլանների վերանայման ընթացքում անհրաժեշտություն առաջացավ վերագնահատելու համալսարանում տարածված ավանդական դասավանդման և ուսումնառության փորձը և ներդնելու նորարական այնպիսի մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերումը: «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված են կրթական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները ( 5-րդ կետ, էջ 13), որոնցով առաջնորդվում են աշխատանքային խմբերը և դասախոսները:

Կրթական ծրագրերի նոր մշակված մասնագրերում առանձին բաժին է հատկացված ծրագրի կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների նկարագրմանը (Հավելված 3.2, կետ 10): Օրինակ, մասնագիտական տեսական գիտելիքների ձեռքբերման համար մասնագրերում հիմնականում նշվում են դասախոսություններ, սեմինարներ, դասախոսի կողմից հանձնարարվող լրացուցիչ գրականության մշակում, իսկ գործնական մասնագիտական գիտելիքների համար՝ գործնական և լաբորատոր պարապմունքներ, տարբեր տեսակի պրակտիկաներ, խմբային նախագծերի կատարում, քննարկումներ, կուրսային աշխատանքներ, ավարտական և մագիստրոսական թեզերի պատրաստում և այլն: Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների ձևավորման համար առաջարկվում են թիմային աշխատանքներ, էսսեներ, ռեֆերատների բանավոր ներկայացումներ, ինքնուրույն նախագծերի կատարում և ներկայացում և այլ մեթոդներ:

ԵՊՀ-ում առանձին դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետությունը գնահատվում է ինչպես քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների վերլուծության օգնությամբ, այնպես էլ՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջոցով (տե՛ս չափորոշիչ 5.3): Չնայած ըստ այդ հարցումների արդյունքների ԵՊՀ ուսանողներն իրենց դասախոսների դասավանդումն ընդհանուր առմամբ բավականին բարձր են գնահատում (4 և ավելի միավոր՝ 5 բալանոց գնահատման սանդղակով), սա դեռևս չի նշանակում, որ դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները հիմնավորված և ժամանակակից են: Դրանց ճիշտ ընտրության հարցում դասախոսներին կողմնորոշելու և օժանդակելու նպատակով «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում» (2010 թ.) ներառված է դասավանդման ժամանակակից մեթոդաբանության ուսուցմանը նվիրված հատուկ դասընթաց:

Չնայած այս ոլորտում որոշակի առաջընթացի միտումներին՝ ԵՊՀ-ում դեռևս չկա կուռ համակարգ, որը թույլ կտա գնահատելու և վերլուծելու դասավանդման և ուսումնառության հիմնավորված մեթոդների ընտրության և դրանց իրականացման արդյունավետությունը:

Համալսարանը քայլեր է ձեռնարկում դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավման ուղղությամբ, որոնք արտացոլված են ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի «Բարձրորակ կրթություն» նպատակի Խնդիր I. դ) կետում: Նշված խնդրի իրականացման ուղղությամբ նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները.

- Ստեղծել դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոն՝ համալսարանի դասախոսական կազմի դասավանդման որակի էական բարելավման նպատակով:
- Զարգացնել մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, խթանել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված նախաձեռնությունները՝ հիմնելով ներհամալսարանական դրամաշնորհային ծրագրեր:
- Մշակել և իրականացնել ամենամյա գնահատման գործընթաց՝ ուսանողական հարցումների արդյունքների հետ մեկտեղ գնահատման ցուցանիշներում ներառելով դասախոսի ինքնագնահատման «պորտֆոլիոներ», ինչպես նաև դասախոսի ղեկավարի (ամբիոնի վարիչի) և մասնագետ գործընկերների կարծիքները:

Ծրագրում հռչակված ռազմավարությունները հիմք են հանդիսանալու ապագա 2-3 տարիների ընթացքում ԵՊՀ դասավանդման և ուսումնառության արդիական մեթոդների ներդրման և դրանց էական բարելավման համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3. ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:**

Երկաստիճան կրթական համակարգին անցման ընթացքում (1995/96 ուստարի) անհրաժեշտություն առաջացավ վերանայելու ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը՝ ներդրվեց ընթացիկ գրավոր քննությունների համակարգը: Գրավոր ընթացիկ քննությունների ներդրումը նոր քայլ էր գնահատման անաչառությունն ապահովելու համար: Այս տարիների ընթացքում եղան բազմաթիվ քննարկումներ, առաջարկություններ՝ կապված քննությունների անցկացման ձևերի, ինչպես նաև գնահատման անաչառության հետ, որոնք ամրագրվեցին գործող գնահատման կարգում:

Մագիստրատուրայում (2007/08), ապա բակալավրիատում՝ (2008/09) կրեդիտային համակարգի ներդրմանը զուգահեռ վերանայվեց և վերամշակվեց գնահատման գործող կարգը, քննությունների և ստուգարքների անցկացման ձևերը, ինչպես նաև ներդրվեց գնահատման 20 միավորանոց սանդղակը:

Ուսանողների գիտելիքների ստուգման ձևերը, գնահատման համակարգը և անաչառության խնդիրն այս տարիների ընթացքում բազմիցս քննարկվել է ֆակուլտետների գիտ-

խորհուրդներում և ԵՊՀ ԳԽ-ում: Գնահատման համակարգի արդյունավետության և ամբողջական պատկերը հասկանալու համար 2011 թ-ին հերթական հարցումն անցկացվեց երկու հիմնական շահեկիցների՝ ուսանողների և դասախոսների շրջանում (ուսանողների շրջանում հարցմանը մասնակցել է ավելի քան 8500 ուսանող, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում՝ 1100 դասախոս):

Հարցման արդյունքում պարզվեց, որ դասախոսները և ուսանողները հիմնականում ընդունելի են համարում գնահատման գործող կարգը, սակայն գտնում են, որ այն որոշակի լրամշակումների և փոփոխությունների կարիք ունի: Հաշվի առնելով այս հարցման, ընթացիկ քննարկումների արդյունքները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը՝ ԵՊՀ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող կարգը վերջին անգամ վերանայվեց 2011 թ-ին: Սույն կարգում սահմանված են ուսումնական մոդուլների բնույթով պայմանավորված ընթացիկ և եզրափակիչ գնահատման ձևերը (գրավոր կամ բանավոր քննություն/ստուգում), ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը և իրականացման ընթացակարգերը, գնահատման 20 միավորանոց սանդղակը, քննությունների արդյունքների բողոքարկման ընթացակարգերը, քննությունների վերահանձնման ընթացակարգը և ժամանակացույցը, ինչպես նաև ավարտական ատեստավորման կարգն ու գնահատման չափանիշները: Այն սահմանում է նաև ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, համաձայն որի՝ ուսանողի արդյունարար գնահատականը ձևավորվում է մի շարք բաղադրիչ գնահատումներից՝ կիսամյակի ընթացքում դասընթացին ուսանողի մասնակցությունից, դասընթացի ենթաբաժինների և առաջադրանքների կատարման 2 ընթացիկ ստուգումից կամ գնահատումից, դասընթացի եզրափակիչ գնահատումից:

Գնահատման չափանիշները և ձևերը ներկայացվում են ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում և ծրագրի տեղեկագրքերում զետեղված դասընթացների նկարագրիչներում: Կրթական վերջնարդյունքներին համապատասխան գնահատման ձևերը և մեթոդները տրված են նաև վերոնշյալ կրթական ծրագրերի մասնագրերում:

Չնայած հստակ գործող և լավ մշակված գնահատման համակարգին՝ այն դեռևս լիովին չի ապահովում կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատումը և հնարավորություն չի տալիս լիարժեք չափելու վերջիններիս ձեռքբերման մակարդակը ուսանողների կողմից: Ուսանողների գնահատման համակարգը ՌԱ Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ ներկայումս ԵՊՀ-ում ձեռնարկվել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բարեփոխման գործընթաց: Այն որպես ռազմավարական խնդիր ներառված է ԵՊՀ ՌԾ-ի խնդիր I. դ) 4–րդ և խնդիր I. բ) 6-րդ ենթակետերում: Այստեղ մասնավորապես շեշտադրվում է ընդհանուր, մասնագիտական և մասնագիտացման կրթական փուլերի համար առանձին ավարտական պահանջների, ինչպես նաև ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար չափանիշների և համապատասխան ընթացակարգերի գործադրումը:

Միևնույն ժամանակ, կրթական վերջնարդյունքներով պայմանավորված գնահատման չափանիշների ներդրումը նախատեսված է Համաշխարհային բանկի՝ «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» դրամաշնորհային ծրագրով (Խնդիր 3, գործողություն 3.1), որտեղ մշակված է միջոցառումների

կոնկրետ պլան և համապատասխան ժամանակացույց: Մասնավորապես, մշակվել և հրատարակվել է (2012 թ.) «Ուսանողի գնահատման ԵՊՀ ուղեցույցը», որի նպատակն է ԵՊՀ դասախոսական կազմին ծանոթացնել չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման մեթոդաբանության հետ և տալ գործնական խորհուրդներ: Այդպիսի գնահատման համակարգը հնարավորություն կտա կապակցելու և համապատասխանեցնելու գնահատման մեթոդները դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդներին, իսկ գնահատման չափանիշները՝ դասընթացի կրթական վերջնարդյունքներին:

Գնահատման նշված մեթոդաբանությունը փորձարկվել է ԵՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում, որի մի խումբ դասախոսների համար կազմակերպվել է վերապատրաստում: Բացի այդ, 3.1 չափորոշիչի վերլուծությունում արդեն հիշատակված պիլոտային կրթական ծրագրերում գնահատման մեթոդներն ընտրվել են՝ կիրառելով այդ մեթոդաբանությունը (Հավելված 3.2, 10-րդ կետ):

ԵՊՀ-ում հետևողականորեն տարբեր տեսանկյուններից ուսումնասիրվում և վերանայվում է գնահատման համակարգը և դրա արդյունավետությունը՝ հարցումներ իրականացնելով տարբեր շահեկիցների շրջանում: Այսպես, օրինակ, 2012 թ-ին համալսարանում մշակվել և փորձարկվել է նաև ուսանողների գնահատման գործող համակարգի գնահատման գործիքամիջոց, որը ներառում է ուսանողներին և դասախոսներին ուղղված հարցաշարեր և համապատասխան կարգ: Փորձնական եղանակով կենսաբանության և ժուռնալիստիկայի ֆակուլտետներում շուրջ 259 ուսանողների և 50 դասախոսների շրջանում իրականացված հարցումների վերլուծությունը հնարավորություն է տվել վերհանելու գնահատման գործող համակարգի հիմնական թերությունները: Ըստ այդմ, ուսանողները հիմնականում դրական են գնահատել գիտելիքների գնահատման գործող համակարգը ( 5 բալանոց սանդղակով՝ միջինը՝ 3,44-4,29): Մասնավորապես, բարձր են գնահատել ամփոփիչ բանավոր քննությունները և առավել ցածր են գնահատել բողոքարկման համակարգը: Դասախոսները ևս բարձր են գնահատել գործող համակարգը (5 բալանոց սանդղակով՝ միջինը 3,45-4,76), ինչպես և ուսանողները, նրանք ես գոհ են բանավոր քննություններից: Նշված թերությունները շտկելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվելու գնահատման չափանիշների մշակմանը, բողոքարկման համակարգի վերանայմանը և դասախոսների կողմից գնահատման համապատասխան մեթոդների ճիշտ ընտրությանը:

Ուսանողների գնահատման գործող համակարգի արդյունավետության և օբյեկտիվության վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է ուսանողների և շրջանավարտների հարցումների (տե՛ս չափորոշիչներ 3.5 և 5.3) հետադարձ կապի օգնությամբ:

Գնահատման նոր մեթոդաբանությունը գործադրելու, ինչպես նաև կրթական վերջնարդյունքներով պայմանավորված գնահատումը լիարժեք իրականացնելու նպատակով դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրում նախատեսված է նաև «Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ» հատուկ դասընթացը:

Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով ԵՊՀ-ում գրավոր քննություններն անցկացվում են կնքված հատուկ տետրերում, իսկ բոլոր լուծարքներն ընդունում են քննական հանձնաժողովները, իսկ ամփոփիչ ավարտական քննությունները տեսաձայնագրվում են:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.4. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:**

Խորհրդային տարիներից մինչև Բոլոնիայի գործընթացի մեկնարկը ԵՊՀ ուսումնական կրթական ծրագրերը մշակվել են՝ հիմք ընդունելով ժամանակի առաջատար բուհերի համապատասխան ծրագրերը: Այսպես, մի շարք ֆունդամենտալ բնագավառների ծրագրեր հիմնականում մշակվել են Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) բուհերի ծրագրային չափորոշիչների և պահանջների հիման վրա, իսկ արդի կիրառական ոլորտներին առնչվող կրթական ծրագրերը՝ ոչ միայն ՌԴ-ի, այլև փոխառելով՝ ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք համալսարանների փորձը:

Ներկայումս, ԵՊՀ կրթական ծրագրերը վերանայվում և մշակվում են՝ հաշվի առնելով բակալավրի և մագիստրոսի ծրագրերի կառուցման և կազմակերպման միջազգային չափանիշները և պահանջները: Այս ամենը, որպես գերակա ուղղություն, արտացոլված է ԵՊՀ ՌԾ-ում (խնդիր I.ա) 1-ին կետ, խնդիր I.գ) 9-րդ կետ, խնդիր IX. բ) 5-րդ կետ)):

Ուսանողների ներհամալսարանական շարժունությունը խթանելու նպատակով կրեդիտային հենքով կառուցված կրթական ծրագրերում ներառված է կամընտրական դասընթացների կառուցամասը: Սակայն հարկ է նշել, որ բակալավրի կրթական ծրագրերում կամընտրական դասընթացների քանակը դեռևս սահմանափակ է և կազմում է ընդամենը 10-15%, իսկ մագիստրատուրայում՝ 25%: Չնայած կամընտրական դասընթացների առկայությանը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ ԵՊՀ կրթական ծրագրերի կառուցվածքը դեռևս մնում է բավական «կոշտ», ինչը ուսանողներին չի տրամադրում բավարար ընտրության և անհատական ուսումնական ծրագրերով սովորելու հնարավորություններ: Սա սահմանափակում է ուսանողների շարժունությունը ոչ միայն համալսարանի ներսում, այլ նաև միջազգային փոխանակման ծրագրերում: Այս խնդրի լուծման նպատակով ԵՊՀ-ն պետք է ոչ միայն վերակառուցի կրթական ծրագրերը, այլև մշակի կրթական ծրագրերի իրականացման բացառապես նոր մոտեցումներ՝ հիմնված ուսանողների անհատական կրթական ծրագրերի վրա, ինչը ներկա փուլում գրեթե անհնարին է իրականացնել:

Ուսանողների ներհամալսարանական և միջբուհական շարժունությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով» (հաստատված ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N1240-Ն որոշմամբ): Համաձայն այս կարգի ուսանողը կարող է փոխել ինչպես մասնագիտությունը, այնպես էլ մասնագիտացումը, եթե առարկաների տարբերությամբ պայմանավորված լրացվող կրեդիտների թույլատրելի քանակը չի գերազանցում 20 կրեդիտը:

Ուսանողների շարժունության խթանման և ԵՊՀ կրթական գործունեության միջազգայնացման ակտիվացման նպատակով արդեն ներդրվել և օգտագործվում են շարժունության և ուսումնառության արդյունքների ճանաչման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ECTS կրեդիտային համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը: Այս նպատակով մշակվել և ընդունվել է ուսանողի միջազգային շարժունության ձևաթերթը, ինչպես նաև համալսարանների միջև երկկողմանի համաձայնագրի և ակադեմիական տեղեկանքի ձևաթերթը, որոնք կարող են կիրառվել Էրազմուս Մունդուսի կամ այլ համարժեք ծրագրի շրջանակներում:

Վեջին տարիներին ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը հնարավորինս համապատասխանեցվել են միջազգային ճանաչված ծրագրերի բովանդակային պահանջներին: Այս ուղղությամբ համալսարանում իրականացվել են տարբեր ծրագրեր միջազգային համագործակցության շրջանակներում: Արդյունքում փոխառվել է ոչ միայն կրթական ծրագրերի մշակման փորձը, այլ նաև՝ ԵՊՀ համապատասխան մասնագետները վերապատրաստվել են ճանաչված բուհերում: Նման համագործակցության արդյունքում, օրինակ, ԵՊՀ-ում, Արիզոնայի համալսարանի հետ համատեղ, ներդրվել է «Հանրային կառավարում» մասնագիտությունը և այլն:

ԵՊՀ կրթական ծրագրերը մշակելիս և հաստատելիս կարևոր նախապայման է հանդիսանում մի շարք արտաքին և ներքին ծրագրային կողմնորոշիչների, ինչպես նաև բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների կիրառումը:

Վերը նկարագրված գործընթացները նպաստել են նաև կրկնակի աստիճանաշնորհման ծրագրերի ներդրմանը: Այսպես, օրինակ, համալսարանում գործում են «Վիզուալ հաշվարկ» (ԵՊՀ և Ռոստոկի համալսարանի միջև), «Միջազգային հարաբերություններ», «Իրավագիտություն», «Տնտեսագիտություն», «Ռուս բանասիրություն» և «Ինֆորմատիկա» մագիստրոսական կրթական ծրագրերը (ԱՊՀ ցանցային համալսարանի շրջանակներում):

Ծրագրերի միջազգայնացմանը և աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցմանը նպաստում են նաև գործատուների հետ համատեղ իրականացվող միջոցառումները: Նման փորձի լավագույն օրինակ է արդեն 7-ամյա տարեգրություն ունեցող կրթական համագործակցությունը ԵՊՀ-ի և «Սինոփսիս Արմենիա» կազմակերպության միջև: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողները սովորում են «Սինոփսիսի» հետ համաձայնեցված առարկայական ծրագրերով: Ընդ որում, ծրագրերը կազմվում և իրականացվում են կրթական երեք աստիճաններում՝ բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Այս տարիներին բակալավրիատի և մագիստրատրուրայի շրջանավարտների ընդհանուր թիվը կազմել է 96: Այս համագործակցության ընթացքում պաշտպանվել է նաև երեք թեկնածուական ատենախոսություն:

ԵՊՀ կրթական ծրագրերի միջազգայնացման արդյունքում ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության քանակական ցուցանիշների վերաբերյալ տե՛ս չափանիշ 9-ը:

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.5. ՄՈւՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՊՀ-ում կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթը տարիներ շարունակ հիմնականում իրականացնում էին ֆակուլտետների գիտխորհուրդները: Գործող կրթական ծրագրերի բովանդակության և արդյունավետության գնահատման, ինչպես նաև վերանայման և կատարելագործման հարցերը մշտապես քննարկվել են ֆակուլտետների մեթոդ և գիտխորհուրդներում: Նախկինում ուսումնական ծրագրերի հաստատման գործընթացը ԵՊՀ-ում իրականացվում էր հետևյալ սկզբունքով. մասնագիտացնող ամբիոնները վերանայում էին գործող ծրագիրը կամ մշակում նորը՝ ներկայացնելով այն ֆակուլտետի մեթոդխորհրդի դիտարկմանը: Դրական կարծիքի դեպքում այն ներկայացվում էր ֆակուլտետի գիտխորհրդի

հաստատմանը, այնուհետև ուսումնական վարչություն, որը ստուգում էր ծրագրի համապատասխանությունը ԵՊՀ-ում ընդունված չափանիշներին: Վերջում այն ֆորմալ հաստատում էր ստանում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Այս ընթացքում ԵՊՀ կրթական ծրագրերը ներքին կամ արտաքին փորձաքննություն չէին անցնում, բացակայում էին դրանց արդյունավետությունը գնահատող համակարգված մեխանիզմները: Ծրագրերը կազմելիս և դասընթացների կազմն ընտրելիս առավելապես հաշվի էին առնվում առկա պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հնարավորությունները, քան թե անհրաժեշտ կրթական վերջնարդյունքներով պայմանավորված բովանդակության ապահովումը:

ԵՊՀ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներից են ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան պարբերականությամբ իրականացվող հարցումները, որոնք անց են կացվում 2009 թ-ից: Հարցումներն իրականացնելու համար օգտագործվում է համապատասխան հարցաթերթ և կանոնակարգ, որոնք մի քանի վերանայումներից հետո վերջին անգամ հաստատվել են ԵՊՀ գիտխորհրդի կողմից 2010 թ-ին: Ամեն տարի հարցումներին մասնակցում է 2000-ից ավելի շրջանավարտ, ինչը կազմում է շրջանավարտների ընդհանուր թվի կեսից ավելին: Հարցումների կանոնակարգը սահմանում է դրանց անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման պայմանները, իսկ հարցաթերթը պարունակում է համապատասխան բաժին, որտեղ շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից: Հարցումների արդյունքներն ամփոփվում, վերլուծվում և հրապարակվում են համապատասխան տարեկան զեկույցում, որը քննարկվում է ԵՊՀ գիտխորհրդի նիստում:

Առանձին դասընթացների մակարդակով կրթական ծրագրերի որակին առնչվող գնահատումներից են նաև ԵՊՀ-ում՝ 2002 թ-ից յուրաքանչյուր կիսամյակի վերջում անցկացվող ուսանողական հարցումները, որոնց ընթացքում ուսանողները գնահատում են տվյալ կիսամյակում անցած դասընթացների դասավանդման որակը և արդյունավետությունը: Ուսանողական հարցումներին ավելի մանրամասն անդրադարձ է արված 5.3 չափորոշչում:

ԵՊՀ կրթական ծրագրերի որակի և արդիականության արտաքին գնահատման համար, ԵՊՀ-ն 2012 թ-ին մշակել է ԵՊՀ շրջանավարտներով գործատուների բավարարվածության հարցումների ընթացակարգը և իրականացրել մի շարք պիլոտային հարցումներ տարբեր բնագավառներում, ինչպիսիք են՝ իրավագիտությունը, տնտեսագիտությունը, ինֆորմատիկան, ռադիոֆիզիկան, սոցիալական աշխատանքը, դեղագործությունը և ժուռնալիստիկան: Հարցումների հաշվետվությունները հասանելի են ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների ամբիոնների համար և կիրառվելու են կրթական ծագրերի վերանայման գործընթացներում:

Կրթական ծրագրերի որակի բարելավման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության բարձրացման նպատակով 2011 թ-ից ԵՊՀ-ն վերանայեց ծրագրերի հաստատման գործող կարգը՝ ներմուծելով ծրագրերի մշակման, հաստատման և որակի շարունակական բարելավման պաշտոնական ընթացակարգեր, ինչը բխում էր ԵՊՀ ՌԾ-ի I բ) խնդրի 5-րդ կետի պահանջներից:

ԵՊՀ գիտական խորհուրդը 2011 թ-ին հաստատեց «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը»՝ համաձայն որի բոլոր նոր ստեղծվող ծրագրերը պետք է անցնեն հաստատման գործընթաց: Սրանով ծրագրերի հաստատումը միանգամյա ակտից վեր է ածվում բազմափուլ ստուգման և գնահատման գործընթացի, որը բաղկացած է երեք փուլից՝ ծրագրի մշակման արտոնում, ծրագրի փաստաթղթային փաթեթի պատրաստում և ծրագրի առաջարկի ներքին փորձաքննություն, ծրագրի պաշտոնական հաստատում: Ծրագրի արտոնման փուլում ստուգվում և գնահատվում է ներկայացված ծրագրային առաջարկի համապատասխանությունը սահմանված պահանջներին, հիմնավորվում է տվյալ ուսումնական ստորաբաժանումում նրա իրագործելիությունը, տրվում է ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը, շուկայական վերլուծության միջոցով հիմնավորվում է ծրագրի հասարակական պահանջարկը և այլն: Ծրագրերի ներքին փորձաքննությունն իրականացվում է առնվազն 2 արտաքին փորձագետների ներգրավմամբ, իսկ վերջնական հաստատումը կատարվում է ԵՊՀ գիտխորհրդի կողմից՝ ՈԱ կենտրոնի արտոնումն անցնելուց և գիտական խորհրդի ՈԱ մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո:

Ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման, ինչպես նաև հասարակական պահանջարկվածության ու աշխատաշուկայի կարիքներին համապատասխանության գնահատման նպատակով՝ ԵՊՀ գիտխորհուրդը 2011 թ-ին հաստատել է «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը», համաձայն որի՝ ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերը պարտադիր կարգով պետք է ենթարկվեն մոնիթորինգի և պարբերական վերանայման: Ծրագրերի տարեկան կանոնավոր մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու կրթական չափորոշչի պահանջներին: Մոնիթորինգը նախաձեռնում և իրականացնում է ծրագիրը սպասարկող ուսումնական ստորաբաժանումը: Պարբերական վերանայումը նպատակ ունի գնահատել ծրագրի արդիականությունը և համապատասխանությունը հասարակության պահանջներին և իրականացվում է համալսարանական մակարդակում: Բակալավրի կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանված է 5÷7, իսկ մագիստրոսինը՝ 3÷5 տարի:

Վերոնշյալ գործընթացներն արդյունավետ կերպով իրագործելու համար ԵՊՀ-ն պլանավորել է կազմակերպել ֆակուլտետների վարչակազմի և որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների ուսուցում (Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի աշխատանքային պլան, խնդիր 2, գործողություններ 2.4, 2.5 և 2.6):

Քանի որ ծրագրերի հաստատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման ընթացակարգերը նոր են ներմուծվել, ուստի դրանց գործադրման արդյունավետության վերաբերյալ դեռևս ամբողջական տվյալներ չկան: Այս գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով ԵՊՀ-ում ստեղծվել են որակի ապահովման կառույցներ, ինչպիսիք են՝ Որակի ապահովման կենտրոնը և Որակի ապահովման հանձնաժողովները համալսարանական և ֆակուլտետային մակարդակներում, որոնց հիմնական նպատակն է վերը նշված որակի ապահովման գործընթացների իրականացումը:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են համալսարանի առաքելությանը և ֆունդամենտալ շատ ուղղություններով միակն են Հայաստանի Հանրապետությունում:
2. ԵՊՀ-ն ունի երկաստիճան կրթական ծրագրերի (բակալավր, մագիստրոս) իրականացման 17-ամյա փորձ և համապատասխան մեթոդաբանական հենք: Այս փորձը և երկաստիճան կրթական ծրագրերի իրականացումը թույլ տվեցին ԵՊՀ-ին վերանայելու և կատարելագործելու դրանք՝ բակալավրի և մագիստրոսի որակավորումները աստիճանաբար համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին և համաշխարհային աշխատաշուկայի պահանջներին:
3. Առկա է համապատասխան կանոնակարգային և ընթացակարգային հենքը, որը կոչված է ապահովելու ծրագրերի որակը և շարունակական բարելավումը՝ մշակման և իրականացման փուլերում:
4. Ներկայումս ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը վերակառուցվել են կրթական վերջնարդյունքների հենքով:
5. Կրթական ծրագրերը ներկա և ապագա ուսանողների, ներքին ու արտաքին շահեկիցների համար թափանցիկ և հասկանալի դարձնելու նպատակով՝ ԵՊՀ-ն 2007/08 ուստարվանից հրատարակում է բոլոր կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք: Ի հավելումն, այժմ ԵՊՀ ծրագրերն ունեն նաև մասնագրեր, որտեղ ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը:
6. ԵՊՀ-ում գործում են կրկնակի աստիճանաշնորհման և համատեղ մշակված մի շարք կրթական ծրագրեր, որոնք իրականացվում են արտասահմանյան բուհերի հետ համատեղ:

### Բացթողումները

1. Որակավորումների ազգային շրջանակը և բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները բավարար հիմքեր չեն տրամադրում կոնկրետ առարկայական ոլորտում փոխկապակցված երկմակարդակ (բակալավր/մագիստրոս) կրթական ծրագրերի մշակման համար: Բացակայում է որակավորումների այսպես կոչված «ոլորտային» շրջանակը, որը կդյուրացներ այդ գործընթացը:
2. ԵՊՀ դասախոսների զգալի մասը դեռևս չունի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված երկմակարդակ կրթական ծրագրերի մշակման և իրականացման բավարար փորձ: Համալսարանն այս ուղղությամբ կատարել է որոշակի քայլեր. այն է՝ դասախոսների վերապատրաստման ծրագրում ներառել է հատուկ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են դասախոսների մոտ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաև համապատասխան ուսուցման,

դասավանդման և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների զարգացմանը:

3. Չնայած ԵՊՀ-ում գործող գնահատման համակարգի առավելություններին, այն դեռևս լիարժեք չի ապահովում ակադեմիական ազնվության բավարար մակարդակ և բացակայում են համապատասխան ընթացակարգերը:
4. ԵՊՀ կրթական ծրագրերի կառուցվածքը դեռևս մնում է բավական «կոշտ», ինչը ուսանողներին չի տրամադրում բավարար ընտրության և անհատական ուսումնական ծրագրերով սովորելու հնարավորություններ:
5. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման գործընթացները դեռևս լիարժեք չեն գործում:

## ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

## ՄՈՒՀ-Ն ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված «Ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն» գերակայության շրջանակներում նպատակ է դրված ընդլայնել համալսարանի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել երկրի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև զարգացնել ուսանողական համակազմի միջազգայնացման առկա միտումը: Համապատասխան խնդիրների շրջանակներում նախատեսվում է զարգացնել ԵՊՀ գովազդարշավը, ակտիվացնել մարքեթինգը, ընդլայնել աշխատանքը դպրոցների հետ, դյուրացնել մուտքը համալսարան, ընդլայնել ընդունելության դոնոր երկրների ցանկը, խթանել սփյուռքահայ դիմորդների ներհոսքը և այլն (տե՛ս ՌԾ VIIա, VIIբ և VIIգ խնդիրները):

ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի ստորաբաժանումների աշխատանքների համակարգումն իրականացվում է Մինչհամալսարանական կրթության վարչության կողմից: Ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրների շրջանակներում 17 ավագ դպրոցների հետ կնքվել է համագործակցության պայմանագիր, ևս 22 դպրոցների հետ աշխատանքներ են տարվում կնքված համաձայնագրերի շրջանակներում: Կան համագործակցության պայմանագրեր 9 քոլեջների հետ: Ավանդույթ են դարձել ԵՊՀ-ում կազմակերպվող հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաները, ողջ տարվա ընթացքում կազմակերպվում են համալսարանականների այցելություններ դպրոցներ և «Բաց դռների օրերի» շրջանակներում աշակերտների ճանաչողական այցեր համալսարան, պատրաստվում են ԵՊՀ-ի, այդ թվում՝ առանձին ֆակուլտետների մասին պատմող տեղեկատվական նյութեր և ֆիլմեր, որոնք հասանելի են նաև համացանցում, ԵՊՀ պաշտոնական կայքում գործում է «Դիմորդ» ենթաբաժինը: ԵՊՀ-ն կազմակերպում է նաև դիմորդների համար նախատեսված նախապատրաստական դասընթացներ (ցանկը՝ հավելված 4.1-ում):

Դիմորդների ընդունելությունը ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգ իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012 թ. որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» համաձայն: Համաձայն նշված կարգի՝ բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն: Ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում: Բուհ ընդունվելու համար դիմորդները քննական կենտրոններում հանձնում են ընդունելության քննություններ, որոնք միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններն են: Վերջիններս կազմակերպվում և անցկացվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի կառավարումն իրականացնում է ՀՀ կառավարության աշխատա-

կազմը: ԵՊՀ ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է ԵՊՀ ընդունող հանձնաժողովը, որը դիմորդի դիմում-հայտի լրացման ժամանակ դիմորդին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն: Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: Դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների համար սահմանված բոլոր քննությունները:

ԵՊՀ բակալավրիատ՝ առկա համակարգ, ընդունելությունն արձանագրել է դիմորդների կայուն աճի բավականին բարձր տեմպեր: Մասնավորապես 2009 թ. համեմատ 2012 թ-ին դիմորդների թիվն աճել է շուրջ 20%-ով (2009-2012 թթ. առկա համակարգի դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են հավելված 4.2-ում):

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հուլիսի 27-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոններով», համաձայն որի՝ ընդունելության մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Դիմորդները մասնակցում են միայն մեկ բուհի մեկ մասնագիտության ուսուցման մրցույթին: ԵՊՀ ռեկտորի կողմից կազմված ընդունող հանձնաժողովը կազմակերպում է ընդունելության քննությունները, որոնք վերահսկվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ընդունելության քննությունները և՛ բովանդակային, և՛ կազմակերպչական առումով լիովին համապատասխանում են բակալավրիատի առկա համակարգի պետական միասնական քննությունների պահանջներին: Նպատակ ունենալով ապահովել ընդունելության գործընթացի թափանցիկությունը՝ դիմորդներին տրամադրվում է թեսթի պատասխանների ձևաթղթի պատճենը, ինչպես նաև քննության ավարտից մեկ ժամ հետո թեսթի ճիշտ պատասխանները հրապարակվում են ԵՊՀ կայքէջում:

Վերջին տարիների ընթացքում ուսուցման հեռակա համակարգում ընդունելության զարգացման շնորհիվ բակալավրիատի ուսանողների ընդհանուր թվի մոտ 30%-ը կազմում են այդ համակարգի ուսանողները (2009-2012 թթ. հեռակա համակարգի դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են հավելված 4.2-ում):

Մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» համաձայն: Յուրաքանչյուր տարի ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվում է տվյալ ուսումնական տարվա ԵՊՀ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը, որտեղ նշվում են դիմորդների ընդունելության և մրցույթի անցկացման հստակ ժամկետներն ըստ փուլերի և մրցույթի հստակ պահանջները: Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ, ինչպես նաև մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների

գծով պրոռեկտորի նախագահությամբ: Քննությունների անցկացման համար պրոռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ:

Անվճար և վճարովի տեղերի համար ընդունելությունն իրականացվում է 3 փուլով: Առաջին փուլում անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ բակալավրիատի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա շրջանավարտները, որոնց ՄՈԳ-ը բարձր է 13 միավորից: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ բակալավրիատի առաջադիմության ՄՈԳ-ի հիման վրա: Երկրորդ փուլում վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ և այլ պետական բուհերի շրջանավարտները, որոնց ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով:

Երրորդ փուլում՝ անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել բանակից զորացրված դիմորդները՝ իրենց համար նախատեսված տեղերի շրջանակներում: Ընդունելությունը կատարվում է առանց քննության՝ մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Երրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել նաև առաջին և երկրորդ փուլում ժամանակին չդիմած անձինք:

Նպատակ ունենալով ապահովել թափանցիկությունը՝ ուսանողների առաջադիմության տվյալները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հրապարակվում են: Մագիստրատուրայի գրավչությունը դիմորդների համար մեծացնելու նպատակով ԵՊՀ-ն առաջարկում է բազմազան մասնագիտություններով շուրջ 130 կրթական ծրագրեր (բակալավրիատի 60-ի դիմաց): Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսանողների թիվը կազմում է մագիստրանտների ընդհանուր թվի շուրջ 20%-ը (2009-2012 թթ. մագիստրատուրայի դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են հավելված 4.2-ում):

Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. սեպտեմբերի 15-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի» համաձայն: Բոլոր դիմորդները մինչև մասնագիտական քննությունը պետք է հաղթահարեն անգլերենից TOEFL քննության (կամ գերմաներենի Test DaF և ֆրանսերենի TCF ստուգարքների) անհրաժեշտ շեմը և ստուգարք հանձնեն համակարգչից օգտվելու հմտություններ առարկայից, որից հետո միայն նախօրոք հայտարարված առարկայական ծրագրերի շրջանակներում կազմակերպվում է մասնագիտական քննությունը: Ռեկտորի հրամանով ստեղծվում են ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողով և մասնագիտական քննական հանձնաժողովներ: Ընդունելությունը կատարվում է մրցույթի միջոցով՝ ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի, իսկ հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում և՛ օտար լեզվի, և՛ համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով): Վերջին տարիներին նկատվում է առկա ասպիրանտուրայում սովորողների թվի նվազում, ինչը պայմանավորված է տեղերի կրճատումով, իսկ հեռակա ասպիրանտուրայում արձանագրվել է սովորողների թվի աճ (2009-2012 թթ. ասպիրանտուրա ընդունվածների թվերը ներկայացված են հավելված 4.3-ում): Հեռակա ասպիրանտների ընդունելությունն իրականացվում է առկա համակարգին համանման:

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների… ընդունելության կարգի» համաձայն: Ըստ այդ կարգի՝ դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից: Ուսուցման լեզվին և համապատասխան մասնագիտության ընդունելության համար նախատեսված քննական առարկաներին չտիրապետող օտարերկրացիներն ուսուցումն անցնում են ԵՊՀ նախապատրաստական դասընթացներում: Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական դասընթացներն իրականացվում են ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնի կողմից (կենտրոնը ստեղծվել է Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի հենքի վրա, որն ուներ օտարերկրացիների նախապատրաստման շուրջ 45 տարվա փորձ): Ներկայումս ԵՊՀ-ում ուսանում է մոտ 500 օտարերկրյա քաղաքացի, իսկ Միջազգային կրթական կենտրոնի նախապատրաստական դասընթացներում ներգրավված է 52 ունկնդիր (2009-2012 թթ. օտարերկրյա քաղաքացիների դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են հավելված 4.4-ում): Օտարերկրյա ուսանողների համակազմն ընդլայնելու համար խիստ արդիական խնդիր է հանրակացարանային համալիրի առկայությունը: Ներկայումս, ԵՊՀ-ի հանրակացարանային համալիրի տեղերը խիստ սահմանափակ են և հիշատակված խնդիրը գտնվում է ԵՊՀ կառավարման մարմինների ուշադրության ներքո:

Ուսանողների տեղափոխումն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» համաձայն (2008-2011 թթ. ուսանողների ներհոսքի և արտահոսքի վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են հավելված 4.5-ում): Ներկայացված տվյալներից երևում է, որ ԵՊՀ-ից ուսանողների արտահոսք գրեթե չկա (կազմում է աննշան թիվ):

Ուսանողների հեռացումն ու վերականգնումն իրականացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2012 թ. նոյեմբերի 17-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» համաձայն (2007-2011 թթ. ուսանողների հեռացումների և վերականգնումների վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են հավելված 4.6-ում):

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են համալսարանի մի շարք օղակներ և ստորաբաժանումներ: Ֆակուլտետներում ներդրված է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ինստիտուտը: ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2011 թ. հունիսին հաստատված «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» և ԵՊՀ ռեկտորի «Ուսումնական խորհրդատուների (կուրատորների) աշխատանքը կազմակերպելու մասին» հրամանով (27.07.2010 թ.) սահմանվել են կուրատորների աշխատանքի կազմակերպման պահանջները: Կուրատորները բացահայտում են իրենց ամրագրված ուսանողների կրթական կարիքները և

հետևում նրանց ուսումնական առաջընթացին, օգնում հաղթահարել ուսման ընթացքում ծագած դժվարությունները: Կուրատորների աշխատանքը հաշվարկվում է նրանց բեռնվածության մեջ և վճարվում համապատասխան չափով: Համաձայն սահմանված կարգի՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը յուրաքանչյուր տարի լսում է կուրատորների կատարած աշխատանքների հաշվետվությունները: Կուրատորների աշխատանքը գնահատվում է նաև «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» միջոցով (մանրամասն ներկայացված է 4.8 կետում): Այսպես, 2011/12 ուստարվա հարցման արդյունքներով ուսանողների շուրջ 35%-ը կուրատորների աշխատանքը արդյունավետ է գնահատել:

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք դրույթներով՝ ԵՊՀ սովորողների շրջանում նախատեսվում է իրականացնել վերլուծություններ կրթական կարիքների բացահայտման նպատակով, ինչպես նաև մշակել ուսուցման տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատման չափանիշներ, զարգացնել օժանդակ ուսանողական ծառայությունները և այլն (խնդիրներ VII բ, VIա):

Համալսարանում ստեղծված է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիք, որի համակարգման ոլորտում որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ գործում են ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինն ու շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: Նշված ստորաբաժանումները համագործակցելով համալսարանական այլ կառույցների հետ, այդ թվում՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ, պարբերաբար վեր են հանում ուսանողների կրթական կարիքները (հանդիպումներ ուսանողների հետ, քննարկումներ ուսանողական կառույցների ղեկավար-անդամների հետ, ուսանողների դիմումների վերլուծություններ և այլն): Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության մեթոդական բաժնի կողմից մշակվել և իրականացվում է ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագիր, որտեղ ուսանողների կրթական կարիքները կդիտարկվեն և կվերլուծվեն առավել համակարգված կերպով (աշխատանքները մեկնարկել են 2012 թ. նոյեմբեր ամսին):

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԵՊՀ մի շարք ստորաբաժանումներ ուսանողներին առաջարկում են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: Ֆակուլտետային մակարդակում ուսումնական խորհրդատուների (կուրատորների) կողմից ուսանողներին պարբերաբար տրամադրվում է խորհրդատվություն, մի շարք ֆակուլտետներում գործում են տարբեր կենտրոններ և այլ կառուցվածքային միավորներ, որոնք ուսանողներին առաջարկում են կրթական կարիքները բավարարելու լրացուցիչ հնարավորություններ:

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ կամ անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը (http://career.ysu.am): Ուսանողական գիտական ընկերության կողմից պարբերաբար կազմակերպվում են սեմինար-դասընթացներ՝ ուսանողների շրջանում գիտական աշխատանք գրելու հմտությունների զարգացման նպատակով:

Բոլոր ֆակուլտետներում այլ մասնագիտություններից մագիստրատուրա ընդունվածների համար նախատեսվում են կրեդիտատարություն չունեցող լրացուցիչ (լրացական) դասընթացներ: Բակալավրիատում ամփոփիչ ատեստավորումից առաջ ուսանողների համար կազմակերպվում են խորհրդատվություններ (ակնարկային դասախոսություններ):

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիան իրականացնում է հեռաուսուցման տարբեր դասընթացներ՝հայերեն և անգլերեն լեզուներով, շուրջ 11 ծրագրերով[3] (մարդկային ռեսուրսների կառավարում, հասարակայնության հետ կապեր, սոցիալական աշխատանք և այլն): Իրավագիտության ֆակուլտետում գործում է իրավաբանական կլինիկա, որը ուսանողներին տրամադրում է գործնական գիտելիքներ և հմտություններ, նպաստում նրանց մասնագիտական կողմնորոշմանը: ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնն անցկացնում է նաև անգլերենի իմացության միջազգային թեստավորում՝ տրամադրելով միջազգային վկայագիր (TOEFL, ITEP) և ուսանողների համար կազմակերպում համապատասխան ուսուցողական դասընթացներ: ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը ասպիրանտուրա ընդունվող ուսանողներին առաջարկում է համակարգչից օգտվելու հմտություններ դասընթացը:

ԵՊՀ-ում գործում են նաև մի շարք ռեսուրս կենտրոններ՝ Ռուսական, Եվրոպական ուսումնասիրությունների, Հետազոտական ռեսուրսների կովկասյան, Կիրառական հոգեբանության, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների, որոնք իրենց գործունեության շրջանակներում աջակցում են ուսանողներին՝ բավարարելու իրենց կրթական կարիքները:

ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների համագործակցության արդյունքում ԵՊՀ-ում 2011 թվականից գործում է Հայ-հնդկական Տեղեկատվական և Հաղորդակցության Տեխնոլոգիաների (ՏՀՏ) գերազանցության կենտրոնը, որը ուսանողներին առաջարկում է ՏՀՏ տարբեր ուղղություններով դասընթացներ (http://armindia.am):

Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը զուգահեռ նախատեսվում է ընդլայնել և զարգացնել նրանց առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տեսականին: Մասնավորապես, ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա նախատեսվում է բարձրացնել ուսանողներին առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության արդյունավետությունը (հարստացնել դրանց բովանդակությունը, բազմազանեցնել առաջարկվող հնարավորությունների մասին տեղեկատվության տարած-

[3] http://distancelearning.am

ման խողովակները), ինչպես նաև հնարավորության դեպքում ավելացնել նոր առաջարկություններ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:**

Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու ֆորմալ կանոնակարգ և ժամանակացույց ԵՊՀ-ում դեռևս չկա, սակայն ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու պրակտիկան գործում է, ձևավորված են որոշակի մեխամիզմներ, իսկ առանձին հարցերի պարագայում՝ սահմանված են նաև համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ ժամանակացույցեր: Ուսանողներն իրենց հուզող տարբեր հարցերով ու խնդիրներով բանավոր և գրավոր կարգով դիմում են ֆակուլտետների դեկաններին (ֆակուլտետային մակարդակով լուծվող հարցերի դեպքում): Միաժամանակ նրանք հնարավորություն ունեն ամենատարբեր հարցերով դիմելու նաև իրենց ուսումնական խորհրդատուներին (կուրատորներին):

Բազմաթիվ խնդիրներ (վարձերի զեղչեր, տեղափոխություններ, վերականգնում, այլ կրթական հարցեր) լուծվում են համալսարանական մակարդակով: Մի շարք խնդիրների լուծման համար սահմանված են ուսանողների կողմից դիմումներ ներկայացնելու հստակ ընթացակարգեր: Այսպես, ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 18-ին հաստատված «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» համաձայն՝ ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման համար ուսանողները պետք է ներկայացնեն համապատասխան գրավոր դիմումներ, սահմանված են դրանց ներկայացման ժամկետները (կանոնակարգը ներառված է «Առաջին կուրսեցու ուղեցույցում», ի թիվս այլ փաստաթղթերի տեղադրված է ԵՊՀ կայքում): Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի համաձայն՝ ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ ֆակուլտետի դեկանին: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 1-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» համաձայն՝ ուսանողը կարող է գրավոր բողոքարկել ամփոփիչ ատեստավորման արդյունքները, սահմանված են հստակ ժամկետներ: Տեղափոխումների և վերականգնումների հետ կապված խնդիրները նույնպես կանոնակարգված են և սահմանված է հստակ ժամանակացույց:

Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի պարտականությունների շրջանակում ներառված է նաև ուսանողներին առնչվող տարբեր խնդիրների լուծումը: Նրա համակարգման ոլորտում գործող Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը, ի թիվս այլ գործառույթների, ուսանողների համար հանդիսանում է վարչական աշխատակազմին դիմելու կարևորագույն օղակ: Ուսանողներն իրենց հուզող խնդիրներով բանավոր կամ գրավոր կերպով դիմում են նշված բաժին, վերջինս էլ, համա-

գործակցելով համապատասխան պրոռեկտորի և տարբեր համալսարանական օղակների հետ, ապահովում է խնդրի լուծումը:

ԵՊՀ ուսանողները հնարավորություն ունեն նաև ԵՊՀ պաշտոնական կայքէջի «Հարց ու պատասխան» առցանց գործիքի միջոցով տարբեր հարցերով դիմելու ԵՊՀ վարչական աշխատակազմին (օրինակ, 2012 թ. արձանագրվել է շուրջ 1200 հարց): Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչական աշխատակազմի (ռեկտոր, պրոռեկտորներ և այլն) ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում ուսանողները բարձրաձայնում են իրենց հուզող խնդիրները և ստանում պատասխաններ:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթում ներառված է նաև «Որքանո՞վ են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերը և մեխանիզմները» հարցը: Հարցմանը 2010/2011 ուստարվա շրջանավարտներից մասնակցել է 2009-ը (ինչը կազմում է տվյալ տարվա շրջանավարտների 51%-ը), որոնց շուրջ 54%-ը «լավ» և «գերազանց» է գնահատել ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը, 16%-ը՝ «բավարար», իսկ 10%-ը՝ «անբավարար» (մնացածը դժվարացել է գնահատել):

Ուսանողները վարչական աշխատակազմին իրենց հուզող հարցերով հաճախ դիմում են նաև միջնորդավորված՝ Ուսանողական խորհրդի և/կամ Ուսանողական գիտական ընկերության միջոցով, իսկ վերջիններիս ներկայացուցիչները համապատասխան հարցադրումներով հանդես են գալիս համալսարանի կառավարման մարմինների կամ ռեկտորատի նիստերում:

ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» համաձայն՝ նախատեսվում է առավել հստակ կանոնակարգել և ֆորմալացնել ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման և համապատասխան պատասխանի տրամադրման գործընթացը: Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ-ում մեկնարկում է ուսանողներին համալսարանական էլ. փոստի հասցեների տրամադրման համակարգի ներդրումը, որի գործարկումից հետո ուսանողները հնարավորություն կունենան նաև էլ. փոստի միջոցով պաշտոնապես դիմելու համապատասխան վարչական կառույցներին:

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԵՊՀ ռազմավարական ծրագրում ամրագրված են կարիերայի զարգացման ծառայությունների, աշխատաշուկայում մրցունակության, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման, գործատուների հետ համագործակցության, ուսանողների պրակտիկ փորձառության հնարավորությունների ընդլայնմանը վերաբերող մի շարք խնդիրներ և միջոցառումներ (Խնդիր I ա) և Խնդիր VI ա)), որոնք այժմ իրականացվում են համալսարանի կողմից:

ԵՊՀ-ում ուսանողների ապագա կարիերային առնչվող խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համակարգումն իրականացվում է 2006 թ. ստեղծված ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից (career.ysu.am):

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից կատարվում են հետևյալ աշխատանքները.

1) տարբեր թեմատիկ սեմինար-դասընթացներ, խորհրդատվություններ, ուսումնական ծրագրով չնախատեսված լրացուցիչ պրակտիկաների և ինթերշիփ ծրագրերի (ստաժավորման) ու կամավորական աշխատանքների կազմակերպում,

2) ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայնում (հանդիպումներ, խորհրդակցություններ, ընդունելություններ),

3) տարբեր թիրախային խմբերի հետ կապերի ամրապնդում (ինտերնետ կայքի ստեղծում և շահագործում),

4) ֆակուլտետներում կարիերայի հարցերով պատասխանատուների ինստիտուտի ներդրում:

Կենտրոնի կողմից վերջին 2 տարիների ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ դասընթացներ ինչպես Երևանում, այնպես էլ ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում: Մասնավորապես, հարկ է առանձնացնել Ծաղկաձորում կայացած «Երիտասարդական մասնակցությունը և արդի աշխատաշուկայում ինտեգրմանը խթանող գործոններ», «Երիտասարդական մասնակցության համալսարանական հեռանկարներ», «Ուսանողական հասարակական ակտիվությունը՝ որպես կարիերայի զարգացման խթան» խորագրերով եռօրյա սեմինար-դասընթացները, ինչպես նաև ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող «Ռեզյումե գրելու հմտություններ» թեմայով դասընթացների շարքը: Գործընկեր ընկերությունների ներկայացուցիչները ԵՊՀ-ում պարբերաբար վարում են սեմինարներ աշխատաշուկայում կարևորվող մի շարք հարցերի շուրջ («Վիվասել» ՓԲԸ, «Օրանժ Արմենիա» ՓԲԸ, «Մաքդամիան» ՍՊԸ, UMCOR ՀԿ և այլն):

Կենտրոնի կողմից կազմակերպվել է «ԵՊՀ-ի համագործակցությունը առաջատար ընկերությունների և գործատուների հետ» հանրապետական կլոր սեղան-քննարկումը և «Աշխատաշուկայի և բարձրագույն կրթության արդի փոխգործակցության խնդիրները» գիտագործնական հանդիպումը: Կենտրոնը կազմակերպում է ուսումնական ծրագրով չնախատեսված պրակտիկաներ, ինթերնշիփեր, հանդիպումներ գործատուների հետ, ինչպես նաև առաջարկում ուսումնական ծրագրով նախատեսված պրակտիկա գործընկեր կազմակերպություններում՝ պրակտիկայի բաժնի միջոցով: Կենտրոնը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին: Վերջին մեկ տարվա ընթացքում Կենտրոնի միջոցով ԵՊՀ-ն կնքել է տարբեր ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ համագործակցության 11 հուշագիր:

Կարիերայի կենտրոնի գործունեությունից ԵՊՀ ուսանողների բավարարվածությունը պարբերաբար ուսումնասիրվում է ԵՊՀ-ում ստացած կրթությունից նրանց բավարարվածության վերաբերյալ հարցումների շրջանակում: Այսպես, 2011 թ. շրջանավարտների հարցումներից ստացված տվյալների համաձայն՝ բակալավրիատի շրջանավարտների մոտ 72%-ը գոհ

է կենտրոնի աշխատանքներից, իսկ 13%-ն այն գնահատել է «անբավարար»: Միևնույն ժամանակ մագիստրատուրայի շրջանավարտների 69%-ն է գոհ կենտրոնի աշխատանքներից, իսկ 19%-ը այն գնահատել է «անբավարար»: Բակալավրիատի շրջանավարտների մոտ 13%-ը, իսկ մագիստրատուրայի՝ 14%-ը դժվարացել է պատասխանել հարցին, ինչը կարող է բացատրվել կենտրոնի հետ կապերի բացակայությամբ:

ՀՀ կրթական համակարգում ուսանողների կարիերայի օժանդակությանն ու բուհ-ձեռնարկություն փոխգործակցությանն ուղղված գործուն մեխանիզմների բացակայությունը, արտադրական պրակտիկայի նկատմամբ իշխող ձևական մոտեցումը, աշխատաշուկայում գործազրկության մեծ տոկոսը, ինչպես նաև ՀՀ մասնագիտական աշխատուժի շուկայի դեռևս չձևավորված լինելու հանգամանքը էապես բարդացնում են ԵՊՀ-ում ուսանողների կարիերային նպաստող արդյունավետ ծառայությունների մատուցումը: Այդ ծառայությունների մատուցման խոչընդոտներից է նաև շրջանավարտների հետ թույլ հետադարձ կապը, ինչը պայմանավորված է մեր բուհական համակարգում համապատասխան ավանդույթների բացակայությամբ: Այդ պատճառով՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնն իր ստեղծման օրվանից լծվել է շրջանավարտների կոնտակտային տվյալների բազայի ստեղծման աշխատանքներին (շրջանավարտների գրանցման թերթիկի միջոցով): Ընթացիկ ուսումնական տարվա ավարտին նախատեսվում է ԵՊՀ-ում ներդնել ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Ուսանողներին տրամադրված հասցեն պահպանվելու է նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս դժվարություններ կան շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին արժանահավատ վիճակագրություն ձևավորելու հարցում, որի լուծման համար նախատեսվում է նախկին տարիների (2007 թ. հետո) շրջանավարտների շրջանում իրականացնել առցանց հարցում՝ նրանց զբաղվածության և այլ հարցերի վերաբերյալ:

Մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան՝ մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ: Գործատուների հետ համատեղ մշակված և իրականացվող ծրագրերից կարելի է նշել «Սինոփսիս-Արմենիա» ընկերության հետ համագործակցությունը՝ 2005թ-ից: Անհրաժեշտ է փաստել, որ լավագույն ուսանողները, ուսմանը զուգահեռ, աշխատանքի են անցնում ընկերությունում: Այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ է գործակցող կողմերի համար. համալսարանի որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով: Այս առումով համալսարանը փորձում է համագործակցել Հայաստանում գործող նմանատիպ այլ ընկերությունների հետ ևս:

Ներկայումս ԵՊՀ-ն ներգրավված է եվրոպական «TEMPUS» ծրագրի շրջանակներում իրականացվող «Cap4Com» ծրագրում[4], որի նպատակն է խթանել համալսարան-ձեռնարկություն համագործակցության ընդլայնումը և զարգացումը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել համալսարան-ձեռնարկություն համագործակցության վեբպլատֆորմ և իրականացնել մի շարք այլ աշխատանքներ: 2013 թ. հունվարին ԵՊՀ գիտական խորհրդին կից ձևավորվել է ձեռնարկությունների հետ համագործակցությունը համակարգող

[4] http://www.cap4com.eu/

մշտական հանձնաժողով, ֆակուլտետներում կստեղծվեն ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող խորհուրդներ, որտեղ ներգրավված կլինեն ֆակուլտետի և համապատասխան ձեռնարկությունների ներկայացուցիչները և այլն: ԵՊՀ ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների ոլորտում առաջնային խնդիրներն են՝ զարգացնել այդ ծառայությունների մատուցման կարողությունները ֆակուլտետներում (բարձրացնել դրանց մասին իրազեկվածության մակարդակը, ապահովել ֆակուլտետներում կուրատորների ակտիվ ներգրավումը և այլն), բարձրացնել պրակտիկաների արդյունավետությունը, զարգացնել շրջանավարտների տվյալների բազան և նրանց հետ հետադարձ կապի գործիքները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.6. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:**

ԵՊՀ-ն ունի մի շարք կառույցներ, որոնք աջակցում են ուսանողներին ներգրավվելու համալսարանի հետազոտական լաբորատորիաների, կենտրոնների և ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում:

Ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելու նպատակով դեռևս 1947 թ. ԵՊՀ-ում ստեղծվել է ուսանողական կազմակերպություն՝ Ուսանողական գիտական ընկերություն (այսուհետ՝ՈՒԳԸ): Բոլոր ֆակուլտետներում գործում են ՈՒԳԸ-ներ, որոնք ձևավորվում են ամբիոնների կողմից ներկայացված ուսանողներից: Ներկայումս ՈՒԳԸ-ի կազմում ընդգրկված են ավելի քան 400, իսկ նրա ծրագրերին և միջոցառումներին մասնակցում են ավելի քան 1000 ուսանողներ և ասպիրանտներ: ՈՒԳԸ-ն ունի նաև կենտրոնական մարմին, որը համակարգում է ՈՒԳԸ աշխատանքները: ՈՒԳԸ նախագահը նշանակվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից: Իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար ԵՊՀ ՈՒԳԸ-ն ուսանողների, ասպիրանտների և մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականների համար կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ և ծրագրեր՝ գիտական աշխատանքների հրատարակություն, միջազգային, հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներ, ուսուցողական դասընթացներ, սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, օլիմպիադաներ, գիտաճանաչողական էքսկուրսիաներ, ինտելեկտուալ խաղեր և այլն: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների աջակցությամբ ՈՒԳԸ-ի կողմից պարբերաբար անց է կացվում «Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցում» ուսուցողական դասընթաց-ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են սեմինարներ, գործնական պարապմունքներ, գիտափորձեր: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ԵՊՀ ՈՒԳԸ գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ արտաբյուջետային միջոցների հաշվին: ԵՊՀ խորհուրդը յուրաքանչյուր տարի ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվով ԵՊՀ ՈՒԳԸ աշխատանքների իրականացման համար հատկացնում է համապատասխան միջոցներ:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով (Խնդիր IIա) նախատեսված է ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, ապահովել գիտա-

կան ծրագրերում ասպիրանտների և մագիստրատուրայի ուսանողների 25% մասնակցություն, խրախուսել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը և այլն: ԵՊՀ ասպիրանտների և մագիստրանտների ներգրավվածությունը պետական բյուջեից ֆինանսավորվող հետազոտական ծրագրերում ներկայացված է հավելված 4.7-ում, որտեղից երևում է, որ ասպիրանտների մասնակցությունը կազմում է 21,5%:

ԵՊՀ բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրերը նույնպես նախատեսում են ուսանողների ներգրավում տարբեր գիտահետազոտական աշխատանքներում, մասնավորապես՝ ռեֆերատների, կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի և թեկնածուական ատենախոսության կատարում: Հետազոտական աշխատանքների կատարումը ԵՊՀ մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչն է, որը պարբերաբար գնահատվում է, իսկ ուսանողները ստանում են կրեդիտներ: Միաժամանակ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է ունենալ առնվազն 2 հրատարակած գիտական հոդված:

2010-2012 թթ. ընթացքում ԵՊՀ ՈՒԳԸ-ն կազմակերպել է 46 հանրապետական և 39 ֆակուլտետային գիտաժողովներ, որոնց ընթացքում ներկայացվել է ուսանողների շուրջ 1700 գիտական զեկուցում, հրատարակել է գիտական հոդվածների և թեզիսների 12 ժողովածու, որոնցում ընդգրկված են մոտ 400 գիտական աշխատանքներ: Միևնույն ժամանակ ՈՒԳԸ անդամները հրատարակել են 6 մենագրություն և ավելի քան 100 գիտական հոդված և թեզիս այլ հանդեսներում և ժողովածուներում: ԵՊՀ ՈՒԳԸ-ն օժանդակում է նաև ԵՊՀ ուսանողների մասնակցությանը ՀՀ այլ բուհերում կազմակերպվող երիտասարդական գիտաժողովներին և ծրագրերին, նրանց աշխատանքների հրատարակմանը՝ ՀՀ առաջատար գիտական հանդեսներում և գիտաժողովների ժողովածուներում: ՈՒԳԸ-ն տեղեկացնում է ուսանողներին նաև միջազգային հետազոտական ծրագրերի մասին, աջակցում արտերկրում կայացող միջազգային գիտաժողովներին նրանց մասնակցությանը: Այդ նպատակով՝ ՈՒԳԸ-ն համաձայնագրեր է կնքում տարբեր երկրների բուհերի երիտասարդական գիտական կառույցների հետ՝ փոխադարձաբար աջակցելով նրանց ուսանողների մասնակցությանը տարբեր միջազգային ծրագրերում:

ԵՊՀ բյուջեում նախատեսված է առանձին տող՝ ուսանողական գործուղումների համար, որով ֆինանսավորվում է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը տարբեր գիտաժողովներին, սեմինարներին, աշխատաժողովներին և այլ միջոցառումներին:

Վերջին տարիների ընթացքում որոշ չափով նկատվում է ՈՒԳԸ աշխատանքներում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների մասնակցության թուլացում, ինչը, հարկ է նշել, հաճախ չի մտնում դասախոսների պարտականությունների ֆորմալ շրջանակ: Որոշ առումով անբավարար է ՈՒԳԸ-ի կողմից ինտերնետային գործիքների կիրառումը: 2013 թ. նախատեսվում է ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման համատեքստում ստեղծել նոր ուսանողական պորտալ, որտեղ ծանրակշիռ ներկայություն կունենա նաև ՈՒԳԸ-ն: Նախատեսվում է զարգացնել նաև ՈՒԳԸ էլեկտրոնային հրատարակումները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:**

ԵՊՀ ուսանողների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ), ԵՊՀ կանոնադրությամբ (հոդված 108), ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով (հոդված 28) և ԵՊՀ այլ ներքին իրավական ակտերով:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ խնդիրների լուծման համար ԵՊՀ-ում գործում է Ուսանողական խորհուրդ (ԵՊՀ ՈՒԽ): Այն ԵՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է: ԵՊՀ ՈՒԽ-ի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: ՈՒԽ-ի կանոնադրությունն ընդունվում է ՈՒԽ ղեկավար մարմնի կողմից և հաստատվում լիազոր մարմնի (ՀՀ կրթության և գիտության նախարարության) կողմից (ԵՊՀ կանոնադրություն, 116 հոդված):

ԵՊՀ ՈՒԽ գործող կանոնադրությունն ընդունվել է 2010 թ. փետրվարի 19-ին կայացած ՈՒԽ համագումարի կողմից: ՈՒԽ կանոնադրության համաձայն՝ ՈՒԽ նպատակներն են՝ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր, մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը, աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը և այլն (ԵՊՀ ՈՒԽ կանոնադրություն, հոդված 2.1): Բոլոր վերոհիշյալ նպատակներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են ԵՊՀ ուսանողների իրավունքներին:

Համալսարանի ուսանողների ճնշող մեծամասնությունը իրազեկված է ՈՒԽ գործունեության մասին և անհրաժեշտության դեպքում դիմում է ՈՒԽ-ին: Ուսանողների 70-80%-ը մասնակցում է ՈՒԽ ընտրություններին, շուրջ 700 ուսանող ընտրվում է ՈՒԽ տարբեր մակարդակների կառույցներում, տարեկան շուրջ 1000 ուսանող օգտվում է ՈՒԽ-ի սոցիալական աջակցության ծրագրերից (ուսման վարձի զեղչում, ամառային հանգիստ և այլն):

ԵՊՀ ՈՒԽ կանոնադրությամբ սահմանված են նրա ղեկավար մարմինները՝ համագումար և նախագահություն: ՈՒԽ գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով նախագահությունում գործում են համապատասխան մշտական հանձնաժողովներ (իրավական, արտաքին կապերի, գիտակրթական, սոցիալական և այլն):

ԵՊՀ ՈՒԽ-ի՝ ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

1) Կանխարգելող աշխատանքներ և իրազեկում (տեղեկատվության տարածում, հանդիպումներ, բացատրական աշխատանք և այլն):

2) Ոչ անհատականացված աշխատանքներ կամ ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացում (տարբեր կանոնակարգերի, ընթացակարգերի և խնդիրների քննարկում, առաջարկությունների ներկայացում և այլն):

3) Անհատականացված աշխատանք (առանձին հարցի վերաբերյալ ուսանողի կամ ուսանողների խմբի իրավունքների պաշտպանության իրականացում նրանց բանավոր կամ գրավոր դիմումի համաձայն):

ԵՊՀ ՈՒԽ-ն իր գործունեության ընթացքում ձևավորել է ուսանողների իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներ՝ ուսանողների խնդիրների, իրավունքների խախտումների բացահայտում, բարձրաձայնում, կառավարման մարմիններում քննարկում և այլն: Ուսանողների խնդիրները քննարկվում են նաև ֆակուլտետների ՈՒԽ-ներում, ԵՊՀ ՈՒԽ նախագահությունում, իրավական և այլ հանձնաժողովներում: Հարցի բովանդակությունից կախված՝ ընտրվում է դրան արձագանքելու արդյունավետ ճանապարհը: ՈՒԽ-ն ներկայումս մշակում է ուսանողների հետ աշխատանքի նոր առցանց գործիքներ, ստեղծվում է ուսանողական նոր պորտալ, գործում է ՈՒԽ Ֆեյսբուքյան խումբը:

ԵՊՀ կառավարման մարմիններում ուսանողների մասնակցության մասին մանրամասն ներկայացված է 2.2 չափորոշչի վերլուծությունում, իսկ վարչական ստորաբաժանումներին դիմելու խնդիրների մասին՝ 4.4-ում:

ԵՊՀ ռազմավարական ծրագրում ամրագրված է «Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, հզորացնել համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունները» խնդիրը: Այս խնդրի շրջանակներում նախատեսվում է բարձրացնել կառավարման տարբեր կոլեգիալ մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը, ստեղծել նպաստավոր պայմաններ ուսանողական կազմակերպությունների գործունեության համար, աջակցել նրանց ինստիտուցիոնալ զարգացմանը, մեծացնել նրանց դերը համալսարանում ընթացող բարեփոխումների իրականացման գործընթացում և այլն (տե՛ս ՌԾ VIII գ) խնդիրը):

ԵՊՀ ՈՒԽ գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ արտաբյուջետային միջոցների հաշվին: ԵՊՀ խորհուրդն ամեն տարի ԵՊՀ բյուջեում ՈՒԽ-ին հատկացնում է համապատասխան միջոցներ:

Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության համար ԵՊՀ-ում առկա է համապատասխան բազմամակարդակ համակարգ: Ինչպես նշված է 4.4 չափորոշչի վերլուծությունում, ուսանողներն իրենց հուզող տարբեր խնդիրներով ֆակուլտետում դիմում են ֆակուլտետի դեկանին և կուրատորներին: Միաժամանակ, նրանք դիմում են ֆակուլտետի ուսանողական խորհրդին, իսկ որոշ հարցերի դեպքում՝ ուսանողական գիտական ընկերությանը: Համալսարանական մակարդակում ուսանողներն ուղղակիորեն կամ ՈՒԽ-ի միջոցով կարող են դիմել ռեկտորին կամ պրոռեկտորներին:

Ուսանողների խնդիրների անմիջական լուծումն ապահովվում է ԵՊՀ ռեկտորի, համապատասխան պրոռեկտորների, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի և անհրաժեշտության դեպքում՝ այլ ստորաբաժանումների կողմից: Մասնավորապես, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի խնդիրներն են՝ աջակցել ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների գործունեությանը, ապահովել նրանց փոխգործակցությունը ԵՊՀ

վարչական ստորաբաժանումների հետ, խթանել ուսանողների մասնակցությունը համալսարանի ներքին և արտաքին կյանքին, աջակցել ուսանողների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը, նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, իրականացնել ԵՊՀ ռեկտորատի կողմից նախանշված ուսանողական տարբեր ծրագրեր ու միջոցառումներ և այլն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:**

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար իրականացվում են «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» (այսուհետև՝ ուսանողական հարցում) և «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցում» (այսուհետև՝ շրջանավարտների հարցում):

Ուսանողական հարցումն իրականացվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգի» համաձայն: Ուսանողական հարցման հարցաթերթիկի մի շարք կետեր անմիջականորեն առնչվում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես, ուսանողական հարցման հարցաթերթիկում ներառված են հետևյալ հարցերը.

- Արդյունավետ եք համարում կուրատորի (ուսումնական խորհրդատուի) աշխատանքը Ձեր հետ,
- Գնահատեք Ձեր ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալ(ներ)ի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը,
- Գնահատեք Ձեր ֆակուլտետի դեկանատի գործավարների՝ուսանողների հետ տարվող աշխատանքները:

Շրջանավարտների հարցումն իրականացվում է «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման» կանոնակարգով, որը հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010 թ. հունիսի 17-ի նիստում: Շրջանավարտների հարցման հարցաթերթիկի մի շարք կետեր անմիջականորեն առնչվում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես, ներառված են հետևյալ հարցերը.

- Համալսարանի կարիերայի կենտրոնի դերը հետագա աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվելու տեսանկյունից,
- Որքանով են գրադարանը և ընթերցասրահները տրամադրում ժամանակակից մասնագիտական գրականություն,
- Որքանով եք բավարարված գրադարանի ընթերցասրահների վիճակից և կահավորանքից:

- Որքանով եք գոհ՝

  - համալսարանի ղեկավարությունից,

  - ֆակուլտետի ղեկավարությունից,

  - պրոֆեսորադասախոսական կազմից,

  - ուսանողական կառույցներից (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն),

- Որքանով են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերը և մեխանիզմները:

Ուսանողական և շրջանավարտների հարցման արդյունքները քննարկվում են ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում: Հարցումների ամփոփ արդյունքները ներկայացվում են նաև ԵՊՀ գիտական խորհրդին:

Ներկայումս, ԵՊՀ-ում իրականացվում է ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կստեղծվի կրթական պորտալ՝ առցանց հարցումների հնարավորությամբ: Ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման և մատուցվող ծառայությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը նախատեսում է իրականացնել առցանց հարցումներ: Նշված համակարգի ներդրումը կիրագործվի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեների համակարգի ներդրման և շրջանավարտների բազայի արդիականացման աշխատանքներն ավարտելուց հետո:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ում ձևավորվել և գործում է հանրակրթական հաստատությունների և դիմորդների հետ տարվող աշխատանքների արդյունավետ համակարգ, ինչն արտահայտվում է ԵՊՀ դիմորդների կայուն աճով (մոտ 20 %՝ վերջին 4 տարում):
2. ԵՊՀ-ում ձևավորված են ուսանող-վարչական աշխատակազմ փոխգործակցության մեխանիզմներ, ուսանողները հնարավորություն ունեն իրենց հուզող հարցերով դիմելու ռեկտորին, պրոռեկտորներին, դեկաններին և վարչական աշխատակազմի այլ անդամներին:
3. ԵՊՀ-ն ունի Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, որն ակտիվորեն լծված է գործատու կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ձևավորմանը:
4. ԵՊՀ-ն ունի ուսանողների գիտական աշխատանքների իրականացմանը նպաստող կառույց՝ ՈՒԳԸ, որն ուսանողներին ընձեռում է գիտական աշխատանքներում ներգրավվելու բազմազան հնարավորություններ:

5. Ուսանողների իրավունքների պաշտպանության համար գործում են մի շարք ինստիտուցիոնալ կառույցներ՝ Ուսանողական խորհուրդ, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին, ինչպես նաև առկա է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքը:

**Բացթողումները**

1. ԵՊՀ ընդունելության համակարգում խիստ ցածր է օտարերկրյա ուսանողների մասնաբաժինը, օտարերկրյա ուսանողների ներգրավման հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում: ԵՊՀ-ն դեռևս չունի բավարար հանրակացարանային պայմաններ:
2. ԵՊՀ-ն դեռևս չունի ուսանողների կրթական կարիքների վերհանման ներքին մեխանիզմներ, կայացած չէ անվճար լրացուցիչ պարապմունքների տրամադրման համակարգը:
3. Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերն ամբողջականացված չեն մեկ միասնական ուղեցույցում (կանոնակարգում):
4. Ուսանողների ապագա կարիերային նպաստող աշխատանքները ֆակուլտետներում դեռևս լիարժեք չեն իրականացվում, չեն կատարվում մասնագիտական աշխատաշուկայի պահանջարկի և հիմնական գործատուների բավարարվածության ուսումնասիրություններ, թույլ է շրջանավարտների զբաղվածության վիճակագրական բազան, ինչպես նաև շրջանավարտների հետ կապի մեխանիզմը:
5. Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համար դեռևս ներդրված չէ համալիր ինտեգրացված համակարգ:

## ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՄՈՒՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՎ ՄԿԾ-ՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԻՐԱԿԱ-ՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻ-ՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱ-ՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄՈՎ

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժան-դակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնա-գիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրա-գրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ԵՊՀ հիմնական դասախոսական կազմը ներառում է 1266 դասախոս, այդ թվում՝ 166 պրոֆեսոր, 461 դոցենտ, 639 ասիստենտ և դասախոս (2011/12 ուստարի): Ստորև ներկայաց-վում է դասախոսական կազմն ըստ տարակարգերի և ուսումնաօժանդակ կազմի քանակա-կան տվյալները վերջին հինգ ուստարիներին:

Աղյուսակ 5.1. ԵՊՀ հիմնական դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերը

| | 2007/08 | 2008/09 | 2009/10 | 2010/11 | 2011/12 |
|---|---|---|---|---|---|
| Պրոֆեսոր | 159 (12,8%) | 151 (12,2%) | 163 (13,0%) | 161 (12,6%) | 166 (13,1%) |
| Դոցենտ | 407 (32,7%) | 436 (34,9%) | 449 (35,9%) | 451 (35,5%) | 461 (36,4%) |
| Ասիստենտ և դասախոս | 678 (54,5%) | 659 (52,9%) | 638 (51,8%) | 658 (51,8%) | 639 (50,5%) |
| Ընդամենը | 1244 | 1246 | 1250 | 1270 | 1266 |
| Այդ թվում՝ գիտ. աստիճանով | 798 (64,1%) | 807 (64,8%) | 828 (66,2%) | 829 (65,2%) | 844 (66,7%) |
| Ուսումնաօժանդակ կազմ | 426 | 440 | 430 | 468 | 449 |

Ինչպես երևում է աղյուսակից, վերջին հինգ տարիներին պրոֆեսորադասախոսական կազմի գրեթե 50%-ը պրոֆեսորներ և դոցենտներ են, իսկ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը կազմում է հիմնական դասախոսական կազմի 2/3-ը: ԵՊՀ-ում դասավանդում են նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 23 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ: Ուսումնաօժանդակ կազմի թվաքանակը պայմանավորված է կրթական ծրագրերում ներգրավված ուսանողների և դասախոսների թվով: Ուսանող/դասախոս հարաբերակցության գործակիցը կազմում է 12,5:

Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման գործընթացում կարևորվում են նաև դասախոսական կազմի գենդերային և տարիքային գործոնները: Այսպես, օրինակ, հիմնական դասախոսական կազմում գերակշռում են միջին տարիքի (35-65 տարեկան) դասախոսները, իսկ վերջին հինգ տարիներին դասախոսական կազմի միջին տարիքը հիսունն է: 2007/08-2011/12 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում կին դասախոսների թիվը հարաբերականորեն կայուն է և կազմում է գրեթե 52%:

ԵՊՀ-ում գործում են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և պահպանմանը: Այս գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը: «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգը» գործել է 1997-ից (13.02.1997 թ.), որը լրամշակվել է 2000 թ-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999 թ.) պահանջներին համապատասխան (18.05.2000 թ.): Նշված կարգերի գործադրման ընթացքում բացահայտված թերությունները շտկելու նպատակով պլանավորվել էին մի շարք միջոցառումներ, որոնք արտացոլված են ԵՊՀ ՌԾ-ի խնդիր IV. ա)-ի 2-րդ գործողությունում՝ «Գնահատել կրթական գործընթացի կադրային ապահովվածությունն ըստ կրթական մակարդակների և ծրագրերի» և «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրում՝ «Մշակել և գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի հավաքագրման, նշանակման և առաջխաղացման նոր կարգ՝ մասնագիտական և մանկավարժական հմտություններին ներկայացվող հստակ չափանիշների կազմով» (Խնդիր 2, գործողություն 4.1): Այս գործընթացների իրականացման արդյունքում լրամշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել է (28.06.2012 թ.) «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» նոր կարգը, որը սահմանում է դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) որակական և քանակական բնութագրերը, ինչպես նաև տրամադրում է դասախոսների հետ կնքվող պայմանագրերի ճկուն համակարգը, որոնք բացակայում էին մինչ այդ:

Առաջնորդվելով սույն կարգի հիմնադրույթներով՝ դասախոսական կազմի ընտրության և պաշտոնների տեղակալման մրցույթների կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ստեղծվել և գործում է որակավորման մանդատային հանձնաժողով, որը սահմանում է դասախոսների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը՝ հիմք ընդունելով տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջներին հավակնորդի համապատասխանության գնահատման արդյունքները: Մրցութային ընտրության գերակա

նպատակը համալսարանի հիմնական դասախոսական կազմի ձևավորումն է: Լրացուցիչ դասախոսական կազմի (ժամավճարով, 0,25 կամ 0,5 դրույքաչափով դասավանդողների դեպքում) մրցութային ընտրություն չի անցկացվում. նրանք հրամանագրվում են ԵՊՀ ռեկտորի կողմից մինչև մեկ տարի ժամկետով:

Այս նոր կարգով սահմանվում են նաև պաշտոնների տեղակալման չափանիշները, որոնք ևս ներառված չէին նախորդ վերոնշյալ կարգերում: Այդ չափանիշներն են՝

– պաշտոնի հավակնորդի բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, կոչումը,

– մասնագիտական և մանկավարժական պահանջվող հմտությունները,

– գիտահետազոտական գործունեության արդյունքները,

– որակավորման բարձրացումը և վերաորակավորումը,

– ուսանողական հարցման միջոցով դասախոսի գնահատման արդյունքները (առկայության դեպքում):

Պաշտոնների տեղակալման այս չափանիշները հանդիսանում են դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության հիմքը:

ԵՊՀ-ում դասախոսների մասնագիտական և մանկավարժական առաջընթացի ապահովման միասնական քաղաքականության բաղադրիչներն են՝ դասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման, դասախոսների որակավորման բարձրացման և նրանց աշխատանքի գնահատման ու խրախուսման ընթացակարգերը:

«ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կարգը կարգավորում է նաև դասախոսների մասնագիտական առաջընթացը, քանի որ այստեղ հստակ սահմանված են պրոֆեսորադասախոսական համակազմի տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս, ինչպես նաև տվյալ տարակարգին հավակնելու որակավորման պահանջները: Ըստ կարգի, պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, իսկ դոցենտի թափուր պաշտոնին՝ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Ասիստենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք, իսկ դասախոսի թափուր պաշտոնին՝ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Նշված պահանջները ապահովում են դասախոսների մասնագիտական առաջընթացի «ուղղահայաց ուղին»:

ԵՊՀ-ում դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումները շնորհվում են համաձայն ԲՈՀ-ի կողմից ՀՀ «Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի (հաստատված է ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի հ. 615 որոշմամբ):

ԵՊՀ-ում իրականացվող ուսանողական հարցումների (տե՛ս չափորոշիչ 5.3) արդյունքները նույնպես էական դերակատարություն ունեն դասախոսների մասնագիտական առաջընթացի և խրախուսման գործում: Մասնավորապես, հարցման վերջին տարիների արդյունքում դասախոսների ստացած միջին միավորը հաշվի է առնվում մրցութային ընտրության և

առաջխաղացման գործընթացում, իսկ խրախուսման նպատակով՝ աշխատավարձի հավելավճարի հաշվարկման ժամանակ:

ԵՊՀ դասախոսների կրթական և գիտամանկավարժական գործունեությունը խթանելու նպատակով համալսարանում 2007/08 ուստարվանից գործում է դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը, որը բազմիցս լրամշակվել է (վերջին անգամ հաստատվել է 17.12.2012 թ.): Համաձայն այդ կարգի՝ դասախոսի աշխատավարձը բազային աշխատավարձի և հավելավճարի գումարն է: Վերջինս գոյանում է ուստարվա արդյունքներով՝ ամփոփելով դասախոսի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև հաշվի առնելով ուսանողների և ֆակուլտետի ղեկավարության գնահատման արդյունքներին համապատասխան ստացած միավորները:

Վերոնշյալ ընթացակարգերի հետագա կատարելագործումը կնպաստի ԵՊՀ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականության արդյունավետ կիրարկմանը:

Հարկ է նշել, սակայն, որ ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման հաջողված փորձի հետ մեկտեղ ԵՊՀ-ում դեռևս չկան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող կոնկրետ պահանջներ ըստ կրթական ծրագրերի: Նախատեսվում է, որ վերոնշյալ կարգի ընդհանուր դրույթներից ելնելով՝ ԵՊՀ ամբիոնները պետք է մշակեն իրենց կոնկրետ կրթական ծրագրերը սպասարկող դասախոսների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող հստակ պահանջներ, որոնց համար հիմք են հանդիսանալու տվյալ ծրագրի կրթական վերջնարդյունքները:

Կրթական ծրագրերը համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմով ապահովում են ԵՊՀ ֆակուլտետներն ու ամբիոնները: Յուրաքանչյուր ամբիոն, քաջատեղյակ լինելով իր ռեսուրսներին, կարողանում է ապահովել ուսումնական մոդուլները համապատասխան հիմնական դասախոսական կազմով, ինչպես նաև կազմակերպել նրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոխարինումը: Կրթական ծրագրերը երիտասարդ դասախոսներով համալրելու ԵՊՀ ռազմավարություններից մեկն է ասպիրանտների նպատակային պատրաստումը: Կրթական ծրագիրը սպասարկող դասախոսական կազմն ընտրվում է ծրագրի ղեկավարի և ծրագիրը սպասարկող ամբիոնի վարիչի կողմից:

ԵՊՀ-ում դասախոսական կազմով ապահովվածության կայունությունը երաշխավորվում է մի շարք նորմատիվներով և ընթացակարգերով:

Դրանցից մեկը վերոնշյալ ԵՊՀ դասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման նորացված կարգն է: Այդ փաստաթուղթը որոշակի երաշխիքներ է նախատեսում կրթական գործընթացում դասախոսական կազմի երկարաժամկետ ընդգրկվածությունն ապահովելու համար: Այսպես, ըստ կարգի, դասախոսների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 3-5 տարի ժամկետով: Գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան հաստիքի առկայության պարագայում՝ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո՝ դասախոսի հետ, առանց

մրցութային ընտրության, մեկ անգամ կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով:

ԵՊՀ կրթական ծրագրերը համապատասխան դասախոսական կազմով ապահովելու համար նախատեսված են նաև աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն: Գործում է նաև ժամավճարային հիմունքով և հրավիրյալ դասախոսների համակարգը, ինչը թույլ է տալիս երաշխավորելու կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

ԵՊՀ-ում կրթական ծրագրերի կադրային ապահովվածության կայունությունը երաշխավորող մյուս ընթացակարգը «Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերն» են (վերջին վերամշակմամբ հաստատվել է 20.04.2012 թ.): Այս փաստաթղթում դասախոսի գիտամանկավարժական գործունեության տարբեր ձևերի համար սահմանված են ժամային որոշակի նորմեր, որոնց հիման վրա ձևավորվում է տվյալ տարակարգի դասախոսի մեկ ուսումնական տարվա անհատական բեռնվածությունը:

Ուսումնական գործընթացին արդյունավետ կերպով օժանդակելու համար ԵՊՀ-ում առկա է նաև ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորման նորմատիվային բազա: Այսպես, ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի հաստիքների ձևավորման նորմերում (վերջին վերամշակմամբ՝ ռեկտորի 11.05.2012 թ-ի հրամանով) սահմանված են համապատասխան տարակարգերը, թվաքանակը, պահանջները և աշխատանքային պարտականությունները: Ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի որակը և համապատասխանությունը կրթական ծրագրերի պահանջներին ստուգելու համար յուրաքանչյուր ուստարվա վերջում անց է կացվում ուսումնաօժանդակ կազմի ատեստավորում:

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԵՊՀ-ում գործում են դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնցից կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները:

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի (28-րդ հոդված, 4-րդ կետ), ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսանողական հարցումների վերաբերյալ օրինակելի կանոնակարգի դրույթները՝ ԵՊՀ-ն 2002 թ-ին ներդրեց դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների համակարգը՝ որպես ուսանողների կողմից դասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման մեխանիզմ (24. 05. 2002 թ.): Այդ մեխանիզմի կիրառումը նպաստեց ԵՊՀ դասախոսական հանրության շրջանում նոր դիրքորոշումների ձևավորմանը, ինչպես նաև դասավանդման գործընթացի բարելավմանը: Սակայն, այդ ժամանակ նկատելի էին նաև որոշ թերություններ՝ կապված հարցումների մեթոդաբանության և հուսալիության, ինչպես նաև ստացված արդյունքների վերլուծության և օգտագործման հետ:

Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները (հարցաշարը) պարբերաբար լրամշակվել և կատարելագործվել են (2003, 2004, 2009, 2010, 2011): Մասնավորապես, հարցումների արդյունքների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով նոր կանոնակարգում սահմանվեց հարցման ենթակա ուսանողների թվաքանակի առնվազն 2/3-ի մասնակցություն: Փոփոխությունները վերաբերում էին նաև հարցման արդյունքների քննարկումների կանոնակարգմանը և դրանց արդյունավետ կիրառմանը: Համաձայն վերոնշյալ կանոնակարգում կատարված փոփոխությունների, ինչպես նաև անաչառությունն ապահովելու նպատակով՝ հարցումները և տվյալների մշակումն իրականացվում է կենտրոնացված, հարցման անցկացման պայմանների և արդյունքների վերլուծության միասնական չափանիշների հիման վրա: Հարցման արդյունքները քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների գիտական խորհուրդների, այնուհետև ԵՊՀ ԳԽ նիստերում:

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ 2010-ին ընդունվեց դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման նոր՝ լրամշակված կանոնակարգը (ԵՊՀ ԳԽ որոշում, 17.06.2010 թ.), վերանայվեց և ամբողջովին լրամշակվեց հարցաշարը: Նոր կանոնակարգն առավել մանրամասն է լուսաբանում ուսանողական հարցման անցկացման, արդյունքների մշակման և դրանց օգտագործման ընթացակարգերը: Քննարկման արդյունքներն օգտագործվում են ինչպես դասավանդման մոտեցումները և կիրառվող մեթոդները կատարելագործելու, այնպես էլ դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակներով (տե՛ս չափորոշիչ 5.6):

2011/12 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին մասնակցել է ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողական համակազմի (մոտ 18000 ուսանող) 77%-ը: Գնահատվել է 6700 դասընթացներում պարապող դասախոսների դասավանդման որակը: Հինգ բալանոց համակարգում հարցման միջին գնահատականը ամբողջ համալսարանի մասշտաբով կազմել է 4,53 (հարցման արդյունքները մանրամասն ներկայացվում են հարցումների վերաբերյալ տարեկան հաշվետվությունում):

Ամփոփելով ուսանողական հարցումների անցկացման ԵՊՀ 10-ամյա փորձը՝ կարելի է արձանագրել, որ հարցումների արդյունքների վերլուծությունը և բարելավող միջոցառումների իրականացումը նպաստել են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը: Հարցման արդյունքների օգտագործման մեխանիզմը կանոնակարգված է և առավելապես կենտրոնանում է դասախոսների գնահատման վրա, մինչդեռ դասավանդման մոտեցումների և մեթոդների բարելավման, վերանայման և մասնագիտական հմտությունների զարգացման խնդիրները ետին պլանում են: Հարցման միջոցով ստացված անհատական տվյալները պետք է արդյունավետ կերպով կիրառվեն դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացման գործընթացում: Այդ արդյունքների վերլուծությունը պետք է հիմք հանդիսանա նաև դասախոսների կատարելագործման ծրագրի համար, ինչը դեռևս հետևողականորեն չի իրականացվում: Հարկ է նշել նաև, որ ուսանողական հարցման արդյունքները դասախոսների կողմից հաճախ միանշանակ չեն ընդունվում: Ըստ նրանց, ուսանողները երբեմն առաջնորդվում են սուբյեկտիվ մոտեցումներով, ինչն ազդում է դասախոսի օբյեկտիվ գնահատականի վրա:

Դասալսումներն իրականացնում են ամբիոնի վարիչները և պրոֆեսորները, որոնց իրականացման համար ուսումնական բեռնվածությունում հատկացվում է համապատասխան ժամաքանակ: Սակայն դասալսումների իրականացման, արդյունքների վերլուծության և դրանց կիրառման համար դեռևս մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր, անցկացվում են անկանոն և առանց հստակ պարբերականության, և քանի որ կանոնակարգված չեն, ըստ էության, ունեն ցածր արդյունավետություն:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԵՊՀ-ն նախատեսել է մի շարք լրացուցիչ միջոցառումներ, որոնք ուսանողական հարցումներին և դասալսումներին զուգահեռ կապահովեն դասախոսների համակողմանի գնահատումը, ինչպես նաև դասավանդման որակի շարունակական բարելավումը: Դրանցից են, մասնավորապես, անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների կողմից պարբերաբար գնահատումը, ինչպես նաև ինքնագնահատման գործընթացի ներմուծումը, որոնք համալսարանում կստեղծեն աշխատանքի նկատմամբ նոր մոտեցում և կապահովեն դասավանդման գործընթացի առավել թափանցիկություն: Այդ միջոցառումները նախատեսված են Համաշխարհային բանկի վերոնշյալ դրամաշնորհային ծրագրի «Դասախոսական կազմի որակի գնահատման չափանիշների սահմանում և որակի ապահովման ընթացակարգերի ներմուծում» խնդրում (գործողություններ՝ 4.3-4.7):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:**

Բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը և նրան շարունակական կատարելագործման հնարավորությունների տրամադրումը ԵՊՀ որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն սկզբունքն է (ԵՊՀ ՌԾ, ռազմավարական նպատակ IV): Այդ նպատակով ԵՊՀ-ում ստեղծվել և գործում են դասախոսների որակավորման բարձրացման տարբեր ծրագրեր:

Դեռևս 1968 թ-ից ԵՊՀ-ում գործել է դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետը: Վերջին տասնամյակում դասախոսների կրթական կարիքների բացահայտումը և դրան համապատասխան որակավորման բարձրացման ծրագրերի իրականացումը կատարվել է երեք էտապով՝ 2002-2007 թթ., 2007-2011 թթ. և 2011-2016 թթ.: Որակավորման բարձրացման ծրագրերի իրագործման համար 2002 թ-ին ԵՊՀ-ում ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում՝ Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն (ՀԼԿՎ):

ՀԼԿՎ գործունեության առաջին էտապում (2002-2007 թթ.) դասախոսական կազմի արտաքին գնահատման բացակայության պայմաններում կարևորվում էր ներքին գնահատումը, որը մեկնարկեց 2002 թ-ից և իրականացվում է պարբերաբար՝ 5-ամյա շրջափուլով: ՀԼԿՎ-ն ֆակուլտետների և ամբիոնների հետ համատեղ կատարած ուսումնասիրությունների արդյունքում բացահայտեց դասախոսների կատարելագործման կարիքները, որոնց բավարարման նպատակով մշակվեց դասախոսների որակավորման բարձրացման առաջին հնգամյա հեռանկարային պլանը (26.12.2002 թ.), ինչպես նաև հաստատվեց ծրագրերի ցանկն ըստ

առանձին մասնագիտությունների (12.12.2002 թ.): Այս ընթացքում մշտապես կատարվող ներքին գնահատման աշխատանքների շնորհիվ մասնագիտությունների ուսումնական պլանները և ծրագրերը պարբերաբար թարմացվում և վերանայվում էին թե՛ բովանդակային, թե՛ կազմակերպական առումով:

Երկրորդ էտապում (2007-2011 թթ.) դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերն առավելապես կողմնորոշվեցին դեպի Բոլոնիայի գործընթացի համատեքստում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումները: Այդ դիտանկյունից ելնելով՝ վերամշակվեցին դասախոսների կատարելագործման ծրագրերը բոլոր մասնագիտությունների գծով, հաստատվեց դասախոսական կազմի որակավորման բարձրացման երկրորդ հնգամյա պլանը (29.11.2007 թ.): Այս ժամակահատվածում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներն ընդլայնվեցին՝ ապահովելով դասախոսական կազմի կատարելագործումը չորս հիմնական ուղղություններով՝ որակավորման բարձրացում մասնագիտության շրջանակներում, մանկավարժական-հոգեբանական կոմպետենցիաների կատարելագործում, ուսումնական գործընթացի իրականացում կրեդիտային համակարգով և համակարգչային ուսուցում: Նշված ժամանակահատվածում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրով ԵՊՀ-ում վերապատրաստվել է մոտ 2,5 հազար ունկնդիր:

Աղյուսակ 5.2. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվն ըստ ծրագրերի (2002-2011 թթ.)

| Հ/հ | Կրթական ծրագրի և/կամ դասընթացի անվանումը | Դասախոսների թիվը | | |
|---|---|---|---|---|
| | | ընդամենը | ԵՊՀ | այլ բուհեր |
| 1. | Որակավորման բարձրացում առանձին մասնագիտությունների գծով | 1 827 | 1 672 | 155 |
| 2. | Մանկավարժական-հոգեբանական կոմպետենցիաների կատարելագործում | 444 | 284 | 160 |
| 3. | Ուսումնական գործընթացի իրականացում կրեդիտային համակարգով | 120 | 119 | 1 |
| 4. | Համակարգչային ուսուցում | 93 | 93 | - |
| | **Ընդամենը** | **2 484** | **2 168** | **316** |

ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման տասնամյա փորձի (2002-2011 թթ.) արդյունքում համալսարանում ձևավորվել է որակավորման բարձրացման ներքին մշակույթ բոլոր մակարդակներում: Ներքին գնահատման արդյունքում՝ միաժամանակ վեր են հանվել նաև մի շարք թերություններ: Բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղիներն ամրագրվեցին ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում՝ «Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան» («Որակյալ կադրային ներուժ» ռազմավարական նպատակի IV ա) խնդիր):

Այս դրույթն ուղենիշ ունենալով՝ մշակվեց «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը» (18.11.2010 թ.) և «Ծրագրի իրականացման կանոնակարգը» ( 07.07. 2011 թ.):

Դասախոսների որակավորման բարձրացման երրորդ փուլում, որը մեկնարկել է 2011/12 ուստարվանից, ԵՊՀ դասախոսական կազմը հնարավորություն ունի ձեռք բերելու անհատական հետաքրքրություններով ու կրթական ծրագրերի պահանջներով պայմանավորված կոմպետենցիաներ: Նոր ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասերից՝ կրթական և հետազոտական-մեթոդական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հնգամյա ժամկետում՝ համաձայն ունկնդրի որակավորման բարձրացման անհատական ծրագրի: Դասախոսը հնգամյա ծրագրի կատարման արդյունքում պետք է կուտակի առնվազն 30 կրեդիտ հետևյալից՝

- ակադեմիական միջավայրում անգլերենով հաղորդակցվելու հմտություններ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում ուսումնական գործընթացում,
- մանկավարժական-հոգեբանական հմտություններ,
- կրթագիտական տվյալ բնագավառի ժամանակակից գիտելիքի իմացություն,
- հետազոտական և մեթոդական գործունեություն,
- հիմնական կրթական ծրագրից դուրս ակտիվություն:

Ընդ որում, ծրագրի արդիականության կարևոր ցուցանիշ է կրեդիտային համակարգի երկու հիմնական սկզբունքների ներառումը. ծրագիրը դասախոսին հնարավորություն է տալիս ոչ միայն կուտակելու կրեդիտներ, այլև՝ փոխանցելու: Եթե դասախոսը կատարելագործվել է նաև հիմնական ծրագրից դուրս, ապա նրա արդյունքները ճանաչվում են՝ համապատասխան կրեդիտների շնորհմամբ: Երրորդ փուլում ծրագրի իրականացման մեկուկեսամյա արդյունքները և ունկնդիրների շրջանում իրականացված հարցումների վերլուծությունը ցույց են տալիս, որ ծրագիրը հիմնականում ապահովում է ակնկալվող կոմպետենցիաների ձեռքբերումը դասախոսների կողմից:

Միաժամանակ, արդեն բացահայտվել են նաև ծրագրի մի շարք թերություններ, որոնցից են՝ դասավանդողների վերապատրաստման կոմպոնենտի բացակայությունը, առանձին մոդուլների գնահատման ոչ հստակ չափանիշները, կրթական միջավայրի սահմանափակությունը և այլն: Քանի որ վերոնշյալ թերություններից առաջինը մշտապես արձանագրվել է ծրագրի ներքին գնահատման ժամանակ, ուստի ԵՊՀ ՌԾ-ում ներառվել է հետևյալ դրույթը՝ «Մշակել և իրականացնել նոր՝ վերապատրաստողների վերապատրաստման կրթական ծրագիր՝ համագործակցելով արտերկրի համապատասխան հաստատությունների հետ» (Խնդիր IV.ա), 7-րդ գործողություն):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ **ռազմավարական նպատակների իրականացման համար:**

Վարչական և ուսումնաօժանդակ կառույցների գործունեության արդյունավետության շարունակական կատարելագործումը ամրագրված է ԵՊՀ ՌԾ-ի VIII դ) և է) խնդիրների գործողություններում:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը, աշխատողների պարտականությունների սահմանումն ըստ պաշտոնների, ընտրությունը, առաջխաղացումը և ատեստավորումը կարգավորվում են ԵՊՀ կանոնադրությամբ և առանձին ստորաբաժանումների կանոնադրություններով: ԵՊՀ-ն ներկայումս ունի շուրջ 330 վարչական աշխատող:

ԵՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակն ապահովվում է մի շարք մեխանիզմներով, դրանցից են՝ վերապատրաստումը, ատեստավորումը և ստաժավորումը:

Համալսարանում բազմաստիճան կրթության անցման, ընդունելության կառավարման բարելավման, դասախոսական կազմի որակի բարձրացման և ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի ներդրման նպատակով՝ ԵՊՀ վարչական կառուցվածքում վերջին տարիներին ստեղծվել են նաև մի շարք ստորաբաժանումներ համապատասխան աշխատակազմերով: Դրանք են՝ Մինչհամալսարանական կրթության ու Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունները և Որակի ապահովման կենտրոնը:

Վարչական աշխատակիցների մասնագիտական որակները բարձրացվում են վերապատրաստման մի շարք դասընթացներով՝ համակարգչագիտություն, գործավարություն, Moodle կառավարման համակարգ, տեղեկատվության պաշտպանություն, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և այլն:

Ուսումնաօժանդակ աշխատակազմը գործում է ֆակուլտետային կառույցներում և հաշվետու է ֆակուլտետի ղեկավարությանը: Ընդհանուր առմամբ, ԵՊՀ ֆակուլտետներն ունեն շուրջ 450 ուսումնաօժանդակ աշխատող (տե՛ս աղյուսակ 5.1): Կրթական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով նախորդ ուստարում հստակեցվել է ԵՊՀ ուսումնաօժանդակ կազմի նոր հաստիքակազմը՝ օպերատոր, գործավար, ուսումնական լաբորատորիայի վարիչ, լաբորանտ, ավագ լաբորանտ, ուսումնական վարպետ, պրեպարատոր և սահմանվել են հաստիքների ձևավորման մեխանիզմները և նորմատիվները, ինչպես նաև աշխատողների պարտականությունները: Սահմանված են ուսումնաօժանդակ աշխատողների հիմնական գործառույթներն ըստ առանձին տարակարգերի: Ուսումնաօժանդակ կազմի որակի բարելավման նպատակով ամեն տարի անց է կացվում բոլոր տարակարգերի աշխատողների ատեստավորում, որի արդյունքներից ելնելով՝ կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

ԵՊՀ վարչական կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է արդեն հիշատակված շրջանավարտների բավարարվածության հարցումների օգնությամբ: 2011 թ-ի այս հարցման արդյունքները ներկայացված են նկար 5.1-ում և 5.2-ում:




Նկ. 5.1. ԵՊՀ շրջանավարտների բավարարվածությունը վարչական կազմից




Նկ. 5.2. Ուսանողների բավարարվածությունը ֆակուլտետի ղեկավարությունից ըստ կրթական աստիճանների

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր առմամբ, ԵՊՀ շրջանավարտները 5 բալանոց սանդղակով բարձր են գնահատում ֆակուլտետի ղեկավարության գործունեությունը, որը ներառում է ֆակուլտետնի դեկանի և դեկանատի աշխատանքը: Բարձր է գնահատվում նաև ԵՊՀ ղեկավարության աշխատանքը, որն իրականացվում է համապատասխան վարչական կառույցների ներուժով:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ն ունի դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջխաղացման հստակ կանոնակարգված ընթացակարգեր և չափանիշներ, որոնք երաշխավորում են կրթական ծրագրերի ապահովվածությունն անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետներով:
2. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 10 տարուց ավելի ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական հարցումները ձևավորել են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մշակույթ:
3. ԵՊՀ-ում գործում է դասախոսական կազմի որակավորման բարձրացման կառույց, որն իրականացնում է դասախոսների վերապատրաստման (ստրուկտուրացված) ծրագրեր՝ դասախոսների անհատական պահաջմունքներին և կարիքներին համապատասխան:
4. ԵՊՀ-ում իրականացվում է դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական արդիական ծրագիր՝ հիմնված կրեդիտային համակարգի վրա, որը հնարավորություն է տալիս կատարելագործելու պրոֆեսորադասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան, ապահովելու դասախոսների ակադեմիական շարժունությունը և ստեղծելու որակի հավաստման ներքին մեխանիզմներ:
5. 2007/08 ուստարվանից ԵՊՀ-ում գործող դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը խթանում է մասնագիտական, մանկավարժական և հետազոտական ոլորտներում դասախոսների գործունեության արդյունավետության բարձրացումը:

### Բացթողումները

1. Չնայած այն փաստին, որ ԵՊՀ-ում գործում է դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր, սակայն այստեղ դեռևս ներառված չեն այնպիսի մոդուլներ, որոնք կնպաստեն դասախոսական կազմի նեղ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների զարգացմանը:
2. Ուսանողական հարցումների արդյունքները դեռևս լիարժեք չեն օգտագործվում դասախոսների վերապատրաստման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու համար:
3. Արդյունավետ չեն գործում ուսումնական գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավումը խթանող մեխանիզմները, բացակայում է սկսնակ դասախոսների մենթորության համակարգը:
4. Դասախոսական կազմի գնահատումը հիմնված է միայն ուսանողական հարցումների արդյունքների վրա, դեռևս չեն գործում դասախոսների ինքնագնահատման և անմիջական ղեկավարի ու գործընկեր դասախոսների գնահատումների մեխանիզմները:

5. Բացակայում են վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշները և կատարելագործման մեխանիզմները:

## ՉԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

## ՄՈՒՀ-Ն ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՊՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Գիտահետազոտական գործունեությունը և վերջինիս կապն ուսումնառության հետ եղել և մնում է ԵՊՀ առաջնահերթություններից, ինչն ամրագրված է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: Համաձայն ՌԾ-ի, բարձրակարգ հետազոտությունները և նորարարությունը ԵՊՀ երեք ռազմավարական նպատակներից երկրորդն է և ձևակերպված է ռազմավարական չորս խնդիրներով՝

1. Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:
2. Խթանել համալսարան-տնտեսություն հետազոտական համագործակցության զարգացումը, հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման նպատակով ձևավորել գիտության ինովացիոն ենթակառուցվածք:
3. Խթանել Համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Համալսարանի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին:
4. Վերակառուցել Համալսարանի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների համաեվրոպական հենքի պահանջներին համապատասխան:

ՌԾ-ում այդ խնդիրների իրագործումը մանրամասնեցված է կոնկրետ գործողություններով:

ԵՊՀ-ն բազմապրոֆիլ հետազոտական հաստատություն է, որտեղ հետազոտություններ են կատարվում հասարակական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար, բնագիտական և ֆիզիկա-մաթեմատիկական մասնագիտություններով (առկա գիտական ուղղությունների լրիվ ցանկը տես «Երևանի պետական համալսարանի գիտական գործունեության առանցքային ցուցանիշները (2000-2010)», Երևան, 2010, հետազայում՝ ԳԳԱՑ, էջ 30): Համալսարանում ներկայումս գործում են Հայագիտական հետազոտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 9 գիտական կենտրոն և 24 բազային լաբորատորիա, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 34 դրամաշնորհ (գրանտ), միջպետական ֆինանսավորմամբ՝ 1 Հայ-ռուսական և Հայ-Բելառուսական 5 դրամաշնորհ: Մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականների կողմից կատարվում է 13 հատուկ դրամաշնորհ:

ԵՊՀ գիտահետազոտական քաղաքականության ընթացիկ ղեկավարումն իրականացվում է գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի, իսկ ֆակուլտետային մակարդակում՝ դեկանների կողմից: Հետազոտական աշխա-

տանքների ղեկավարման ենթակառուցվածքը ներառում է գիտակազմակերպական բաժինը, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինները:

ԵՊՀ-ում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես կանոն, հիմնարար բնույթ են կրում, իսկ դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի և ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման համար ավելի ու ավելի մեծ չափով են օգտագործվում են համացանցի ընձեռած հնարավորությունները: Կատարվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում և հրապարակումներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները:**

Համալսարանի հետազոտական գործունեության երկարաժամկետ ռազմավարությունը տարիների ընթացքում ձևավորված հետազոտական դպրոցների պահպանումն ու հետագա զարգացումն է: Հիմնարար հետազոտություններն իրականացվում են մասնագիտական ամբիոններում և գիտահետազոտական ստորաբաժանումներում (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ):

Այստեղ նախ և առաջ հարկ է նշել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի թեմատիկան ընդգրկում է հայ ազգային ինքնության խնդիրները, հայ հոգեկերտվածքի և հոգեբանական առանձնահատկությունները, հայ հնագիտությունը, հայ-օսմանական և հայ-վրացական կապերը և այլն: Վերջին տարիներին արագ առաջընթաց են ապրում նաև օսմանագիտությանը և եգիպտագիտությանը նվիրված հետազոտությունները: ԵՊՀ-ն ներկայումս այդ ուղղություններում կատարվող հետազոտությունների առաջատար կենտրոնն է երկրում (ԵՊՀ գործունեությունը 2010-2011 ուստարում, ռեկտորի հաշվետվությունը, էջ 23):

Գիտահետազոտական մյուս խոշոր ստորաբաժանումը Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնն է, որի պրոբլեմային լաբորատորիան հիմնադրվել է դեռևս 1959 թ-ին: Կենտրոնում տեսական և փորձարարական աշխատանքներ են տարվում բարձր զգայնությամբ օժտված տարբեր գազային տվիչների, արևի էներգիան ջրածնի քիմիական էներգիայի, ֆոտոէլեկտրաքիմիական փոխակերպիչների, ծակոտկեն և նանոկառուցվածքների հիման վրա նոր կիսահաղորդչային սարքերի մշակման և ստեղծման ուղղությամբ և այլն: ԵՊՀ-ն ունի նաև միջազգային բարձր վարկանիշի մաթեմատիկական դպրոց, որի հետազոտական հետաքրքրություններն ընդգրկում են ֆունկցիաների և շարքերի տեսությունը, դիֆերենցիալ հավասարումների տեսությունը, երկրաչափությունը և այլն: Երկար տարիներ գիտահետազոտական գործունեության բարձր մակարդակ են պահպանում Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնը, Տեսական ֆիզիկա, Պինդ մարմնի ֆիզիկա, Քիմիական և կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտություններ, Ազոտ պարունակող միացությունների կենսաքիմիա, Ընդհանուր կենսաբանություն, Ենթաբջջային կառուցվածքների կենսաֆիզիկա և նս մի շարք գիտահետազոտական լաբորատորիաները:

ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների (ինստիտուտներ, կենտրոններ և լաբորատորիաներ) և դրամաշնորհների լրիվ ցանկը ներկայացված է հավելված 6.1-ում: Հակիրճ տեղեկատվություն դրանց կազմի և հետազոտական խնդիրների մասին կարելի է ստանալ ԵՊՀ http://faculties.ysu.am/ysu_science/hy/1340725654 կայքից:

Միջնաժամկետ ծրագրերը լուծում են երկարաժամկետ ռազմավարական ուղղություններում ընթացիկ աշխատանքների պլանավորման ու կոնկրետացման խնդիրները մոտակա երեքից հինգ տարիների համար: Հեռանկարային նոր ուղղությունների ընտրության և համապատասխան հետազոտական ստորաբաժանումների (որպես կանոն՝ լաբորատորիաների) կազմակերպման խնդիրները ևս մտնում են միջնաժամկետ ծրագրերի մեջ: Վերջին մի քանի տարիներին ԵՊՀ-ում ստեղծվել է 5 նոր լաբորատորիա: Հետերոցիկլիկ ամինաթթուների սինթեզի գիտահետազոտական լաբորատորիայում, որը ստեղծվել է 2009 թ-ին, մշակվել է α – ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզի ունիվերսալ լաբորատոր տեխնոլոգիա և սինթեզվել են դեղագործական նշանակության մոտ 30 հետերոցիկլիկ տեղակալված օպտիկապես ակտիվ (S) և (R) α – ամինաթթուներ և այլն:

Քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման լաբորատորիայում (ստեղծված 2010 թ-ին) ուսումնասիրվում են առանձին ատոմներում և մոլեկուլներում քվանտային միկրոպրոցեսների՝ լազերային ճառագայթման միջոցով ղեկավարման օրինաչափությունները, որոնք հիմնարար տարրն են մի շարք բարձր տեխնոլոգիական սարքերում ընթացող ֆիզիկական պրոցեսների: Ուսումնասիրվում են նաև գերհաղորդականության և գերհոսունության քվանտային մակրոերևույթներն աստղաֆիզիկական օբյեկտներում, նանոչափ կառուցվածքների աճեցման հնարավորությունները կիսահաղորդչային թաղանթներում և այլն:

Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի և Մեխանիկայի ամբիոնի գիտահետազոտական լաբորատորիաներում (ստեղծված 2012 թ-ին) լուծվում են խնդիրներ հարմոնիկ անալիզի, ոչ գծային մոտարկումների, ֆուրյեի կրկնակի շարքերի և կոնտակտային փոխազդեցության, մեխանիկական համակարգերի օպտիմալ ղեկավարման, ֆիզիկամեխանիկական դաշտերի փոխազդեցության, դիֆերենցիալ խաղերի ոլորտներում և այլն:

Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիայի (ստեղծված 2011թ-ին) հետազոտական ուղղություններն են՝ անձի ուսումնասիրման ժամանակակից մեթոդիկաների տեղայնացման գործընթացը, սոցիալ-մշակութային փոփոխման պայմաններում անձի արժեքները, համոզմունքները և նույնականացման միտումները, միջմշակութային և միջազգային համագործակցությունը և այլն:

ԵՊՀ հետազոտություններում զգալի տեղ են գրավում դրամաշնորհները (գրանտները), որոնք հնարավորություն են տալիս ինչպես խորացնելու, այնպես էլ ընդլայնելու հետազոտությունների դաշտը (Հավելված 6.1, դրամաշնորհների ցանկ), փորձարկելու նոր թեմաների զարգացման հնարավորությունները, մասնավորապես՝ ուսանողների ներգրավման ճանապարհով: Դրանք համալսարանական ամբիոնների, գիտահետազոտական կենտրոնների և լաբորատորիաների ամենամյա պլանների հետ միասին ձևավորում են ԵՊՀ կարճաժամկետ հետազոտական ծրագրերը:

ԵՊՀ հետազոտական գործունեությունն ավանդաբար ակտիվ է բնագիտական ոլորտում, որտեղ կատարվում են նաև ֆինանսական ներդրումներ: Զգալի ֆինանսավորմամբ

ծրագրերից կարելի է առանձնացնել ուսումնական և գիտական լաբորատորիաների վերազինման ծրագիրը, որը գործում է 2010 թ-ից: Ծրագիրը ֆինանսավորում են ԵՊՀ-ն (տարեկան 50-60 մլն դրամ), «Լույս» հիմնադրամը (տարեկան 100 մլն դրամ) և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (տարեկան 60-68 հազար ԱՄՆ դոլար): Դրա շնորհիվ ԵՊՀ բնագիտական լաբորատորիաներն ստանում են արդիական սարքավորումներ, սովորողներին հնարավորություն տալով ժամանակակից պահանջներին համապատասխան մասնակցելու հետազոտական աշխատանքների՝ կենսաբանության, ֆիզիկայի, քիմիական գիտությունների փորձարարական մի շարք ոլորտներում:

ԵՊՀ-ի հետազոտական ակտիվությունը, չափված գիտական հրատարակումների և դրանց վրա կատարված հղումների ցուցանիշով, տարեցտարի աճում է (տե'ս Հավելված 6.2): Այս հաջողությանը ԵՊՀ-ն հասել է հիմնարար բնույթի հետազոտություններում ԵՊՀ առաջնահերթությունների հստակեցման, արդյունավետ վարչարարության և կառավարման, ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասնագիտական կառույցների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ:

Հիմնարար հետազոտությունների ոլորտում առաջատարի դիրքերի պահպանումը հանրապետությունում և միջազգային վարկանիշի ամրապնդումը ԵՊՀ հետազոտական գործունեության հիմնական գերակայություններն են: ԵՊՀ հետազոտական հավակնությունների դաշտը, այնուամենայնիվ, սահմանափակված չէ միայն հիմնարար բնույթի աշխատանքներով: Որպես հիմնարար հետազոտությունների շարունակում ԵՊՀ-ն նախատեսում է ինտենսիվացնել Համալսարան-տնտեսություն համագործակցությունը, նպաստել ապրանքայնացմանը միտված մշակումների առևտրայնացմանը, հնարավորության դեպքում կազմակերպել փոքրածավալ փորձնական արտադրություն (ՌԾ, խնդիր II բ):

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ԵՊՀ հետազոտական աշխատանքների ու նորամուծությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ԵՊՀ Կանոնադրությունից, գիտության բազային ու թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման միջոցների բաշխման և տնօրինման պետական կարգերից և ամրագրված են ԵՊՀ կանոնակարգերում և ծրագրային փաստաթղթերում (ՌԾ, Խնդիր II ա)-ի 1, 2 և գ)-ի 4 և 6 կետերը): Դրանք միտված են պահպանելու և զարգացնելու ԵՊՀ-ի ավանդաբար ուժեղ գիտական ուղղություններն ու դպրոցները, արձագանքելու գիտության զարգացման միջազգային տենդենցներին՝ նոր գիտական լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման ճանապարհով:

Առաջնահերթություններն այս բնագավառում կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Հետազոտություններ, որոնք միտված են հանրապետական, Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) և արևմտյան զարգացած երկրների գիտահետազոտական խնդիրների լուծմանը: Դրանք իրականացվում են դրամաշնորհների ու նախագծերի, կարճաժամկետ ու միջնաժամկետ գիտական գործուղումների և միջհամա-

լսարանական պայմանագրերի սահմաններում կատարվող հետազոտական աշխատանքների միջոցով:

2. Հետազոտություններ, որոնք իրականացվում են զարգացող երկրների (Բրազիլիա, Հնդկաստան, Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Իրան, Թուրքիա և այլն) գործընկերների հետ համատեղ և ներառում են, որպես կանոն, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ:

ԵՊՀ-ում գործում են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության 11 մասնագիտական խորհուրդներ, որոնցից 7-ը՝ բանասիրական, սոցիալ-տնտեսագիտական և հումանիտար մասնագիտություններով, 4-ը՝ բնագիտական և ֆիզիկա-մաթեմատիկական մասնագիտություններով (տե՛ս ԳԳԱՑ, էջ 20): Ընդ որում, որոշ խորհուրդներ գործում են մի քանի մասնագիտությունների գծով: ԵՊՀ գիտական հանդեսների շարքը՝

- Proceedings of the Yerevan State University, Physical and Mathematical Sciencies,
- Երևանի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Քիմիա և կենսաբանություն,
- Երևանի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Իրավագիտություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Բանասիրություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Հայագիտություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Փիլիսոփայություն, Հոգեբանություն,
- Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն,

նույնպես միտված է հետազոտությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Նախատեսվում է ամբողջ շարքի հրատարակումը անգլերենով, ինչը հնարավորություն կտա առավել լայնորեն ներկայացնել ԵՊՀ հետազոտական աշխատանքների արդյունքները միջազգային գիտական հանրությանը և բարձրացնել դրանց որակը:

Հետազոտական աշխատանքների կատարմանը օժանդակում են նաև այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են.

- Հետազոտական աշխատանքների արդյունքների ընդգրկումը դասախոսների հավելավճարների որոշման ցուցանիշներում, ինչպես նաև դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքում («Երևանի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ» և «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»՝ հաստատված ԵՊՀ ԳԽ կողմից 2011 և 2009 թթ. համապատասխանաբար):

- Հետազոտական մրցույթների վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան նախագծերը նախապատրաստելու համար խորհրդատվության տրամադրում:
- Վարչական և հաշվապահական ծառայությունների տրամադրում՝ գիտական նախագծերի և դրամաշնորհների կատարման, ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների կազմման ընթացքում:
- Հետազոտական ստորաբաժանումներին և խմբերին ֆինանսական օժանդակության և անտոկոս վարկերի տրամադրում՝ սարքավորումների և նյութերի ձեռքբերման ու գործունեությունների համար՝ մինչև դրամաշնորհների և նախագծերի ֆոնդերի փոխանցում/ստացումը:

Աջակցություն ԵՊՀ դասախոսների գիտական ստաժավորմանը՝ արտասահմանյան գիտահետազոտական կազմակերպություններում և այլն:

Հետազոտական աշխատանքներն էապես խթանվում են նաև Կրթության և գիտության նախարարության և Բարձրագույն որակավորման հանձնաժողովի համապատասխան կանոնակարգերով, որոնք կարևորում են դասախոսի հետազոտական աշխատանքի արդյունքները և ձեռքբերումները դոցենտի և պրոֆեսորի կոչումներ շնորհելիս:

ԵՊՀ հետազոտական բյուջեն ձևավորվում է պետական բազային, պետական թեմատիկ (դրամաշնորհային) և արտաբյուջետային միջոցներից: Դրանց ծավալները վերջին 5 տարիների համար ներկայացված են աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1. ԵՊՀ Գիտահետազոտական գործունեության բյուջեն ըստ տարիների և աղբյուրի (հզ. դրամ)

| Աղբյուր / Տարիներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|
| Պետական բազային ֆինանսավորում | 210 972 | 236 660 | 272 660 | 332 150 | 358 848 |
| Պետական թեմատիկ ֆինանսավորում | 111 778 | 195 888 | 187 137 | 317 445 | 339 960 |
| **Ընդամենը պետական ֆինանսավորում** | 322 750 | 432 548 | 459 797 | 649 595 | 698 808 |
| Արտաբյուջետային ֆինանսավորում | 567 571 | 267 126 | 443 912 | 309 730 | 209 729 |
| **Ընդհանուր հետազոտական բյուջեն** | 890 322 | 699 674 | 903 709 | 959 325 | 908 537 |

Ինչպես երևում է ներկայացված թվերից, գիտության պետական ֆինանսավորման ծավալները կայուն աճել են, մինչդեռ արտաբյուջետային ֆինանսավորումն այդ ընթացքում փոփոխական բնույթ է կրել:

ԵՊՀ բյուջեից վճարվում են վերոհիշյալ 9 գիտական հանդեսների հրատարակման և բաշխման, ինչպես նաև հետազոտական նոր սարքավորումների ձեռքբերման արդեն հիշատակված ծրագրի ծախսերը, գիտական կենտրոնների ղեկավարների աշխատավարձերը: Ֆինանսական օգնություն է ցուցաբերվում նաև ԵՊՀ նոր կենտրոնների կազմավորման աշ-

խատանքներին: Օրինակ, նախորդ տարի 85 մլն դրամ հատկացվել է Հայ-Հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների գերազանցության կենտրոնի ստեղծման համար:

ԵՊՀ-ն շոշափելի օգնություն է ցուցաբերում երիտասարդ հետազոտողների համար թեմատիկ դպրոցների և կոնֆերանսների կազմակերպման աշխատանքներին, օժանդակում նրանց մասնակցությանը միջազգային գիտաժողովներին: Երիտասարդ գիտնականների օժանդակության սոցիալական բաղադրիչներից առավել շոշափելին նրանց շուկայականից զգալիորեն ցածր գներով բնակարանների հատկացումը և այդ նպատակով հիպոթեքային արտոնյալ վարկերի տրամադրումն է:

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու նպատակով՝ հրապարակման նախապատրաստված նյութերը՝ գիտական հոդվածներ, գիտաժողովներում ներկայացվող զեկուցումների թեզիսներ և այլն, քննարկվում են համապատասխան ամբիոնների մասնագիտական սեմինարներում: Մենագրությունները և ուսումնական ձեռնարկները նաև քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում, որից հետո՝ երաշխավորվում հրատարակության: Անհրաժեշտության դեպքում դրանք գրախոսվում են նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) մասնագիտական կառույցների և այլ հետազոտական հաստատությունների հեղինակավոր մասնագետների կողմից:

Հետազոտական արդյունքի որակին էապես նպաստում են հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում հրապարակման բարձր պահանջները՝ հանձինս անկախ գրախոսական ինստիտուտների:

Հեղինակային իրավունք, գիտական հետազոտությունների էթիկա, ակադեմիական ազնվություն հասկացություններն ու դրանց վերաբերյալ միջազգային նորմերն ու չափորոշիչները համակարգված կերպով լուսաբանվում են ասպիրանտների համար նախատեսված «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքները» հատուկ դասընթացի սահմաններում:

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԵՊՀ-ում հետազոտական գործունեության միջազգայնացումը յուրաքանչյուր գիտակրթական ստորաբաժանման (ֆակուլտետ, ամբիոն, ինստիտուտ, կենտրոն, հետազոտական լաբորատորիա, թեմատիկ հետազոտական խումբ) գործունեության գերակայությունն է, ինչը պայմանավորված է գիտության միջազգային բնույթով և հետազոտությունների ֆինանսավորման միջազգային (արտասահմանյան) աղբյուրների առկայությամբ և հասանելիությամբ: Այս ոլորտում ԵՊՀ ռազմավարական խնդիրն է խթանել համալսարանի հետազոտական արդյունքների միջազգայնացման գործընթացները և ապահովել համալսարանի հետազոտական արդյունքների ինտեգրումը Եվրոպական և ԱՊՀ հետազոտական տարածքներին (ՌԾ, Խնդիր II. գ): Այս խնդրի իրագործումը կատարվում է տարբեր ուղղություններով: Առաջին ուղղությունը միջազգային բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական ամսագրերում և հանդեսներում գիտական աշխատությունների հրատարակումն է, ԵՊՀ օտար լեզուներով հանդես-

ների հրատարակումն ու տարածումը արտասահմանյան գիտական կենտրոններում: Երկրորդը ներառում է մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին, դրանց կազմակերպումն ու անցկացումը ԵՊՀ-ում, դասախոսների և գիտաշխատողների գիտական ստաժավորումն արտասահմանյան առաջատար գիտահետազոտական կենտրոններում: Երրորդ ուղղությունը միջհամալսարանական գիտական լաբորատորիաների և խմբերի ձևավորումն է, ԵՊՀ հետազոտական միավորների ընդգրկումը միջազգային գիտական ու գիտատեխնիկական նախագծերում և դրամաշնորհներում:

Արտասահմանյան երկրների գիտական ամսագրերում ԵՊՀ-ի հրատարակած գիտական աշխատանքների թիվը 2010/2011 ուսումնական տարում կազմել է 698 (ընդհանուր հրատարակությունների 2.381 թվից): Ըստ առանձին ոլորտների՝ գիտական հրատարակությունների թիվը վերջին 5 տարիների համար ներկայացված է Հավելված 6.2-ում, որից արտասահմանյան գործընկերների հետ համատեղ հրատարակումների թիվն առանձին ներկայացված է նկ. 6.1-ում:




Նկ. 6.1. ԵՊՀ աշխատակիցների՝ արտասահմանյան գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը վերջին 5 տարիներին

ԵՊՀ-ն կնքված պայմանագրերի և համաձայնագրերի սահմաններում համագործակցում է աշխարհի շուրջ 50 երկրների 200 բուհերի ու գիտական կազմակերպությունների հետ: (ԵՊՀ 2011/2012 ուստարվա գործունեության հաշվետվություն, էջ 116): Համագործակցության պայմանագրերից 12-ը կնքվել են 2011/2012 թվականների ընթացքում: ԵՊՀ-ում արտասահմանյան մասնագետների գիտահետազոտական աշխատանքների համար ստեղծվում են նպաստավոր պայմաններ: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի մասին, օժանդակում դրանց հայտադիմումների ձևակերպմանը: Միջազգային դրամաշնորհների իրականացմանը տրամադրվում է համապատասխան տարածք և օժանդակ տեխնիկա: Պետական բազային ֆինանսավորման ծավալը 2008-2012 թ-ին աճել է 1,7, իսկ պետական թեմատիկ ֆինանսավորմանը՝ 3 անգամ (տե'ս Աղյուսակ 6.1):

ԵՊՀ-ում առկա է մշտապես գործող միջհամալսարանական գիտական խմբերի համագործակցություն՝ մաթեմատիկայի (Ստոկհոլմի թագավորական ինստիտուտի և Լեմանի հա-

մալսարանի հետ), տեղեկատվական տեխնոլոգիաների («Synopsis Armenia» ընկերության հետ), տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի (Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ) բնագավառներում և այլն:

Հետազոտությունների միջազգայնացմանը նպաստող կարևոր գործոններից է միջազգային գիտաժողովների կազմակերպումը ԵՊՀ-ում: Այդ ոլորտի առավել հեղինակավոր և մասշտաբային միջոցառումներից կարելի է նշել 2009 թ-ի Սոցիոլոգիայի 39-րդ միջազգային «Սոցիոլոգիան խաչմերուկներում» կոնգրեսը): Ներկայացված 3 մասնագիտական ոլորտների 19 սեկցիաներում արվել են մոտ 90 թեմաներով զեկուցումներ: Ավելի փոքրաթիվ կազմ ունեցած միջոցառումներից կարելի է նշել «Հեռանկարներ օպտիկայում և ֆոտոնիկայում» 2012 թ. կազմակերպված միջազգային դպրոցը երիտասարդ գիտաշխատողների համար, որտեղ պատվավոր հյուրի կարգավիճակով մասնակցել և 3 դասախոսություններով հանդես է եկել ժամանակակից քվանտային ֆիզիկայի համաշխարհային հեղինակություններց մեկը՝ Մայքլ Բերրին (Michael Berry, University of Bristol, United Kingdom):

ԵՊՀ գիտաշխատողների, դասախոսների, ասպիրանտների և ուսանողների արտասահմանյան գործուղումների ցանկում (2011/2012 ուստարում՝ թվով 510, որից ասպիրանտներ՝ 22, ուսանողներ՝163) կան եվրոպական և ամերիկյան բազմաթիվ առաջնակարգ բուհեր և գիտական հաստատություններ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.5. ՄՈւՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

Լինելով գիտակրթական խոշորագույն հաստատությունը հանրապետությունում՝ ԵՊՀ-ն մեծ կարևորություն է տալիս ուսումնական գործընթացի փոխկապակցմանը հետազոտական գործունեության հետ: ԵՊՀ ՌԾ-ի Խնդիր II.ա)-ն սահմանում է. «Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար»: Այս խնդրի շրջանակներում նախատեսվում է նաև «Ապահովել գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրատուրայի ուսանողների 25 % մասնակցություն»: Այսօր արդեն ԵՊՀ ասպիրանտների մասնակցությունը միայն պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում կազմում է 21,5% (տե'ս չափորոշիչ 4.6-ի վերլուծությունը և հավելված 4.7-ը):

ԵՊՀ ուսանողների հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները ձևավորվում են դեռևս բակալավրիատում՝ ուսումնական ծրագրերում ներառված և հետազոտական էլեմենտներ պարունակող մի շարք ինքնուրույն կուրսային և ավարտական աշխատանքների կատարման միջոցով: Այնուհետև այդ ունակությունները զարգացվում են մագիստրատուրայում՝գիտական սեմինարների և հետազոտական բնույթ կրող մագիստրոսական թեզի կատարման օգնությամբ: ԵՊՀ բոլոր մագիստրոսական ծրագրերը պարունակում են «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» դասընթացը, որտեղ ներկայացվում են տվյալ բնագավառի ժամանակակից հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները: Կրթական երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում, սովորողներն ամբողջությամբ լծվում են գիտական հետազոտությունների կատարմանը՝ գիտության ամենատարբեր բնագավառ-

ներում: ԵՊՀ ասպիրանտուրայում երկու տարի առաջ ներդրվել է կառուցավորված գիտակրթական ծրագիր՝ կրթական և հետազոտական բաղադրիչներով: Այժմ ԵՊՀ-ում ասպիրանտական կրթությունը նպատակաուղղված է դեպի արդյունավետ հետազոտական և մասնագիտական աշխատանք կատարելու ունակ երիտասարդ հետազոտողների պատրաստմանը, նրանց համար ապահովելով՝ ապագա կարիերայի և աշխատանքի ընդլայնված հնարավորություններ ինչպես ակադեմիական միջավայրում, այնպես էլ դրանից դուրս:

ԵՊՀ մագիստրոսական ծրագրերն ունեն հետազոտական ուղղվածություն: Այդ ծրագրերի հետազոտական բաղադրիչը կազմում է ընդհանուր 120 կրեդիտների 40 %-ը: Ասպիրանտական ծրագրերում որոշիչը հենց հետազոտական բաղադրիչն է: Դրանց հետազոտական մասը կազմում է 122 կրեդիտ (ընդհանուր 180-ից):

Վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ-ում գործել են ասպիրանտական ծրագրեր 86 մասնագիտություններով, որոնք ընդգրկում են համալսարանական գիտության գրեթե բոլոր բնագավառները:

Նկ. 6.2-ում ներկայացված է երիտասարդ գիտաշխատողների թիվը՝ ԵՊՀ գիտաշխատողների ընդհանուր թվի համեմատությամբ: Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, երիտասարդ հետազոտողների թիվը վերջին տարիներին անընդհատ աճել է գիտաշխատողների ընդհանուր թվի հետ միասին (չնայած աճի տեմպերը մի փոքր ավելի դանդաղ են, նկատվում է հետազոտողների միջին տարիքի բարձրացում):




Նկ. 6.2. ԵՊՀ հետազոտական նախագծերում ընդգրկված երիտասարդ հետազոտողների թիվն ըստ տարիների

ԵՊՀ-ում գործում են նաև դասախոսների կողմից սովորողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումն ու գիտության թեկնածուի պատրաստումը խրախուսող մեխանիզմներ: Այսպես, «ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում» (2012 թ.) դասախոսների գործունեության արդյունավետության ցուցանիշների կազմում ընդգրկված են նաև դասախոսների այդ գործունեությունը գնահատող ցուցանիշներ: Մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման գործընթացում ակտիվորեն օգտագործվում է նաև ԳԱԱ և այլ հետազոտական հիմնարկների գիտնականների ներուժը:

Հետազոտական աշխատանքներում ուսանողների ակտիվ ներգրավմանը մեծապես նպաստում է նաև ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ): Ամեն տարի ՈւԳԸ-ն կազմակերպում է ուսանողական գիտաժողովներ, որտեղ ներկայացված աշխատանքներից կազմվում և ԵՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ տպագրվում են գիտաժողովի նյութերի ժողովածուներ: Լավագույն ուսանողական աշխատանքները տպագրվում են նաև ԵՊՀ գիտական հանդեսներում: ԵՊՀ-ն օժանդակում է նաև սովորողների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և ամառային դպրոցներին:

ԵՊՀ-ն օժանդակում է նաև գործատուների անմիջական մասնակցությունը համալսարանի հետազոտական և կրթական ծրագրերում: Արդեն մի քանի տարի ԵՊՀ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում գործում է «Սինոփսիս Արմենիա» ընկերության հետ համատեղ իրականացվող ծրագիրը, որը մասնագետներ է պատրաստում գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծման բնագավառում:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ն ունի գիտահետազոտական գործունեության բազմամյա փորձ, հարուստ ավանդույթներ և հետազոտական մեծ ներուժ երկրի մասշտաբով:
2. ԵՊՀ-ն երկրի առաջատար հետազոտական կենտրոնն է հայագիտության, հայոց լեզվի, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, սոցիոլոգիայի և հնագիտության ոլորտներում:
3. Նախորդ 5 տարիներին ԵՊՀ-ում ստեղծվել են գիտահետազոտական նոր ստորաբաժանումներ՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական, Ուժեղ դաշտերի ֆիզիկայի, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների, Էկոլոգիական իրավունքի և Էկոլոգիական անվտանգության կենտրոնները և գիտահետազոտական 5 լաբորատորիաներ:
4. ԵՊՀ-ն հրատարակում է 9 գիտական հանդեսներ (դրանցից 1-ը՝ անգլերեն), որոնք ընդգրկում են իր գիտահետազոտական գործունեության բոլոր հիմնական ոլորտները:
5. Վերջին երկու տարում ՀՀ Գիտության պետական կոմիտեի տրամադրած հետազոտական դրամաշնորհներից ԵՊՀ-ն ստացել է 51-ը, ինչը կազմում է ընդհանուրի 1/3-ից ավելին: Թեմատիկ առումով դրանք ծածկում են ԵՊՀ հետազոտական հետաքրքրությունների ամբողջ սպեկտրը:
6. ԵՊՀ-ում գործում է գիտական աստիճաններ շնորհող 13 մասնագիտական խորհուրդ, ինչը 2-րդ ցուցանիշն է երկրում՝ ՀՀ ԳԱԱ-ից հետո:

**Բացթողումները**

1. Ժամանակակից փորձարարական բազայի/սարքավորումների պակասը բնագիտական հետազոտություններ կատարող մի շարք լաբորատորիաներում: Խնդրի մեղմման նպատակով ներկայումս, համաձայն պայմանավորվածության, նախապատրաստվում է հաջորդ 3 տարիների համար «Լույս» հիմնադրամից 100-միլիոնական դրամ օժանդակություն ստանալու ծրագիր: Մկսել և շարունակաբար ընդլայնում ենք Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի տեխնոլոգիական ելքով հետազոտական աշխատանքների մրցույթին բարձր էֆեկտիվությամբ մասնակցելու աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կծախսվի նաև Հայ ընդհանուր բարեգործական միության կողմից ԵՊՀ-ին տրամադրված 60 000 ԱՄՆ դոլարը:
2. Հետազոտական ծրագրերի կատարման մոնիթորինգի և արդյունքների գնահատման ներքին ընթացակարգերի և չափանիշների ոչ լիարժեքությունը: Ոլորտում համակարգվածության աստիճանի հերթական բարձրացում ապահովելու նպատակով՝ ԵՊՀ հիմնական ստորաբաժանումներում մանրամասն քննարկվել և ԵՊՀ խորհրդում արդեն հաստատման է արժանացել ԵՊՀ գիտաշխատողների ատեստավորման կարգը: Այն ենթադրում է նաև լաբորատորիաների վարիչների ատեստավորման անհրաժեշտություն:
3. Դեռևս ցածր է դասախոսների հետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմների արդյունավետությունը, դասախոսական կազմի մի զգալի հատվածը ներգրավված չէ արդիական հետազոտական աշխատանքներում: Իրավիճակի բարելավման նպատակով՝ առկա հնարավորությունները ուղղվելու են ԵՊՀ ամբիոններում երիտասարդ և խոստումնալից դասախոսների համամասնության ավելացմանը:
4. Հետազոտական գործունեության անբավարար վարձատրության արդյունքում երիտասարդ հետազոտողների արտահոսքը հասնում է մեծ չափերի: Այս հիմնախնդրի լուծումը հետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորման ծավալների կտրուկ ավելացումն է:
5. Առաջնակարգ հետազոտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող հետազոտական նախագծերի քանակը և դրա հետ կապված արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները դեռևս չեն հասել ցանկալի մակարդակի:
6. ԵՊՀ հետազոտական գործունեության միջազգայնացմանը խոչընդոտող գործոններից է գիտաժողովների մասնակցության և արտասահմանյան մասնագետներ հրավիրելու համար տրամադրվող միջոցների սղությունը: Այստեղ կան դրական տեղաշարժեր: ԵՊՀ-ն, մասնավորապես, ամբողջությամբ իր վրա է վերցրել հրավիրված գիտնականների տեղական ծախսերը:

## ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

### ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:**

Որակյալ ենթակառուցվածքների ստեղծումը ԵՊՀ 5-րդ ռազմավարական նպատակն է (ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2010-2014 թթ., նպատակ V): Համալսարանն իր սովորողների կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար ունի 1 վարչական, 1 գրադարանային և 10 ուսումնական մասնաշենքեր, որոնցից 8-ը գտնվում են կենտրոնական կամպուսում, իսկ 4-ը՝ մինչև 8 կմ հեռավորության վրա (տե՛ս աղյուսակ 7.1): Բուհի լսարանային ֆոնդը կազմում է շուրջ 770 լսարան, որոնց զբաղվածությունը կառավարվում է ֆակուլտետների կողմից ներկայացված լսարանային հայտերի հիման վրա: Պարապմունքները կազմակերպվում են երկհերթ սկզբունքով: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը՝ իր 1600 սովորողներով կրթական ծրագրերը կազմակերպում է 3 մասնաշենքերում՝ 55 լսարաններով: ԵՊՀ-ն ուսումնաարտադրական բազաներ ունի Ծաղկաձորում, Դիլիջանում, Հանքավանում և Բյուրականում:

Համալսարանի բյուջեով ամեն տարի զգալի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար: Արդյունքում՝ ԵՊՀ մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ կահավորման և տեխնիկական հագեցվածության առումներով: Ցածր է ինտերակտիվ ուսուցման համար նախատեսված լսարանների քանակը:

ԵՊՀ ուսումնական լաբորատորիաների և մասնագիտական կաբինետների թիվը 208 է՝ շուրջ 9650 քմ ընդհանուր մակերեսով, որոնց գերակշիռ մասը՝ թվով 180, գտնվում են 3 մասնաշենքերում, որտեղ տեղակայված են բնագիտական ֆակուլտետները:

Գրադարանի զարգացումը ԵՊՀ կարևորագույն ռազմավարական ուղղություններից է (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր VI. բ), կետ 2, 3, 4): 2007 թ-ին ԵՊՀ գիտական խորհրդի ընդունած գրադարանի զարգացման հայեցակարգի իրականացման արդյունքում ընդլայնվել է գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահը, ստեղծվել է էլեկտրոնային ռեսուրսների համալսարանական պորտալ, ընդլայնվել է գրադարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, բարձրացվել է ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին:

ԵՊՀ գրադարանը տեխնիկական հագեցվածությամբ և տեղեկատվության տրամադրման որակի առումով մոտ է միջազգային և եվրոպական չափանիշներին և ՀՀ առաջատար գրադարաններից է: Իր ավելի քան 2 միլիոն գրապաշարով այն հանրապետության 3-րդ խոշոր գրատունն է, իսկ բուհական գրադարաններից 1-ինն է: Գրադարանի շենքը զբաղեցնում է շուրջ 16000 քմ մակերես: Այն ունի 2 գրապահոց, որտեղ առկա է շուրջ 1,85 մլն միավոր

գրականություն: Թվով 8 ընթերցասրահներում առկա է մոտ 90 հազար, առձեռն ֆոնդերում՝ շուրջ 100000 միավոր գրականություն: Այդ ընթերցասրահներն ունակ են միաժամանակ սպասարկելու 1600 ընթերցողի: Համալսարանի 9 ֆակուլտետներում գործում են ֆակուլտետային գրադարաններ մոտ 10000 միավոր գրականությամբ:

Գրադարանից օգտվողների համար հասանելի են նաև մի շարք ռեսուրսային բազաներ. Elibrary.ru, mathnet.ru, SPRINGER, EBSCO, DOAJ, Ռուսաստանի պետական գրադարանի ատենախոսությունների վիրտուալ ընթերցասրահ, Գիտության հայկական վիրտուալ գրադարան, որոնք ապահովում են 375 գիտատեղեկատվական շտեմարաններ, ավելի քան 360 հազար էլեկտրոնային գիրք, 20 հազար գիտական ամսագիր՝ մոտ 9 միլիոն գիտական հոդվածներով, շուրջ 700 հազար ատենախոսություններ և սեղմագրեր: Գրադարանի կայքէջում տեղադրված է հաճախ օգտագործվող գրականություն, ինչպես նաև հնատիպ և հազվագյուտ գրքեր:

2001 թ-ից ԵՊՀ-ն հայաստանյան 12 խոշորագույն գրադարանների հետ համատեղ ALEPH համակարգով իրականացնում է հայաստանյան համապարփակ գրացուցակի կազմումը, որտեղ ԵՊՀ գրադարանի ֆոնդից մուտքագրված է մոտ 805 հազար միավոր գրականություն: Ուսումնական և ընթերցասրահներում առկա գրականությունը և 2003 թ-ից հետո ստացված ողջ գրականությունը մուտքագրված է համակարգում: Այն թույլ է տալիս ընթերցողներին՝ տեղեկանալու գրադարանում առկա գրականության մասին, ինչպես նաև ցանկացած վայրից ինտերնետի միջոցով կատարելու էլեկտրոնային պատվեր: Գրադարանի տարածքում գործում է WIFI կապ: Գրադարանն ուսումնական ֆոնդի սպասարկումն իրականացնում է բաց դարակների սկզբունքով, որտեղ ընթերցողներն ընտրում են գրքերը գրադարակներից, ապա գրանցվում էլեկտրոնային համակարգում: Գրադարանի տարեկան համալրումը կազմում է մոտ 14.000 միավոր գրականություն: Գրադարանը համագործակցում է եվրոպական մի շարք առաջատար գրադարանների հետ և անդամակցում գրադարանային միավորումներին (LIBER, IFLA և այլն):

Գրադարանի զարգացման բնագավառում ԵՊՀ գործունեության թույլ օղակ է գրադարանի և ուսումնական ու գիտական ստորաբաժանումների կապն ու համագործակցությունը. ուսանողները և գիտամանկավարժական կազմը քիչ են ներգրավված տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման աշխատանքներում: Գրադարանի և Համալսարանի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապի ու արդյունավետ համագործակցության ապահովումը ԵՊՀ ռազմավարական խնդիրներից մեկն է, որի լուծման համար այժմ կյանքի է կոչվում ԵՊՀ գրադարանային խորհրդի ստեղծման ծրագիրը:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում գնահատվում է նաև ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքները, ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները: Օրինակ՝ 2010/11 ուստարվա ԵՊՀ շրջանավարտների՝ համալսարանի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները ներկայացված են նկար 7.1-ում:




Նկար 7.1. Ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից ուսանողների բավարարվածության միջին գնահատականները ( 2010/2011 ուստարի)

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, ուսանողները 5 բալանոց համակարգում առավել բարձր են գնահատում գրադարանի աշխատանքը (միջին գնահատականը՝ 4), մինչդեռ համացանցի մատչելիությունը և լաբորատորիաների կահավորումն արժանացել են ավելի ցածր գնահատականի (մոտ 3,6): ԵՊՀ վարչակազմի կողմից ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների վերհանման ու գնահատման արդյունքում (ինչն անշուշտ հիմնված է եղել նաև շրջանավարտների կողմից տրված գնահատման վրա)՝ համալսարանը վերջին 2 տարիներին ոլորտի բարելավմանը հատկացրել է զգալի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչի արդյունքում այսօր ԵՊՀ համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրերով Հայաստանի բուհական համակարգում զբաղեցնում է առաջատար դիրքեր: Բոլոր մասնաշենքերը միացված են համալսարանի կենտրոնական սերվերին օպտիկամալուխային կապուղիներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մի քանի տասնյակ կիլոմետր: ԵՊՀ ներքին ցանցին միացված ընդհանուր համակարգիչների թիվը հասնում է 2000-ի: Անլար WiFi կապի երթուղիչների թիվը հասնում է 40-ի: ԵՊՀ-ն 2013 թ-ից անցել է իր ուսանողներին և դասախոսներին անսահմանափակ ծավալով ինտերնետի տրամադրմանը: Ներկայումս բոլոր աշխատակիցներն ունեն էլ. փոստի հասցեներ:

Շրջանավարտների կողմից ԵՊՀ լաբորատորիաների կահավորման վիճակին տրված համեմատաբար ցածր գնահատականի կապակցությամբ պետք է նշենք նաև, որ 2010 թ. մեկնարկած ԵՊՀ ուսումնական և ուսումնագիտական լաբորատորիաների վերազինման եռամյա ծրագրի իրականացման (շուրջ 1,5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ) արդյունքում արդիական սարքավորումներով վերազինվել են բնագիտական ֆակուլտետների լաբորատորիաների մեծ մասը, ստեղծվել են նորաբաց ծրագրերին համապատասխան լաբորատորիաներ:

Ուսումնական միջավայրի գնահատումը տրվում է նաև ամբիոնների և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերի ժամանակ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու առկա կարիքները և իրականացնելու բարելավող գործընթացներ:

Ուսումնական միջավայրի բարելավումը, հանդիսանալով մշտապես իրականացվող գործընթաց, հանդիսանում է նաև ԵՊՀ ռազմավարական նպատակներին տանող կարևոր առաջնահերթություն: Ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավումը ԵՊՀ ՌԾ-ում նախանշված է որպես առանձին խնդիր: Կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան՝ համալսարանի լսարանային ֆոնդի, ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակի գնահատմանը, դրանց փուլային արդիականացմանը, նոր լաբորատորիաների ստեղծմանը և ուսումնական ու լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործմանը զուգընթաց՝ ԵՊՀ վարչակազմը խնդիր է դրել մինչև 2013/14 ուստարվա վերջը ստեղծել լեզվի ուսուցման մասնագիտացված լսարան-լաբորատորիաներ՝ օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև ստեղծել տեխնոլոգիական կարողությամբ 20 հոսքային լսարաններ՝ ապահովված ինտերակտիվ ուսուցման անհրաժեշտ սարքավորումներով:

Աղյուսակ 7.1. ԵՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ստորաբաժանումները

| հ/հ | Մասնաշենքի անվանումը/համարը | Մասնաշենքում տեղակայված ստորաբաժանումները |
|---|---|---|
| 1. | Կենտրոնական մասնաշենք | ԵՊՀ վարչական կառույցներ, ԵՊՀ պատմության թանգարան, գիտահետազոտական կենտրոններ |
| 2. | Գրադարանի մասնաշենք | ԵՊՀ գրադարան, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Ռուսական կենտրոն, գիտահետազոտական կենտրոններ |
| 3. | Թիվ 1 մասնաշենք | Քիմիայի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետներ |
| 4. | Թիվ 2 մասնաշենք | Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետներ |
| 5. | Թիվ 3 մասնաշենք | Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներ |
| 6. | Թիվ 4 մասնաշենք | Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներ |
| 7. | Թիվ 5 մասնաշենք | Կենսաբանության ֆակուլտետ |
| 8. | Թիվ 6 մասնաշենք | Պատմության, Աստվածաբանության, Տնտեսագիտության ֆակուլտետներ |
| 9. | Թիվ 7 մասնաշենք | Արևելագիտության, Ռուս բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության, Ժուռնալիստիկայի ֆակուլտետներ |
| 10. | Թիվ 8 մասնաշենք | Հայ բանասիրության, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներ |
| 11. | Կինյան 1 ա մասնաշենք | Քաղպաշտպանության ամբիոն |
| 12. | Միջազգային կրթական կենտրոնի մասնաշենք | Միջազգային կրթական կենտրոն |

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար։**

ԵՊՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունը իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը։ 2011 թ. ԵՊՀ բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն այս բաշխվածությունը. ուսման վճարները կազմում են ԵՊՀ բյուջեի մուտքային մասի շուրջ 62 %-ը, պետական ֆինանսավորումը՝ 31 %-ը, այլ եկամուտներ (այդ թվում շնորհներ, բանկային տոկոսներ, լրացուցիչ դասընթացներ և այլ)՝ 7 % -ը (տե՛ս նկար 7.2)։

Վերջին տարիների ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեցտարի աճել են ինչպես ԵՊՀ եկամուտները, որը հիմնականում պայմանավորված է ուսանողների թվի և պետական ֆինանսավորման չափաբաժնի ավելացմամբ, այնպես էլ ծախսերը, ինչը բացատրվում է աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների, պարտադիր սոցիալական վճարների, ձեռք բերվող ռեսուրսների և ուսումնական միջավայրի շարունական բարելավման հետ կապված ծախսերի ավելացմամբ։




Նկար 7.2. ԵՊՀ եկամուտներն ըստ աղբյուրների 2011թ. (7,588,099 հազար դրամ)

Աղյուսակ 7.2. ԵՊՀ բյուջեի եկամուտներն ըստ աղբյուրների 2007-2011 թթ. (հազար դրամ)

| Եկամուտներ / տարիներ | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|---|---|---|---|---|---|
| Ուսման վարձավճարներ | 3,220,060.1 | 3,651,779.5 | 4,216,609.4 | 4,757,281.8 | 4,710,747.0 |
| Պետական ֆինանսավորում | 1,334,969.1 | 1,748,218.8 | 2,181,429.9 | 2,143,453.3 | 2,363,620.8 |
| Այլ եկամուտներ (շնորհներ, բանկային տոկոսներ, լրացուցիչ դասընթացներ և այլն) | 508,456.3 | 393,616.8 | 474,544.3 | 745,603.8 | 513,731.6 |
| Ընդամենը տարեկան եկամուտներ | 5,063,485.5 | 5,793,615.1 | 6,872,583.6 | 7,646,338.9 | 7,588,099.4 |

Ինչպես երևում է աղյուսակ 7.2-ում ներկայացված տվյալներից, վճարովի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները 2007 թ. համեմատ 2011թ-ին ավելացել են շուրջ 46 %-ով: Միևնույն ժամանակ այդ, ինչպես և նկար 7.2-ում տրված պատկերը ցույց են տալիս, որ ԵՊՀ եկամուտները մեծապես կախված են ուսման վարձավճարներից, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում կազմում է մոտ 62%: Հետևաբար, համալսարանը եկամուտների բազմազանեցման կարիք ունի: Եկամուտների բազմազանեցումը ԵՊՀ ընթացիկ գերակայությունն է, որի ապահովման համար աշխատանքներ են տարվում համալսարանի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման, ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումների սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորման, ԵՊՀ վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին համալսարանի մասնակցությունն ակտիվացնելու և այլ ուղղություններով (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր VIII.ա):

ԵՊՀ կարևորագույն ռազմավարական նպատակն է բարձրորակ կրթության ապահովումը, որի իրականացմանն է ուղղվում ԵՊՀ ֆինանսական միջոցների ավելի քան 2/3-ը (տե՛ս նկար 7.2):




Նկար 7.3. ԵՊՀ ծախսերն ըստ ռազմավարական ուղղությունների 2011թ. (7,850,484 հազար դրամ)

Աղյուսակ 7.3. Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերը 2007-2011 թթ. (հազար դրամ)

| Ծախսեր/տարիներ | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր տարեկան ծախսեր | 5,158,194 | 5,741,619 | 6,622,003 | 7,273,076 | 7,850,483 |
| Ուսումնական ծախսեր | 3,543,869 | 4,033,462 | 4,972,362 | 4,518,808 | 5,072,672 |
| Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%) | 68.7 | 70.3 | 75.1 | 62.1 | 64.6 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնաօժանդակ ծախսեր | 410,674 | 417,497 | 460,294 | 433,205 | 453,750 |
| Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%) | 7.96 | 7.27 | 6.95 | 5.96 | 5.78 |
| Ուսանողների թիվ (առանց Իջևանի մասնաճյուղի) | 14614 | 15509 | 17132 | 18259 | 16460 |
| 1 ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի մեծությունը | 270.6 | 287.0 | 317.1 | 271.2 | 335.8 |

Ինչպես երևում է աղյուսակ 7.3 – ից, 2007 թ. համեմատ 2011թ-ին ուսանողների թվի 11%-ով աճի պարագայում՝ մոտ 29%-ով աճել են ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերը և 20%-ով՝ մեկ ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերը: Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ընդհանուր տարեկան ծախսերի մեջ 2007 թ. համեմատ, ինչպես տեսնում ենք, որոշ չափով նվազել է, ինչը վկայում է այն մասին, որ համալսարանն ավելացնում է իր ռազմավարական մյուս նպատակներին հասնելուն ուղղված ֆինանսական միջոցները:

Բարձրակարգ հետազոտությունը ևս համալսարանի կարևորագույն ռազմավարական նպատակ է, ուստի ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերից հետո ԵՊՀ բյուջեից ամենաշատ ֆինանսները հատկացվում են հենց այս ոլորտին:

Աղյուսակ 7.4 Հետազոտական բյուջեն ըստ աղբյուրների 2007-2011 թթ. (հազ. դր.)

| **Հետազոտական մուտքեր/տարիներ** | **2007** | **2008** | **2009** | **2010** | **2011** |
|---|---|---|---|---|---|
| Պետական ֆինանսավորում | 449.093 | 322.750 | 432.548 | 459.797 | 649.595 |
| Արտաբյուջետային ֆինանսավորում (շնորհներ) | 111.768 | 567.571 | 267.126 | 443.912 | 309.730 |
| Ընդհանուր հետազոտական բյուջե | 560.861 | 890.322 | 699.674 | 903.709 | 959.325 |
| ԵՊՀ բյուջե | 5,063,485.5 | 5,793,615.1 | 6,872,583.6 | 7,646,338.9 | 7,588,099.4 |
| Ընդհանուր հետազոտական ծախսերի կշիռը ԵՊՀ բյուջեում | 12,3 | 17,2 | 11,1 | 14,0 | 12,2 |

Ինչպես տեսնում ենք, 2007 թ. համեմատ 2011 թ-ին պետական ֆինանսավորումն ավելացել է մոտ 1,5 անգամ, իսկ ընդհանուր հետազոտական բյուջեն գրեթե կրկնապատկվել է: Աղյուսակը ցույց է տալիս, որ նախ՝ հետազոտության ֆինանսավորումը գերազանցապես կախված է պետական ֆինանսավորումից ու դրամաշնորհներից, երկրորդ՝ հետազոտությանը ֆինանսների հատկացման դինամիկան դրական է, թեև՝ ոչ նշանակալի:

Ֆինանսական միջոցների սղության պատճառով համալսարանը չի կարողանում իր միջոցներից էական հատկացումներ կատարել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ավելացման համար, ուստի ֆինանսական միջոցների գերակշիռ մասը (70%) ուղղվում է ուսումնական գործընթացին և դրա ռեսուրսային ապահովվածությանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:**

ԵՊՀ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների և գլխավոր հաշվապահի կողմից՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը (աշխատավարձ, սոցիալական վճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարումներ և այլն) և ԵՊՀ ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը: Բյուջեի նախագիծը քննարկվում է ԵՊՀ գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում ներկայացվում ԵՊՀ խորհրդի հաստատմանը:

Հաշվի առնելով ԵՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի մեծ քանակը՝ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով դրանք բաշխվում են ոչ թե ըստ կրթական ծրագրերի, այլ ըստ այդ ծրագրերը սպասարկող գիտակրթական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ և այլն): Այդուհանդերձ, ֆինանսական միջոցների հատկացման հիմքում դրված է կրթական ծրագրերի կամ դրանց խմբի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային պահանջը:

ԵՊՀ բյուջեի եկամուտները կենտրոնացվում են և այնուհետև բաշխվում ըստ առանձին ֆակուլտետների՝ պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների քանակին համապատասխան, անկախ այն հանգամանքից, թե դասախոսի ուսումնական բեռնվածությունը որ ֆակուլտետում է իրականացվում: Դասախոսի աշխատավարձի չափը որոշվում է համաձայն հաստիքի չափի, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: Գործում է նաև դասախոսների տարբերակված հավելավճարի համակարգը (տե՛ս չափորոշիչ 5.6-ի վերլուծությունը):

Յուրաքանչյուր ուստարվա ավարտին՝ ֆակուլտետները համալսարանի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ ուստարվա իրենց ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը:

ԵՊՀ ֆակուլտետներն ունեն նաև իրենց ստեղծած ֆինանսական միջոցների բաշխման որոշակի ինքնուրույնություն: Օրինակ, հեռակա ուսուցումից ստացվող ֆինանսական միջոցների մի մասը տնօրինում է ֆակուլտետը: Դրանք ուղղվում են հիմնական դասախոսական կազմի հավելավճարների և ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովվածության ծախսերին:

Ռեսուրսների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը ԵՊՀ գնումների և մատակարարման բաժնի կողմից:

ԵՊՀ գործունեության աուդիտի անցկացումը բխում է ՀՀ օրենսդրության պահանջից: ԵՊՀ և նրա առանձին ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ամեն տարի տրվում են անկախ աուդիտորական եզրակացություններ: Դրանցում մասնավորապես նշվում է, որ ԵՊՀ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ֆինանսական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (տե՛ս, օրինակ, 2012 թ. անկախ աուդիտորական եզրակացությունը):

Թեև համալսարանի սուղ միջոցները կառավարվում են հնարավորինս արդյունավետ, այդուհանդերձ, դրանց կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը, լինելով ԵՊՀ ռազմավարական ընթացիկ գերակայություն, գտնվում է ԵՊՀ ռեկտորատի և ստորաբաժանումների ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ռեսուրսախնայողության քաղաքականությունն իրականացվում է համալսարանի ղեկավարության աչալուրջ վերահսկողության ներքո:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:**

ԵՊՀ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է բուհի առանձին ստորաբաժանումների վարչական կազմի կողմից՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա: «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն՝ ԵՊՀ-ն նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն) իրականացնելու համար:

ԵՊՀ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացահայտման մեխանիզմներ կան նաև «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգում», որը կարգավորում է նոր բացվող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության հետ կապված հարցերը: Մասնավորապես, նոր ստեղծվող ծրագրերի արտոնման գործընթացում տրվում է առաջարկվող ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը և բացահայտվում լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտությունը (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ», բաժին 2):

Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը, համաձայն որի՝ մեկամյա պարբերականությամբ գնահատվում է նաև ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, որի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը կամ հասցեագրվում են ԵՊՀ կենտրոնական վարչակազմին, կամ իրականացվում են ուսումնական ստորաբաժանումների սեփական միջոցների հաշվին (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ», բաժին 2):

Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների:

Ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման տեսանկյունից կարևորագույն փոփոխականը հանդիսանում է ուսանողների թիվը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված թվի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում էլ համալսարանը կարողանում է համապատասխան քանակի ռեսուրսներ ապահովել, օրինակ՝ լրացուցիչ ծանրաբեռնել դասավանդողներին կամ նոր դասավանդողներ ընդունել աշխատանքի:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:**

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավումը համալսարանի ռազմավարական խնդիրներից է: ԵՊՀ ՌԾ-ում նախատեսվում է ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար (Խնդիր V) բ): Տեղեկատվական ռեսուրսների ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովումը ևս ռազմավարական խնդիր է, որի լուծման ուղղությամբ տարվել և տարվում են համապատասխան աշխատանքներ (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր VI.բ):

Համալսարանի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով. SuperVision էլեկտրոնային տեղեկատվական համակարգով, ԵՊՀ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով:

ԵՊՀ-ում տեղեկատվության հավաքման և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2008 թ-ից ներդրվել է SuperVision տեղեկատվության կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգը, որն ունի հետևյալ բաժինները. ուսանողներ, դասացուցակ, քննական և ստուգարքային տեղեկագրեր, ակադեմիական տեղեկագիր, աշխատանքային ուսումնական պլան, ամբիոնային և անհատական բեռնվածություններ, ուսանողական հարցումներ, դիպլոմի հավելված և որոնում: 2010 թ-ից համակարգը ներդրվել է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

ԵՊՀ կայքէջում զետեղվում են. 1) ԵՊՀ խորհրդի և գիտական խորհրդի որոշումներն ու նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ բոլոր կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը, այլ նորմատիվ փաստաթղթեր, 2) ԵՊՀ ռեկտորատի որոշումներն ու նիստերի արձանագրությունները, 3) ԵՊՀ ռեկտորի հրամանները, 4) Ֆակուլտետների (կենտրոնների) խորհուրդների (գիտական խորհուրդների) որոշումներն ու նիստերի արձանագրությունները, 5) Դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթների վերաբերյալ հայտարարությունները և այլն: Նորմատիվ փաստաթղթերը ընդունումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են կայքէջում (տե՛ս ԵՊՀ փաստաթղթերի կայքը՝ http://documentation.ysu.am):

ԵՊՀ-ն ունի վարչական գործընթացների ավտոմատացման համակարգ, որի միջոցով ԵՊՀ ստորաբաժանումները հայտ են ներկայացնում համակարգչային տեխնիկայի և նյութերի տրամադրման և վերանորոգման համար, որն ավտոմատացնում է նաև փաստաթղթերի պատրաստման ընթացքը և ավտոմատ կերպով հաշվառում տրամադրվող միջոցներն ու կատարվող աշխատանքները (տե'ս http://report.ysu.am):

ԵՊՀ-ում փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգվում է «ԵՊՀ գործավարության կարգով» (հաստատված ԵՊՀ ԳԽ կողմից 2011թ.) և ԵՊՀ ընդհանուր բաժնի կանոնադրությամբ: Գործավարության կարգը սահմանում է ԵՊՀ-ում գործավարության կազմակերպումն ու իրականացումը, կարգավորում է թղթակցության ընդունման, գրանցման և ներքին փաստաթղթաշրջանառության ընթացակարգերը, պարզաբանում ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող նախագծերի, ռեկտորի հրամանների ու այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման ու դրանց շարժի, ԵՊՀ ելից փաստաթղթերի շարժի ու առաքման, կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության, փաստաթղթերի էլեկտրոնային պահպանման ու արխիվացման հետ կապված հարցերը: Չնայած կարգը սահմանում է, որ ԵՊՀ գործավարությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով, սակայն այդ համակարգի մի մասն է դեռևս գործում (ՀՀ կրթության և գիտության նախարարությունից փաստաթղթերը ստացվում են Mulberry էլեկտրոնային համակարգով): Համակարգի ամբողջությամբ ներդրված չլինելը բացատրվում է առաջին հերթին ֆինանսական, երկրորդ հերթին՝ կազմակերպական բնույթի դժվարություններով. վերջինս, մասնավորապես, առնչվում է այդ համակարգն օգտագործող հարյուրավոր վարչական, ուսումնաօժանդակ աշխատակիցների վերապատրաստում իրականացնելու հետ: Միևնույն ժամանակ նշված խնդրի դրական լուծման համար նպաստավոր հանգամանք է հանդիսանում այն, որ Համալսարանին հաջողվում է զարգացնել և արդիականացնել իր համակարգչային ցանցը՝ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համար անհրաժեշտ արտադրողականության, հուսալիության և պաշտպանվածության արդի պահանջներին համապատասխան:

ԵՊՀ գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության կարևոր մեխանիզմ է նաև արդեն հիշատակված «ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը», որը պարբերաբար թարմացվում և հրապարակվում է:

Տեղեկատվության տարածման նպատակով ԵՊՀ-ում գործում է Հասարակայնության հետ կապերի վարչությունը: Գործում է նաև ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը, որի 17.2. կետը վերաբերում է համալսարանի ներքին հաղորդակցությանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.6. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:**

ԵՊՀ-ում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է ԵՊՀ ռեկտորի անմիջական ուշադրության կենտրոնում և համակարգվում է ԵՊՀ ընդհանուր հարցերով պրոռեկտորի կողմից:

ԵՊՀ-ում առողջապահական ոլորտի կարևոր ծառայություն է իրականացնում համալսարանի բուժծառայությունը: Բուժկետը տեղակայված է կենտրոնական կամպուսում, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում արագ առաջին օգնություն ցույց տալու ուսանողներին և աշխատակիցներին: Բուժանձնակազմը բաղկացած է 1 բժշկից և 1 բուժակից: Բուժծառայությունն իրականացնում է ԵՊՀ ընդունված առաջին կուրսի ուսանողների պարտադիր բուժզննում. այս գործընթացին իրենց մասնակցությունն են բերում նաև ուսանողական պոլիկլինիկայի բժիշկները, որոնց աշխատասենյակները տեղակայված են մարզահամալիրում և թիվ 6 մասնաշենքում: Բուժկետն ապահովված է անհրաժեշտ դեղորայքով և որոշ սարքավորումներով: ԵՊՀ ատամնաբուժարանը հագեցված է ժամանակակից տեխնիկայով և իրականացնում է պահանջվող բոլոր ատամնաբուժական ծառայությունները: ԵՊՀ ուսանողներն ու աշխատակիցները սպասարկվում են զեղչված գներով: Ատամնաբուժարանի անձնակազմը բաղկացած է 4 բժշկից, 4 բուժքույրից, 1 սանիտարից և 1 վիճակագրից (բոլորն էլ լիցենզավորված են):

ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի հիմնական խնդիրը ֆիզիկական դաստիարակության առարկայի ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան՝ ուսանողների կրթական, դաստիարակչական, ինչպես նաև առողջության ամրապնդմանն ուղղված գործունեության և սպորտ-մասսայական միջոցառումների իրականացումն է: Բակալավրի ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ֆիզդաստիարակության պարապմունքները պարտադիր են՝ շաբաթական 2 ժամ ժամաքանակով: Ամբիոնը կազմակերպում է և՛ ընդհանուր, և՛ սեկցիոն դասընթացներ տարբեր մարզաձևերից (բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ, շախմատ, աթլետիկա, ծանրամարտ, սեղանի թենիս և այլն): Կազմակերպվում են նաև բուժական ֆիզդաստիարակության պարապմունքներ, որոնք նախատեսված են առողջական խնդիրներ ունեցող ուսումնառողների համար: Ամբիոնի աշխատակիցների թիվը 28 է (25 դասախոս և 3 ուսումնաօժանդակ աշխատակից): Համալսարանը հնարավորինս միջոցներ է հատկացնում մարզադահլիճների բարելավման և մարզագույքի ձեռքբերման համար, սակայն դրանք հեռու են բավարար լինելուց: Պարապմունքների արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են նյութատեխնիկական բազայի և սանհանգույցների, նաև մեծ մարզադահլիճի ոչ բավարար վիճակը:

ԵՊՀ ուսանողների և աշխատակիցների հանգստի և առողջության վերականգնման գործընթացը կազմակերպում է ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը: Ծաղկաձորի, Դիլիջանի, Հանքավանի և Բյուրականի գեղատեսիլ վայրերում գտնվող ԵՊՀ ուսումնաարտադրական բազաների մասնաշենքերը ծառայում են նաև որպես հանգստավայրեր, որոնց ծառայություններից ուսանողներն ու աշխատողներն օգտվում են զեղչված գներով, երբեմն էլ՝ անվճար: Ուսանողական հանգստի կազմակերպումը ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի գործառույթներից մեկն է:

ԵՊՀ-ն ունի նաև սանմաքրման ծառայություն, որի աշխատակիցների թիվը 115 է, որից 10-ը որակավորում ունեցող մենեջերներ են՝ տեղաբաշխված ըստ ԵՊՀ մասնաշենքերի և որոնք իրականացնում են նաև ընդհանուր վերահսկողական գործառույթ: Համալսարանի շուրջը էկոլոգիապես մաքուր միկրոմիջավայրի ապահովումը ԵՊՀ կանաչապատման բաժնի գործառույթն է: ԵՊՀ գրեթե բոլոր մասնաշենքերում գործում են նաև սննդի ծառայություններ:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության շտաբը: ԵՊՀ մասնաշենքերում մշտական հիմունքներով գործում են քաղպաշտպանության հանձնաժողովներ՝ մասնաշենքերի պարետների և ֆակուլտետների դեկանների ներգրավմամբ: Շտաբն իրականացնում է նաև ուսանողական փրկարար ջոկատների կազմակերպման պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում այդ ջոկատները փրկարար աշխատանքներում ներգրավելու համար: Արտակարգ իրավիճակների դեպքում շտաբը կարող է մոբիլիզացնել մոտ 1500 անձ:

ԵՊՀ պահպանության և անվտանգության ծառայությունը շուրջօրյա հերթապահության ռեժիմով իրականացնում է համալսարանի մասնաշենքերի և գույքի պահպանության, ուսանողների և աշխատակիցների անվտանգության ապահովման գործառույթը: Ծառայության աշխատակիցների ընդհանուր թիվը 75 է: ԵՊՀ հակահրդեհային ծառայությունն իրականացնում է մասնաշենքերում հակահրդեհային պատրաստվածության գնահատման պրոֆիլակտիկ աշխատանքներ, համալսարանի անձնակազմին իրազեկում հակահրդեհային կանոնների վերաբերյալ: Աշխատակիցների ընդհանուր թիվը 15 է:

Հիմք ընդունելով «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ 2007 թ. մարտի 20-ին հրապարակվել է ԵՊՀ ռեկտորի հրամանը՝ համալսարանի բոլոր մասնաշենքերում ծխելը խստիվ արգելելու, իսկ 2008 թ. հունվարի 15-ին՝ մասնաշենքերում ծխելու դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումների մասին: Համալսարանի բոլոր մասնաշենքերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաներ:

Անվտանգ և առողջ միջավայրի ապահովման բնագավառում ԵՊՀ թերացումներից է հատուկ կարիքներով անձանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և նրանց լիարժեք ուսումնառության կազմակերպումը: Խորհրդային ժամանակներում կառուցված մասնաշենքերում հաշվի չեն առնվել դժվարությամբ տեղաշարժվող մարդկանց հատուկ կարիքները: Տեղաշարժման, լսողության, տեսողության և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը ֆինանսական մեծ միջոցներ կպահանջի, ինչը դեռևս վեր է ԵՊՀ-ի ուժերից: Համալսարանի միայն կենտրոնական մասնաշենքում են գործում վերելակներ: Իսկ բոլոր ուսումնական մասնաշենքերից միայն 8-րդն ունի սայլակով շարժվելու հնարավորությամբ աստիճաններ (մասնաշենքը վերջերս է կառուցվել):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ**:

ԵՊՀ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են Շրջանավարտների բավարարվածության հարցումները և Ուսանողական հարցումները:

Շրջանավարտների հարցման հարցաթերթում կա ռեսուրսների ու ծառայությունների օգտակարությունը, հասանելիությունն ու արդյունավետությունը գնահատող հարցերի մի

ամբողջ շարք՝ 9 հարց, ինչպես նաև կարծիքների և առաջարկությունների առանձին բաժին: Ինչպես երևում է 7.1 չափորոշչի ինքնավերլուծության հատվածում ներկայացված նկարից, հարցվող շրջանավարտներն ընդհանուր առմամբ գոհ են տրամադրվող ռեսուրսների օգտակարությունից:

Ուսանողական հարցումները նույնպես ունեն ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատման տարրեր, քանի որ հարցաթերթերում առկա է ուսանողների կարծիքների և առաջարկների բաժինը, որտեղ նրանք, ի թիվս այլ հարցերի, իրենց կարծիքն են հայտնում տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների վերաբերյալ: Ուսանողական հարցումների տասնամյա պրակտիկան ցույց է տալիս, որ մատուցվող ռեսուրսների և ծառայությունների բարելավմանն ուղղված միջոցառումները հաճախ հիմնվում են ուսանողների կողմից այս մեխանիզմով ստացվող տեղեկատվության վրա:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

**Ձեռքբերումները**

1. ԵՊՀ-ն ունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ ուսումնական գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու համար: Ուսումնական տարածքները պարբերաբար վերանորոգվում, կահավորվում և վերազինվում են: Համալսարանն ունի նաև արդիական ինտերնետային ցանց, բոլոր ստորաբաժանումներն ապահովված են ինտերնետային կապով, հետզհետե մեծանում են ինտերնետի օգտագործման ծավալները: ԵՊՀ գրադարանը համապատասխանում է ժամանակակից պահանջներին:

2. Համալսարանն ունի իր բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և դրանց բաշխման ու վերահսկման գործուն մեխանիզմներ՝ զուգակցելով կենտրոնացված և ապակենտրոնացված մոտեցումները: Այն թույլ է տալիս առավել նպատակային օգտագործելու առկա սուղ միջոցները, միաժամանակ հաշվի առնել նաև ֆակուլտետների յուրահատուկ կարիքները:

3. ԵՊՀ-ում ուսումնական տեղեկատվությունը և փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է բազմաֆունկցիոնալ ցանցային SuperVision համակարգի միջոցով, ինչը մեծացնում է տվյալների փոխանցման օպերատիվությունը:

4. ԵՊՀ-ն ստեղծել է ապահով և անվտանգ միջավայր՝ առողջապահական և անվտանգության ծառայությունների համակարգված գործունեության շնորհիվ: Ուսանողների առողջ ապրելակերպն ապահովելու համար իրականացվում են պարտադիր ֆիզիկական դաստիարակության պարապմունքներ:

5. Գործում է ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների հասանելիության և օգտակարության գնահատման մեխանիզմ՝ ուսանողների և շրջանավարտների բավարարվածության հարցումների համակարգը, ինչը նպաստում է շարունակական բարելավմանը:

**Բացթողումները**

1. Վարչական փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը դեռևս ամբողջությամբ ներդրված չէ:

2. Թույլ է գրադարանի և ուսումնական ու գիտական ստորաբաժանումների կապն ու համագործակցությունը, ուսանողները և գիտամանկավարժական կազմը քիչ են ներգրավված տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման աշխատանքներում:

3. Համալսարանի ֆինանսական աղբյուրները բազմազանեցման կարիք ունեն. գիտական մշակումները և դրանց արդյունքի առևտրայնացումը դեռևս լուրջ ֆինանսական մուտքեր չեն ապահովում, խիստ ցածր է պետական ֆինանսավորման մակարդակը (վերջին 5 տարիների տվյալներով այն կազմում է ԵՊՀ եկամուտների 1/3-ից պակաս): Միևնույն ժամանակ, ԵՊՀ ֆինանսական ներհոսքերի մեծացումը և աղբյուրների բազմազանեցումը հանդիսանում է ընթացիկ գերակայություն, որի ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

4. Զարգացման ծրագրերը թերի են ֆինանսավորվում, քանի որ ֆինանսական միջոցների գերակշիռ մասն ուղղվում է աշխատավարձի ֆոնդ և ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովվածությանը: Ֆինանսական պլանավորումը Համալսարանի ռազմավարական նպատակներին և խնդիրներին ներդաշնակեցումը, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը ԵՊՀ ընթացիկ ռազմավարական գերակայություններ են, որոնց իրականացման ուղղությամբ մշտապես աշխատանքներ են տարվում:

6. Անվտանգ և ապահով միջավայրի ապահովման որոշ կառույցներ (օրինակ՝ մարզահամալիրը) արդիականացման կարիք ունեն: Ներկայումս աշխատանքներ են տարվում արդիականացման համար պահանջվող ծախսերի գնահատման և նախագծի կազմման ուղղությամբ:

7. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմանները գրեթե բացակայում են:

## ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՄՈՒՀ-Ն ԻՐ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵՏՈՒ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

### ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԵՊՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև ԵՊՀ կանոնադրությամբ:

ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմինը ԵՊՀ խորհուրդն է, որը համաձայն ԵՊՀ կանոնադրության (հոդված 16, կետ 3) լսում և գնահատում է ԵՊՀ-ի տարեկան գործունեության մասին ռեկտորի հաշվետվությունը: Խորհրդի այս անմիջական գործառույթի իրականացումն ապահովում է ԵՊՀ հաշվետվողականության ընդհանուր համակարգի բնականոն աշխատանքը:

Թերևս Խորհրդի աշխատակարգով սահմանված չէ, թե ինչ ձևաչափով և կարգով պետք է ռեկտորը ներկայացնի հաշվետվությունը, սակայն տարիների ընթացքում ձևավորվել են որոշ ավանդույթներ, հղկվել և կայացել են հաշվետվողականության մեխանիզմներն ու ընթացակարգերը: Մասնավորապես՝ ԵՊՀ խորհրդի տարեկան նիստին ռեկտորի կողմից ներկայացվում է հաշվետվություն անցած ուստարվա ԵՊՀ գործունեության մասին, ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը և այլ փաստաթղթեր (վերջին տարիներին՝ «ԵՊՀ 2010-14 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի» իրականացման ընթացքի և «Կոռուպցիոն երևույթների պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» կատարողականները և այլն):

Որպես հիմնական հաշվետու փաստաթուղթ պետք է համարել ուսումնական տարվա ԵՊՀ գործունեության հաշվետվությունը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ հուլիս ամսին, ԵՊՀ ռեկտորի կողմից բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվում է սահմանված ձևաչափով ներկայացնել հաշվետվություններ: Աշխատանքների համակարգումը դրված է Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության վրա: Ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների նախնական տարբերակները դիտարկվում են վարչության, ուսումնասիրվում են համապատասխան պրոռեկտորների և ռեկտորի կողմից, որի արդյունքում շտկումների և լրացումների մասին հանձնարարական է իջեցվում (գրավոր կարգով) ստորաբաժանումներին: Արդյունքում՝ ձևավորվում է հաշվետվության վերջնական տարբերակը: Վերջին տարիներին հաշվետվությունների ծավալը կազմում է շուրջ 700 էջ և այն արտացոլում է ԵՊՀ գործունեության գրեթե բոլոր բնագավառները, ոլորտներն ու հիմնախնդիրները: Մասնավորապես, ներկայացվում է ԵՊՀ գործունեության առանցքային ցուցանիշները՝մասնագիտություններ, ուսանողների և շրջանավարտների համակազմ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, գիտական հրատարակումներ, գիտական գործունեություն, միջազգային համագործակցություն, ուսանողական աշխատանքներ և

այլն: Հաշվետվությունը ներառում է նաև ԵՊՀ բոլոր ֆակուլտետների և մի շարք առանձնացված ստորաբաժանումների հաշվետվությունները:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը համախմբված ֆինանսական հաշվետվություններն են՝ ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը, ԵՊՀ ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն, որը տպագրվում է տվյալ ուստարվա գործունեությունը ներկայացնող հաշվետվությունների գրքում, Իջևանի մասնաճյուղի և դուստր ձեռնարկությունների հաշվետվությունները: Դրանք մշակվում են ԵՊՀ հաշվապահության կողմից: Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ԵՊՀ-ն անցնում է արտաքին աուդիտ, և աուդիտորական կազմակերպության եզրակացություն-հաշվետվությունը ներկայացվում է ԵՊՀ խորհրդին, Գիտական խորհրդին, տեղադրվում՝ ԵՊՀ կայքում:

ԵՊՀ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված է նաև ֆակուլտետների մակարդակով հաշվետվողականության համակարգ: ԵՊՀ խորհրդի հերթական նիստին ընդառաջ (այն հրավիրվում է որպես կանոն տարեվերջին կամ հաջորդ տարվա սկզբին) բոլոր ֆակուլտետներում հրավիրվում են ֆակուլտետների խորհրդի նիստեր, որտեղ ֆակուլտետի դեկանը ներկայացնում է իր գործունեության մասին հաշվետվություն (նիստին մասնակցում են ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները): Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում՝ Ֆակուլտետների օրինակելի կանոնադրության պահանջների համաձայն (հոդված 29) ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում պետք է հրավիրի ֆակուլտետի խորհրդի նիստ՝դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար: Ֆակուլտետների ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները քննարկվում են ֆակուլտետի գիտխորհուրդների կողմից (ֆակուլտետների օրինակելի կանոնադրություն, հոդված 40, կետ 4):

Տարվա ընթացքում համալսարանական մի շարք առանձնացված ստորաբաժանումների (ինստիտուտ, կենտրոններ, վարչություններ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ղեկավարները ներկայացնում են իրենց հաշվետվությունները ԵՊՀ գիտխորհրդին:

Այսպիսով, հստակ է, որ Համալսարանում գործում է հաշվետվողականության համակարգ իր համապատասխան մեխանիզմներով, որոնք ամրագրված են ԵՊՀ կանոնադրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով: Ներկայիս հաշվետվողականության համակարգի հիմնական խնդիրն այն է, որ աշխատանքները նախապես հստակ չեն պլանավորվում, չեն սահմանվում թիրախային ցուցանիշներ և այնուհետև հաշվետվությունների մշակման և քննարկման գործընթացում ներդրված չեն աշխատանքների գնահատման չափելի ինդիկատորներ: Այս թիրախային ցուցանիշների և գնահատման չափելի ինդիկատորների միջոցով հնարավոր կլիներ առավել օբյեկտիվ գնահատել ստորաբաժանման աշխատանքները՝ տալով որակական գնահատականներ (օրինակ, եթե ինչ-որ ամբիոն ներկայացնում է, որ հաշվետու ժամանակահատվածում հեղինակել է 25 հոդված, իրականացրել է 2 գիտական ծրագիր, հասկանալի չէ, արդյո՞ք կատարված աշխատանքները պետք է բավարար համարել): Այս ուղղությամբ համալսարանում իրականացվել են որոշակի աշխատանքներ, ներդրվել է գնահատման առանցքային ցուցանիշների համակարգը, որը կարող է հիմք հանդիսանալ աշխատանքների պլանավորման և գնահատման առավել արդյունավետ համակարգի ներդրման համար:

ԵՊՀ-ում առկա համակարգը ապահովում է ոչ միայն ներքին հաշվետվողականությունը, այլև ԵՊՀ-ի հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև (արտաքին հաշվետվողականություն):

ԵՊՀ խորհրդի կառուցվածքն ապահովում է ԵՊՀ-ի արտաքին հաշվետվողականությունը, քանի որ խորհրդի անդամների 25 տոկոսը հանդիսանում են հիմնադրի ներկայացուցիչներ, ովքեր առաջադրվում են վարչապետի կողմից (պետական պաշտոններ զբաղեցնող անձինք), մեկ այլ 25 տոկոսը՝ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ (գիտության, կրթության, մշակույթի, տնտեսության ոլորտի ճանաչված գործիչներ, ԵՊՀ-ի հետ համագործակցող գործատուներ): ԵՊՀ գիտական խորհրդի անդամների թվում են ՀՀ ԳԱԱ նախագահը, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարը, իսկ ֆակուլտետների խորհուրդների կազմում էլ մշտապես ընդգրկվում են ԵՊՀ հիմնական աշխատող չհանդիսացող տվյալ ոլորտի հեղինակավոր մասնագետներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացի ԵՊՀ խորհրդին ներկայացվող հաշվետվություններից ԵՊՀ-ն տարվա ընթացքում բազում անգամներ, օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, Գիտության պետական կոմիտեին, Պետեկամուտների կոմիտեին, Վիճակագրական վարչությանն ու այլ պետական գերատեսչություններին:

Կարելի է նկատել, որ հաշվետվողականության ներկայիս համակարգը նպաստում է կառավարման բարելավմանը, արձանագրվում են բոլոր ձեռքբերումները, հնարավոր է լինում տարանջատել հիմնախնդիրները, մոնիթորինգի ենթարկել զարգացման միտումները: Այդուհանդերձ, ինչպես նշվեց գործող հաշվետվողականության համակարգը առանձին ստորաբաժանումների և աշխատակիցների գործունեության արդյունավետությունը հստակ գնահատելու հնարավորություն չի ընձեռում՝ համապատասխան թիրախային ցուցանիշների և չափելի ինդիկատորների, այլ գործիքների բացակայության պատճառով:

Այս և մի շարք այլ խնդիրների լուծման համար ներկայումս վերանայվում են ԵՊՀ ստորաբաժանումների կանոնադրությունները, հստակեցնելով նրանց խնդիրներն ու գործառույթները, ներդրվում է վարչական աշխատակիցների պաշտոնների անձնագրերի համակարգը և այլն: Այս ամենը հնարավորություն կտա առավել հստակ սահմանել ստորաբաժանումների և նրանց աշխատակիցների պարտականությունները, հետագայում գնահատել դրանց արդյունավետությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:**

ԵՊՀ-ի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում (Հոդվածներ 4. 4., 6. 7., 11. 5, 22. 5., ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (խնդիր 1 բ, կետեր 8,9), ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգում (5-րդ կետի բ և գ ենթակետեր) և մի շարք այլ

նորմատիվ փաստաթղթերում («ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգ, «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ» և այլն):

2006 թվականին ԵՊՀ-ում ստեղծվեց Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը, որի հիմնական գործառույթն եղավ բուհ-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովումն ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը (լրագրողների հետ աշխատանք, տեղեկատվության տրամադրման հարցումների պատշաճ պատասխաններ, ինտերնետային ռեսուրսների զարգացում, աշխատանք ՀԿ-ների, այլ բուհերի, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ և այլն):

Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, իրենց գործունեության բնույթից և խնդիրներից, արտաքին շփումների և իրականացվող աշխատանքների հանրային հետաքրքրության աստիճանից կախված, առնչվում են ԵՊՀ հանրային կապերի աշխատանքներին: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց կողմից ղեկավարած ստորաբաժանման հանրային կապերին առնչվող աշխատանքների կազմակերպման համար (ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգ, կետ 10, 2012թ.):

ԵՊՀ PR աշխատանքների վերաբերյալ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը յուրաքանչյուր ուսումնական տարի ԵՊՀ ռեկտորին և գիտական խորհրդին ներկայացնում է զեկույց «ԵՊՀ հանրային կապերի արդի վիճակը» թեմայով (վերջին զեկույցը ներկայացվել է ԵՊՀ գիտխորհրդի 2012 թ. հունիսի 28-ի նիստում):

Վերջին տարիներին նոր հարթության վրա է դրվել ԵՊՀ ռեկտորի և ղեկավարության շփումը լրատվամիջոցների և հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ:

Համացանցային ռեսուրսների անընդհատ զարգացումը լուրջ խթան է ԵՊՀ գործունեության և ընթացակարգերի թափանցիկությանն ու հասանելիությանը: ԵՊՀ-ն հանրային հետաքրքրություն ներկայացնող գիտակրթական կառույց է, և պատահական չէ, որ Համալսարանում տեղի ունեցող քիչ թե շատ հանրային նշանակության միջոցառում արժանանում է լրատվամիջոցների ուշադրությանը: Այդ միջոցառումները լուսաբանվում են նաև ԵՊՀ պաշտոնական կայքի (www.ysu.am) «Նորություններ» բաժնում: Տարեկան հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով ներկայացվում է ավելի քան 1000 նյութ:

ԵՊՀ գործունեությունն արտացոլող հիմնական հաշվետվությունները ներկայացվում են ԶԼՄ-ների ներկայացուցիչներին: Տարեկան մի քանի անգամ հրավիրվում են մամուլի ասուլիսներ, ԵՊՀ ռեկտորը բազմիցս հանդիպում է լրագրողների հետ: ԵՊՀ հաշվետվությունները տեղադրվում են հատուկ փաստաթղթերի համար ստեղծված կայքում՝ doc.ysu.am, որն ապահովում է ԵՊՀ հիմնական փաստաթղթերի հասանելիությունը: Կայքում տեղադրված են ոչ միայն հաշվետվությունները, այլև բոլոր կանոնադրություններն ու կանոնակարգերը, ԵՊՀ Խորհրդի, Գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների նիստերի արձանագրությունները ու ԵՊՀ ռեկտորի հրամանները: Իսկ կրթական փաստաթղթերը (ծրագրեր, ուղեցույցներ, կարգեր և այլն) տեղադրված են edu.ysu.am կայքում, ուսանողների և համապատասխան թիրախային խմբի համար նշված փաստաթղթերն ավելի մատչելի դարձնելու համար:

Ըստ ԵՊՀ խորհրդի աշխատակարգի՝ խորհրդի նիստերն արձանագրվում են: Նույնը վերաբերում է նաև գիտական խորհրդին: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները ենթակա են հրապարակման ԵՊՀ ինտերնետային կայքում:

ԵՊՀ-ում գործում է «Երևանի համալսարան» ամսաթերթը (հրատարակվում է 1920 թվականից), որն անդրադառնում է բուհի կրթական, գիտական, հասարակական և մշակութային գործունեությանը: Այն հեղինակություն է վայելում ոչ միայն համալսարանի ներսում (տեղադրված գրադարակների միջոցով այն բաժանվում է ուսանողներին և աշխատակիցներին), այլև շահագրգիռ այլ կազմակերպություններում (թերթն առաքվում է այլ բուհեր, պետական գերատեսչություններ):

Բացի կորպորատիվ մամուլի այս տեսակից, ԵՊՀ-ում տեղի ունեցող գործընթացների թափանցիկությունն ապահովում են նաև լույս տեսնող բազմաթիվ բուկլետներն ու ալբոմները, տեսաֆիլմերը: ԵՊՀ մասին վերջին նկարահանված «Իմ տունն այստեղ է» խորագրով ֆիլմը մեծ արձագանք գտավ, կազմակերպվեց հանրային պրեմիերա-ցուցադրություն, այն ցուցադրվեց նաև Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ, իսկ ֆակուլտետների մասին պատմող ֆիլմերը բաժանվում են դպրոցներում տեղի ունեցող հանդիպումների ժամանակ ԵՊՀ պոտենցիալ դիմորդներին, տեղադրված են համացանցում:

Ե՛վ թերթը, և՛ բուկլետներն ու ֆիլմերը նույնպես տեղադրվում են ԵՊՀ ինտերնետային կայքում, որն իր ծավալների քանակով առաջատարն է Հայաստանի բուհերի մեջ: Դրա օբյեկտիվ ապացույցը Webometrics վարկանշային աղյուսակում ԵՊՀ զբաղեցրած տեղն է: ԵՊՀ կայքի զարգացումն ունի բավականին դրական դինամիկա: ԵՊՀ-ն իրականացնում է նաև հետևողական հակակոռուպցիոն քաղաքականություն: 2011 թ. մարտի 31-ին Գիտխորհրդի կողմից հաստատված «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը» իր մեջ պարունակում է մի շարք դրույթներ, որոնք միտված են նպաստելու թափանցիկության և հրապարակայնության ապահովման գործընթացին:

Բուհում մեծ ուշադրություն է դարձվում նաև տեղեկատվության ազատության խնդրին: Վերջին տարիներին ԵՊՀ-ն որդեգրել է լրագրողների հետ սերտ համագործակցության, նրանց մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն: Նույն պրոֆեսիոնալ մոտեցումն է ցուցաբերվում նաև քաղաքացիների դիմումնամակների պատասխաններին, որոնք տրվում են տեղեկատվության ազատության մասին օրենքի պահանջների համաձայն («Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման և իրազեկման ուղեցույց», գլուխ 4, 2010 թ.):

Սակայն հանրության, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տարվող աշխատանքները դեռևս շատ չեն կարևորվում ֆակուլտետներում և մի շարք այլ ստորաբաժանումներում: Այդ իսկ պատճառով ԵՊՀ ռեկտորի կողմից գրավոր հրահանգ տրվեց և յուրաքանչյուր ֆակուլտետ ու ստորաբաժանում առանձնացրեց մեկ հիմնական աշխատակից, ում պարտականությունների վրա դրվեցին նաև հանրային կապերի պատասխանատուի գործառույթները: Այս որոշմամբ և այս ինստիտուտի կայացմամբ հնարավոր կլինի ավելի համակարգված մոտեցում ցուցաբերել հասարակության հետ կապերի աշխատանքներին: ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգով սահմանված աշխատանքային ուղղություններից է նաև ԵՊՀ համացանցային նոր պորտալի նախագծման աշխատանքները, որոնք մեկնարկել են 2013 թվականի հունվար ամսից:

**ՉԱՓԱՆԻՇ 8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

ԵՊՀ ռազմավարական կարևորագույն խնդիրներից է հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավումը («ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2010-14 թթ.», Խնդիր III) ա):

2010 թվականից ԵՊՀ ռեկտորի կողմից հաստատվել է Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույցը (հաստատվել է ԵՊՀ ռեկտորի 29.09.2010 թ. N 176/1 հրամանով): Այն կարգավորում է հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ընթացակարգը՝ հասարակության հետ կապի և լրատվամիջոցների հետ աշխատանքի տեսանկյունից, սահմանում է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող աշխատակարգը:

Սակայն որպես հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոց՝ նախնառաջ կիրառվում է համացանցը: Կայքի այցելուները իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար հնարավորություն ունեն հարցեր ուղղել համալսարանի տարբեր վարչական և գիտակրթական մարմիններին կայքում գործող «Հարց/Պատասխան» բաժնի միջոցով: Հարցերն օպերատիվ կերպով ընթերցվում են, հասցեագրվում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, որի պատասխանն էլ տեղադրվում է կայքում: Սա ապահովում է ԵՊՀ-ի և հասարակության միջև «վիրտուալ երկխոսություն»: Եթե 2006-2007 ուստարում կայքի «Հարց/Պատասխան» բաժնի միջոցով պատասխանվել է 403 հարցի, ապա 2011-12 ուստարում՝ 1068-ի (հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով):

Բացի այդ, ԵՊՀ պաշտոնական էլ. փոստին (info@ysu.am) օրական ստացվում է շուրջ հարյուր նամակ, որոնք նույնպես արագ արձագանք են գտնում:

Զանազան սոցիալական ցանցերում (Facebook, Twitter, Google +) ԵՊՀ-ն ունի իր պաշտոնական էջերը: Մասնավորապես՝ Facebook սոցիալական ցանցում գործող ԵՊՀ էջը, որը 2013 թ. փետրվարի տվյալներով ունի ավելի քան 6500 հետևորդ, բավականին ակտիվ է: Այդ էջի միջոցով նույնպես ԵՊՀ ուսանողներն ու աշխատակիցները, դիմորդներն ու շրջանավարտները, ինչպես նաև լայն հասարակայնության ներկայացուցիչները մեծ թվով հարցեր են ուղղում, ստանում պատասխաններ, թողնում կարծիքներ և գնահատականներ համալսարանի գործունեության տարբեր ոլորտների մասին:

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից իրականացվում է պարբերական մամուլի և ինտերնետային պարբերականների ամենօրյա մոնիթորինգ, առանձնացվում են ԵՊՀ-ին վերաբերող բոլոր նյութերը, դրանք վերլուծվում և ուղարկվում են ռեկտորատի անդամներին: Այս գործընթացի արդյունքում ԵՊՀ-ին վերաբերվող ցանկացած հրապարակում չի վրիպում ԵՊՀ ղեկավարության ուշադրությունից, անհրաժեշտության դեպքում լինում են համապատասխան արձագանքներ, իսկ մոնիթորինգի վերլուծությունը հիմք է հանդիսանում տարվող քաղաքականության գնահատման և վերանայման համար:

ԵՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր հարցումները: Այս

և մի շարք այլ աշխատանքներ իրականացվում են Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության մեթոդական բաժնի կողմից, որի առջև դրված խնդիրները ներառում են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման միջոցով ԵՊՀ-ում առկա տարբեր հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան առաջարկությունների մշակումը (ուսանող-դասախոս փոխհարաբերություններ, ԵՊՀ կրթական ոլորտի առկա խնդիրներ, մամուլում ԵՊՀ-ի մասին քննադատական նյութերի վերլուծություններ, ԵՊՀ պաշտոնական կայքի «Հարց/Պատասխան» բաժնում զետեղված նամակների վերլուծություններ, ԵՊՀ արտաքին և ներքին իմիջին վերաբերող հետազոտություններ): 2007 թվականից սկսած՝ պարբերաբար (6 ամիսը մեկ) իրականացվել են ԵՊՀ-ի արտաքին իմիջին նվիրված հետազոտություններ: Հետազոտություններն ուղղված են եղել բացահայտելու հասարակության, մասնավորապես Երևան քաղաքի բնակչության վերաբերմունքը բուհի նկատմամբ, ինչպես նաև ցույց տալ վերաբերմունքի փոփոխության դինամիկան տվյալ ժամանակահատվածում:

Օրինակ՝«Երևանի բնակչության պատկերացումները ԵՊՀ-ի արտաքին իմիջի վերաբերյալ հետազոտությունների» արդյունքում պարզվել է, որ հարցվողները լավագույն բուհ են համարում ԵՊՀ-ն: Համաձայն հինգ տարիների ընթացքում իրականացված հետազոտությունների տվյալների՝ ԵՊՀ-ի՝ որպես լավագույն բուհի, ցուցանիշը տատանվել է 37.6%-52,4% միջակայքում, մինչդեռ երկրորդ տեղում գտնվող բուհերի առավելագույնը ցուցանիշը չի գերազանցել 15.2%-ը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հասարակության հետ կապերի ոլորտում հետադարձ կապի գործիքների կիրառումը և այդ մեխանիզմների կարևորումը աստիճանաբար է զարգացել և դեռևս ունի կայացման խնդիր: Չնայած հետադարձ կապի գործիքների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը ամրագրված են ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգում և մի շարք այլ փաստաթղթերում, սակայն պետք է նշել, որ դեռևս այդ գործիքների կիրառումը համակարգված չէ և կրում է տարերային բնույթ: Ընդհանուր առմամբ, ԵՊՀ մի շարք ստորաբաժանումներ ինքնուրույն են որոշում իրենց խնդիրների լուծման համար կիրառվող հետադարձ կապի գործիքներն ու մեխանիզմները: Առկա փորձն ու ԵՊՀ-ում առկա ներուժը հնարավորություն են ընձեռում առաջիկա տարիների ընթացքում այս գործընթացները դարձնել առավել ինստիտուցիոնալ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

Հասարակության շրջանում գիտելիքի տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը ամրագրված է որպես ԵՊՀ հիմնական խնդիրներից մեկը (ԵՊՀ կանոնադրություն, հոդված 9): ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում սահմանված են մի շարք խնդիրներ, որոնց նպատակն է աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին (ԵՊՀ ՌԾ, Ռազմավարական նպատակ III):

Առաջին հերթին հարկ է նշել, որ ԵՊՀ-ն իր ուսանողի առջև ունի ստանձնած առաքելություն. պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետ, կրթել ու դաստիարակել

հայրենասեր քաղաքացի և նրան փոխանցել գիտելիքներ ու արժեքներ: ԵՊՀ-ն սոցիալապես անապահով ուսանողներին տրամադրում է զեղչեր, կրթաթոշակներ: ԵՊՀ-ում ուսանողների հետ տարվող աշխատանքները մեծապես նպաստում են պատասխանատու քաղաքացի պատրաստելու առաքելությանը (մանրամասն տես 4-րդ չափանիշ), և ներկայումս ԵՊՀ շրջանավարտները Հայաստանի Հանրապետության հանրային կյանքի բոլոր ոլորտներում ունեն կարևոր դերակատարություն:

Սակայն ԵՊՀ-ն ունի նաև համազգային նշանակություն և տարիներ շարունակ ԵՊՀ-ի գործունեությունը չի սահմանափակվել միայն կրթական ծառայությունների մատուցմամբ: Մայր բուհի շահեկիցներն են նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները: Այդ իսկ պատճառով հասարակական պատասխանատվության խնդիրը շատ խորն է ներդրված ԵՊՀ-ում: ԵՊՀ-ն իր հիմնադրման օրվանից եղել է երկրի հասարակական, քաղաքական, մշակութային իրադարձությունների կիզակետում: Մարդ-քաղաքացի կերտելու լավագույն դրսևորումներից էր, որ ԵՊՀ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ Հայաստանի Հանրապետության անկախության կերտման գործում: Հաշվի առնելով կրթության, գիտության և մշակույթի ոլորտում ԵՊՀ-ի բացառիկ դերը ՀՀ նախագահի հրամանագրով և Կրթության մասին ՀՀ օրենքով ԵՊՀ-ին շնորհված է կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատության հատուկ կարգավիճակ:

Հասարակությանը արժեքների փոխանցման վաղուց ներդրված մեխանիզմ են հանրային դասախոսությունները մարզային բուհերում և զորամասերում, հանդիպումները հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչների հետ, տարբեր քաղաքացիական շարժումներին և ծրագրերին մասնակցությունը (բնապահպանական, բարեգործական և այլն):

Ազգային արժեքների պահպանման ու ամրապնդման տեսանկյունից խիստ կարևոր է ԵՊՀ-ի որպես հայագիտական կենտրոնի դերակատարությունը և այս առումով հարկ է նշել ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի գործունեությունն ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, հայրենիք-սփյուռք հարաբերությունների, ինչպես նաև ազգային հիմնախնդիրների ուսումնասիրմանը:

ԵՊՀ-ն կազմակերպում է բարձրագույն, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթություն, իրականացնում կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում, գիտահետազոտական աշխատանքներ, մատուցում խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ, իրականացնում հրատարակչական աշխատանքներ, կազմակերպում մշակութային միջոցառումներ և այլն:

Համալսարանն աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում (մանրամասն տե՛ս չափորոշիչ 4.1):

ԵՊՀ-ն ունի մեծ ներդրում նաև հանրապետության գիտական մտքի ձևավորման վրա: Լինելով խոշոր գիտական կառույց՝ իրականացնում է հարյուրավոր գիտական թեմաներ և ծրագրեր: Ըստ էության, ԵՊՀ-ն տալիս է հանրապետության գիտական արտադրանքի 1/3-ը: ԵՊՀ-ն հրատարակում է նաև գիտական հանդեսներ, որոնցից են՝ «ԵՊՀ գիտական տեղեկագիրը» և «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականներ, ինչպես նաև ֆակուլտետային

գիտական տարեգրքերը, մենագրություններ, դասագրքեր և այլն: 2012 թ-ին ԵՊՀ հրատարակչությունը հրատարակել է 125 անուն գիրք:

ԵՊՀ գիտական գրադարանը հնարավորություն է ընձեռում նաև ոչ համալսարանականներին օգտվելու գրադարանի ֆոնդերից: ԵՊՀ-ում հեռաուսուցման եղանակով իրականացվում են մի շարք դասընթացներ (Սոցիոլոգիայի, Մարդկային ռեսուրսների կառավարման, Հասարակայնության հետ կապերի, Շուկայագիտության, Փիլիսոփայության, Միջազգային հարաբերությունների և Անգլերենի բնագավառներում):

Համալսարանը մատուցում է նաև հոգեբանական խորհրդատվական ծառայություններ, որն իրականացնում է ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը: Նրա ծառայություններից տարեկան օգտվում է շուրջ 500 երեխա:

Համալսարանը կարևորում է նաև Սփյուռքի հետ աշխատանքները: ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ կազմակերպվում է «Սփյուռք» ամառային դպրոցը:

Ունենալով գիտելիքների և արժեքների փոխանցման հսկայական ավանդույթներ և այդ ոլորտում կատարելով մեծ աշխատանք՝ բացակայում են, սակայն, դրանց գնահատման և հետադարձ կապի մեխանիզմները: Թերևս գնահատման գործիքների շարքին կարելի է դասել արտաքին իմիջին վերաբերվող հետազոտությունները, բայց դրանք համակարգված չեն իրականացվում և չի գնահատվում բուհի կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների արդյունավետությունը: Անհրաժեշտ է ստեղծել ինչպես ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվող ամենամյա հետազոտությունների, այնպես էլ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների համար հստակ և համակարգված մեխանիզմներ և գործիքներ՝ նպաստելու ներքին և արտաքին հաղորդակցության արդյունավետությանը:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ում ներդրվել է բազմամակարդակ հաշվետվողականության համակարգ, որի շնորհիվ ԵՊՀ գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ մշակվում են հաշվետվություններ, դրանք ներկայացվում են համապատասխան պետական մարմիններին և հանրության ներկայացուցիչներին:
2. ԵՊՀ հաշվետվությունները քննարկվում են տարբեր մակարդակների ղեկավար մարմինների կողմից, ապահովվում է հաշվետվությունների քննարկման հրապարակայնությունը և հաշվետվությունների հասանելիությունը:
3. ԵՊՀ-ում կայացել է Հանրության հետ աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումը, ապահովված են ԵՊՀ ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը:
4. ԵՊՀ-ում ներդրված են հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:

5. ԵՊՀ-ն ունի կարևոր հանրային և համազգային նշանակություն, օժտված է կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատության հատուկ կարգավիճակով:

**Բացթողումները**

1. ԵՊՀ-ում առկա հաշվետվողականության համակարգը չի պարունակում այնպիսի թիրախային ցուցանիշներ և ինդիկատորներ, որոնք հնարավորություն կընձեռնեին տալ օբյեկտիվ և որակական գնահատական կատարված աշխատանքի վերաբերյալ:
2. ԵՊՀ-ում վերջնականապես ձևավորված չեն հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ հետադարձ կապի մեխանիզմները, թույլ են զարգացած առցանց հարցումների գործիքները:
3. ԵՊՀ-ում հասարակությանը գիտելիքների փոխանցման գործընթացը չի համակարգվում որպես առանձին գործունեության ուղղություն, հաճախ կրում է ինքնաբուխ դրսևորումներ:

## ԶԱՓԱՆԻՇ 9.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

## ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՒՀ-Ը ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՆՊԱՍՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ

**ԶԱՓՈՐՈՇԻՉ 9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:**

ԵՊՀ արտաքին կապերի հաստատմանն ուղղված ու, մասնավորաբար, միջազգայնացմանն առնչվող գործառնությունը հիմնված է հետևյալ առանցքային փաստաթղթերի վրա՝ ԵՊՀ կանոնադրությունը, Միջազգային Համագործակցության Վարչության (այսուհետ՝ ՄՀՎ) կանոնադրությունը և ԵՊՀ ՌԾ-ն:

ԵՊՀ ՄՀՎ կանոնադրությունը սահմանում է ՄՀՎ հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը և կառավարումը: Այս փաստաթղթի առկայությունը փաստում է, որ ԵՊՀ-ն միտված է դեպի միջազգայնացման համակարգված մոդելը և ունի համապատասխան ֆորմալ և լավ ձևավորված բազա, որը կարգավորում է միջազգայնացման հարցերով զբաղվող կառուցվածքային ստորաբաժանման գործառնությունը:

ԵՊՀ-ում փորձի փոխանակումը, զարգացումը և միջազգայնացումը խթանող միջավայրի ստեղծումը կարգավորվում է նաև ԵՊՀ ՌԾ-ի միջոցով: Վերջինս անհրաժեշտ միջավայր է ստեղծում ներինստիտուցիոնալ և միջինստիտուցիոնալ մակարդակներում միջազգայնացմանն ուղղված ծրագրերի իրագործման համար: Մասնավորապես, ԵՊՀ ՌԾ-ն հանդիսանում է միջազգայնացմանն ուղղված գերակայությունների, նպատակների, խնդիրների և կոնկրետ միջոցառումների իրականացման փաստաթղթային հիմքը: Ավելին, ռազմավարությանը կից ժամանակացույց-պլանը դիտարկվում է որպես այդ գործընթացը վերահսկելու, մշտադիտարկելու և անհրաժեշտության դեպքում շտկելու գործիք: Այստեղ կոնկրետ գործողությունների համար սահմանված են պատասխանատու անձինք և իրագործման ժամկետները:

ԵՊՀ ՌԾ-ն նաև հստակ հրամայականներ և ուղենիշներ է պարունակում ռազմավարական գործակցության ու արտաքին շահակիցների հետ միջազգայնացմանն ուղղված աշխատանքներն ընդլայնելու ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ԵՊՀ ՌԾ-ն թույլ է տալիս միջազգայնացումն ընկալել ոչ միայն նեղ համալսարանական պրիզմայով, այլ նաև այն դիտարկել որպես որակի ապահովման ամբողջական համակարգի բաղկացուցիչ մաս:

Այսպես, ՌԾ ընթացիկ գերակայությունների՝ Ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն բաժնի խնդիր VIIգ)-ի 3-րդ կետով ամրագրված է, որ անհրաժեշտ է ընդլայնել ընդունելության դոնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ: Այդ նպատակով նաև ակտիվորեն համագործակցել տվյալ երկրներում ՀՀ դեսպանատների և նրանց բարձրագույն կրթության նախարարությունների հետ (տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 36):

Համալսարանի միջազգային կապերի ընդլայնմանն ու բազմազանեցմանը, կրթական ու գիտական ոլորտներում եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ համագործակցության խթանման ռազմավարական խնդրի իրագործմանն են ուղղված այդ խնդրի ներքո թվարկված 1-9-րդ գործողությունները (ավելի մանրամասն տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 43-44):

ԵՊՀ միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացմանը նպաստում են ինչպես երկաստիճան կրթական համակարգը, այնպես էլ՝ 2005 թ-ին ՀՀ կողմից ստորագրված Բոլոնիայի հռչակագիրը: Վերջիններս ուղենիշ են հանդիսանում ԵՊՀ-ի կողմից նախաձեռնվող միջազգային տարբեր միջոցառումների համար և խրախուսում համալսարանական կրթահամակարգի ինտեգրումը առաջատար փորձ ունեցող գիտակրթական ցանցերում:

ԵՊՀ-ում միջազգայնացման գործընթացն իրականացվում է համաձայն ստորև ներկայացված մի քանի առանցքային ուղղությունների ու գերակայությունների:

1. Դրական ազդեցությունը կրթական գործընթացի որակի, մասնագիտական վերապատրաստումների և ընդհանուր առմամբ որակի ապահովման վրա: Կրթության որակի համապատասխանեցումը գոյություն ունեցող միջազգային չափանիշներին (հատկապես Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի պահանջներին) ԵՊՀ-ի և ընդհանուր առմամբ ՀՀ-ի համար այսօր առաջնային նշանակություն ունի: Այս առումով, ԵՊՀ-ն համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների հետ՝ տարբեր համատեղ ծրագրերի իրականացման համար կոնսորցիումներ ստեղծելով առաջատար բուհերի հետ:
2. ԵՊՀ-ում միջազգայնացման հաջորդ կարևոր ուղղությունը համատեղ հետազոտական ծրագրերի մշակումն է, որոնք հնարավորություն են տալիս զարգացնելու ֆունդամենտալ գիտությունը և առևտրայնացնելու հետազոտությունների արդյունքները:
3. ԵՊՀ-ն մեծապես կարևորում է նաև մասնագիտական և ուսանողական շարժունակությունը: Կատարված աշխատանքների արդյունքում, վերջին տարիներին զգալիորեն աճել է միջազգային տարբեր ծրագրերում ներգրավված ԵՊՀ աշխատակիցների և ուսանողների թիվը (տե՛ս հավելված 9.1 և հավելված 9.2):
4. ԵՊՀ-ում միջազգայնացման գործընթացն ընդգրկում է նաև (սակայն չի սահմանափակվում) այնպիսի լրացուցիչ տարրեր, ինչպիսիք են՝ մասնակցությունը միջազգային մասնագիտական ցանցերին և միջազգային կազմակերպություններին, տարբեր փոխանակման ծրագրերում ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը, մասնակցությունը միջազգայնացմանն ուղղված դրամաշնորհներին, հետազոտական նախագծերի ֆինանսական աջակցությունը կամ համաֆինանսավորումը և այլն: Այս ուղղությամբ ԵՊՀ-ի կողմից արձանագրված առաջընթացը դրսևորվում է վերջին տարիներին աշխարհի տարբեր բուհերի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, գիտակրթական ցանցերի հետ կնքված պայմանագրերի աճով, ինչպես նաև անհատ հետազոտողների կողմից տարեկան ավելի քան 30 դրամաշնորհային ծրագրերի իրականացմամբ (տե՛ս հավելված 9.5):
5. Որպես միջազգայնացմանն ուղղված այլ գործընթաց կարելի է նշել միջմշակութային հաղորդակցությունը: Վերջին երեք տարիներին նվազել է ԵՊՀ-ում սովորող օտար-

երկրյա ուսանողների թիվը, ինչը պայմանավորված է Իրանից ժամանող ուսանողների թվի կտրուկ նվազմամբ: Միաժամանակ, հարկ է նշել, որ ԵՊՀ-ի հետ համագործակցող օտարերկրյա մասնագետների թիվը գրեթե անփոփոխ է (տե՛ս հավելված 9.3, 9.4):

ԵՊՀ-ն իր առջև նպատակ է դրել բարելավել բարձրագույն կրթության որակը, դրա գրավչությունն ու մրցունակությունը Եվրոպայում, համագործակցություն հաստատել եվրոպական հարթակի երկրների հետ՝ որպես հենք ընդունելով տարբեր փոխանակման ծրագրերի շրջանակներում գործող ակադեմիական շարժունակությունն ու եվրոպական և ասիական երկրների հետ երկկողմ, բազմակողմ և միջկառավարական համաձայնագրերը:

Ընդհանուր առմամբ, խոսելով ԵՊՀ-ում միջազգայնացմանը միտված փաստաթղթերի արդյունավետության մասին՝ կարելի է նշել, որ դրանք հիմնականում հայեցակարգային և ուղենշային բնույթ են կրում և չեն պարունակում համապատասխան մեթոդաբանական ու կազմակերպական ցուցումներ նախանշված նպատակներին հասնելու համար:

Անհրաժեշտ է մշակել միջազգայնացման համահամալսարանական հայեցակարգ և/կամ ռազմավարություն, որից կբխեն միջազգայացման հետ առնչվող կառուցվածքային ստորաբաժանումների կոնկրետ աշխատանքային պլանները՝ դրանցում նշված կարճաժամկետ ու երկարաժամկետ գործողություններով ու վերջիններիս մոնիթորինգի ու գնահատման մեթոդաբանությամբ:

Ակնկալվում է նման հայեցակարգի մշակման աշխատանքներն սկսել ինքնագնահատման վերաբերյալ զեկույցի պատրաստումից և հրապարակումից հետո: Ավելին, ինքնագնահատման զեկույցի քննարկման ընթացքում ավելի տեսանելի են դառնում որակի ապահովման և դրա համատեքստում միջազգայնացմանն առնչվող հիմնախնդիրները: Համատեղ քննարկումներն ու վերլուծություններն օգնում են ուրվագծել նաև դրանց հաղթահարման ուղիները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:**

ԵՊՀ-ում արտաքին կապերի ու միջազգայնացման հարցերով զբաղվող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը Միջազգային համագործակցության վարչությունն է, որը գործում է ԵՊՀ կանոնադրության և գիտխորհրդի կողմից հաստատված ՄՀՎ կանոնադրության հիման վրա և բաղկացած է երեք բաժիններից՝ Միջազգային կապերի, Սփյուռքի և Գրանտների: Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, ով անմիջականորեն հաշվետու է ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին:

Միջազգային կապերի բաժինը հիմնականում զբաղվում է օտարերկրյա մասնագետների և պատվիրակությունների հրավերների անհրաժեշտ փաստաթղթերի և վիզաների ձևակերպմամբ, նրանց ընդունելության կազմակերպմամբ, ԵՊՀ օտարերկրյա հյուրերի տանը հյուրերի գրանցմամբ, ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների երաշխավորությամբ միջազգային գիտակրթական պայմանագրերի կողմ հանդիսացող համալսարանների և գի-

տական կենտրոնների հետ պաշտոնական փաստաթղթերի փոխանակմամբ ու նամակագրության վարմամբ, արտերկրի հաստատություններից ստացված պաշտոնական հարցման հիման վրա ԵՊՀ-ում սովորող քաղաքացիների ու շրջանավարտների վերաբերյալ ակադեմիական տեղեկանքների, փաստաթղթերի թարգմանությամբ և պաշտոնական վավերացմամբ և այլն (տե՛ս ՄՀՎ կանոնադրություն, 2.2. Միջազգային համագործակցության վարչության գործառույթները, 2.2.3., 2.2.9., 2.2.11):

Ըստ ՄՀՎ կանոնադրության՝ Սփյուռքի բաժնի գործառույթներից են՝ ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կազմակերպումը, հետագայում նրանց ձևակերպումը համալսարանի մասնագիտական ֆակուլտետների 1-ին կուրսերում կամ ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար ուղեգրերի տրամադրումը, սփյուռքի հայկական բարեգործական հիմնադրամների կողմից ԵՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվող խրախուսական միանվագ կրթաթոշակների բաշխման կազմակերպումը, ԵՊՀ հրատարակչության հետ համատեղ գիտական և ուսումնական գրականության հրատարակմանն աջակցության բանակցային գործընթացի կազմակերպումը, սփյուռքի հայկական կազմակերպությունների և հիմնադրամների օժանդակությամբ հրատարակչական աշխատանքների իրականացումը և այլն (տե՛ս ՄՀՎ կանոնադրություն, 2.2. Միջազգային համագործակցության վարչության գործառույթները, 2.2.12., 2.2.27., 2.2.28.):

Գրանտների բաժնին կանոնադրությամբ վերապահված գործառույթների թվում են՝ ինտերնետային ցանցում և միջազգային դրամաշնորհային տեղեկատվական հավաքածուներում ԵՊՀ գիտակրթական հետաքրքրություններին համապատասխան դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը, ՀՀ-ում գրանցված միջազգային կազմակերպությունների ծրագրերի ուսումնասիրումը, ԵՊՀ զարգացման հեռանկարային ուղղությունների վերաբերյալ ձեռքբերված տեղեկատվության վերլուծությունն ու կանոնակարգումը, միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների և արտերկրի համալսարանների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին ԵՊՀ ստորաբաժանումներին և ուսանողական կառույցներին իրազեկումը, ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից երաշխավորված գիտակրթական դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթերի նախապատրաստումը, հայտի առաջարկի օրինակելի տարբերակի տրամադրումը, երաշխավորական նամակների հատկացումը, օտարերկրյա դրամաշնորհային հայտերի գրանցումը, արդեն իսկ շահած դրամաշնորհների կատարման հետագա ընթացքի վերահսկումը և համակարգումը (տե՛ս ՄՀՎ կանոնադրություն, 2.2. Միջազգային համագործակցության վարչության գործառույթները, 2.2. 6., 2.2.7., 2.2.8): Այս գործառույթները, ըստ էության, համապատասխանում են ԵՊՀ ՌԾ-ի՝ Ռազմավարական գործակցություն և միջազգայնացում նպատակին հասնելու համար սահմանված խնդիրներին ու դրանց իրագործման համար անհրաժեշտ գործողություններին (տե՛ս ԵՊՀ ՌԾ, խնդիր IX. բ), 3):

Անդրադառնանք այն հիմնական խնդիրներին, որոնք խոչընդոտում են ստորաբաժանման և դրա բաժինների արդյունավետ գործունեությանը:

Այսպես, վարչության կողմից արտերկիր մեկնող և այնտեղից ժամանող պրոֆեսորադասախոսական ու ուսանողական անձնակազմերին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը փոխկապված է այլ կառուցվածքային ստորաբաժանումների և, ընդհանուր առմամբ, այդ հարցում ՄՈՒՀ-ի ունեցած հնարավորությունների ու ռեսուրսների հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է արտերկրից ժամանող հյուրերի, ուսանողների, դասախոսների համար հավելյալ օժանդակ ծառայությունների տրամադրմանը (հյուրանոցային բնակֆոնդի ավելացում, կողմնորոշման դասընթացի մշակում ու ներդրում և այլն), որն ուղղակիորեն կապված է այդ ուղղությամբ համալսարանի կողմից նախատեսված ֆինանսական և նյութական միջոցների հետ:

ՄՀՎ վարչության արդյունավետ ու հասցեական գործունեության վրա ազդող մեկ այլ գործոն է միջազգային ծրագրերի, դրամաշնորհային հնարավորությունների և այլ բնույթի նախագծերի մասին ԵՊՀ-ում տարածվող տեղեկատվության հասանելիությունը թիրախային խմբերին: Նման տեղեկատվությունը սովորաբար չի հասնում նախատեսված օղակներին (օր. ուսանողներին, դասախոսներին)՝ դեկանատներում կամ ամբիոններում պատշաճ ընթացք չստանալու հետևանքով, իսկ հասնելու դեպքում էլ՝ թիրախային խմբերի շրջանում նկատվում է ցածր մոտիվացիա նման ծրագրերում ներգրավվելու համար, ինչը թերևս կարող է կապված լինել ուսանողների ու դասախոսների կողմից օտար լեզվի ոչ բավարար իմացության, ինչպես նաև առհասարակ գիտակրթական, ուսումնական գործընթացի նկատմամբ բավականին չեզոք դիրքորոշման հետ:

ԵՊՀ և ՄՀՎ կանոնադրությունների հիման վրա միջազգայնացմանն ու արտաքին կապերին առնչվող գործընթացների կանոնակարգումը վկայում է այն մասին, որ համալսարանը հետևում է միջազգայնացման համակարգված մոդելին: Նախ և առաջ միջազգային գործառնությունները նպաստում են որոշակի ինստիտուցիոնալ նպատակի իրագործմանը, ապա ստեղծվում են որոշակի օժանդակ կառույցներ, հստակ սահմանվում են պարտականություններն ու հաշվետվողականության մեխանիզմները, զարգացումը խթանվում է առաջ քաշվող խնդիրների միջոցով:

Վերջին երեք տարիների ՄՀՎ ձեռքբերումներից կարելի է համարել առանձին ֆակուլտետներում (օր. իրավագիտության, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, սոցիոլոգիայի և այլն) միջազգային համագործակցության գծով փոխդեկանների պաշտոնների ստեղծումը, ինչը հնարավորություն է տվել մշտական կապ ապահովելու համալսարանի միջազգայնացման կենտրոնական ենթակառուցվածքի և առանձին գիտակրթական ստորաբաժանումների միջև: Միջազգային գծով պատասխանատուներն օգնում են նաև տարբեր ծրագրերի շուրջ տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց շրջանակներում նախատեսվող միջոցառումները տեղերում կազմակերպելու և համակարգելու գործում:

Չնայած, ստորաբաժանման կառուցվածքն ու հիմնական գործառույթները սահմանված են ՄՀՎ կանոնադրությամբ, սակայն բացակայում են ենթակառուցվածքի ընթացիկ և հեռանկարային գործունեությունն առավել հետևողական կերպով կանոնակարգող ընթացակարգային ուղենիշային ու աշխատանքային փաստաթղթերը (տե՛ս, ԵՊՀ ՌԾ, Խնդիր IX.բ), 1): Մասնավորապես, խոսքը ինչպես ընդհանուր վարչության համար նախատեսված կանոնակարգերի, գործողությունների պլանի, մոնիթորինգի ու գնահատման մեխանիզմների, այնպես էլ դրանում ներգրավված առանձին աշխատողների աշխատանքի որակի վերահսկման ու

գնահատման քանակական ու որակական մեթոդների ներդրման մասին է: Նման ընթացակարգերի ներմուծումը հնարավորություն կտար վերահսկողություն սահմանելու կառավարչական յուրաքանչյուր օղակի նկատմամբ՝ կանխելով թյուրիմացությունները դեռևս որոշումների ընդունման ստորին օղակում: Բացի այդ, աշխատանքի վերահսկման ու գնահատման անհատական մեխանիզմները կնպաստեն յուրաքանչյուր աշխատողի անձնական մոտիվացիայի բարձրացմանն ու նվիրվածությանը, ինչը վերջին հաշվով կհանգեցնի ողջ ստորաբաժանման արդյունավետ գործունեությանը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ԵՊՀ-ում միջազգային փոխանակումներն ու արտաքին կապերը բազմազանեցնելու և ընդլայնելու կարևոր ու անհրաժեշտ նախապայմաններից է միջազգային շարժունակության համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքի արդյունավետ գործունեությունը: Տվյալ դեպքում ՄՀՎ վարչության կանոնակարգված աշխատանքի հիմնական գրավականներից է անձնակազմի կառավարման ճիշտ մեթոդաբանության ու գործիքակազմի ընտրությունն ու կիրառումը, ինչը հնարավորություն կտա առավելագույնս արդյունավետ օգտագործելու առկա ռեսուրսները՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:

Ներկայումս, ԵՊՀ ՄՀՎ-ն գործում է տարիների ընթացքում ձևավորված աշխատանքային ավանդույթների ու ընթացակարգերի շրջանակներում: Նոր, ճկուն ու ժամանակին համահունչ աշխատանքային ընթացակարգերի մշակումն ու ներդրումը կապված է զգալի ռեսուրսների (մարդկային, նյութական, ֆինանսական և այլն), ինչպես նաև մեթոդաբանական ուղենիշների առկայության հետ, որոնց ձեքբերման ու ներմուծման հնարավորություններից են ԵՊՀ-ում միջազգայնացմանն ուղղված միջազգային դրամաշնորհային ծրագրերը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:**

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 200 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց շարքում են՝ Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (Ռուսաստան), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը (Ռուսաստան), Բելոռուսի պետական համալսարանը (Բելոռուս), Բոլոնիայի համալսարանը (Իտալիա), Պերուջիայի օտարազգիների համալսարանը (Իտալիա), Ռոստոկի համալսարանը (Գերմանիա), Զիգենի համալսարանը (Գերմանիա), Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտը (Ֆրանսիա), Մոնպելիեի համալսարանը (Ֆրանսիա), Անտվերպենի համալսարանը (Բելգիա), Կալիֆորնիայի համալսարանը (Բերկլի, ԱՄՆ), Անն-Արբոր Միչիգանի համալսարանը (ԱՄՆ), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանը (Հունաստան), Վարշավայի համալսարանը (Լեհաստան), Կահիրեի համալսարանը (Եգիպտոս), Հալեպի համալսարանը (ՍԱՀ), Ի. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանը (Վրաստան), Մաղտըմգուլիի անվան Թուրքմենական պետական համալսարանը (Թուրքմենստան), Քուվեյթի համալսարանը (Քուվեյթ), Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանը (Ղազախստան) և այլն: Բացի այդ, ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է մի շարք դրամաշնորհային ծրագրերում և միջազգային ծրագրերում, ինչպիսիք են՝ TEMPUS-ը, DAAD-ն, USAID-ն, ISTC-ը, CDRF-ը և այլն: Հարկ է անդրադառնալ նաև ԵՊՀ-ի ներգրավ-

վածության այնպիսի միջազգային ցանցերին, ինչպիսիք են՝ Erzamus Mundus-ը, Network of CIS Universities, International Association of Universities, European Universities Association, Eurasian Universities Association, Black Sea Universities Network, ինչը թույլ է տալիս մշտապես մասնակից լինելու տարածաշրջանային ու միջազգային խոշոր գիտակրթական կոնսորցիումներին՝ դրանով իսկ խթանելով միջազգային շարժունակությունն ու փորձի փոխանակմանն ուղղված ծրագրերը (տե՛ս ԵՊՀ ՌԾ, Խնդիր IX. բ), 8):

Նշված դրամաշնորհային ու միջազգային ծրագրերում ներգրավվածության, ինչպես նաև միջազգային ցանցերին անդամակցության շրջանակներում ԵՊՀ-ն վերջին մի քանի տարիների ընթացքում ոչ միայն էապես բազմազանեցրել ու զարգացրել է իր միջազգային համագործացության շրջանակը, այլև նպաստել համալսարանում այդ համագործակցությունը փաստող կենտրոնների, կառույցների բացմանը, որոնք ավելի են ամրապնդում ձեռքբերված պայմանավորվածություններն ու երաշխավորում դրանց շարունակականությունը:

Այսպես, ԵՊՀ-ում 2006 թ-ից գործող Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնն առաջին հաստատությունն է Հայաստանում, որն առաջարկում է միջմասնագիտական մագիստրոսական կրթություն, ինչպես նաև գիտական և փորձագիտական հետազոտություններ՝ եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում: Կենտրոնը նպաստում է գիտելիքների և եվրոպական արժեքների վրա հիմնված հասարակության կայացմանը՝ որակյալ և մրցունակ կրթության ապահովման միջոցով, իրականացնում է միջմասնագիտական ծրագրեր, նպաստում է Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը տեսական և գործնական, միջմասնագիտական և մասնագիտական ուսումնասիրությունների միջոցով, գործում է որպես Եվրոպական տեղեկատվական կենտրոն Հայաստանում՝ առաջարկելով մասնագիտական գրականություն ԵՄ և միջազգային իրավունքի, քաղաքագիտության և կառավարման, մարդու իրավունքների ու ժողովրդավարացման և այլ բնագավառներում (տե՛ս, ԵՊՀ ՌԾ, Խնդիր IX. բ), 5.):

“Русский мир” հիմնադրամի և ԵՊՀ ղեկավարության ջանքերով 2008 թ. փետրվարի 7-ին բացվել է ԵՊՀ-ի Ռուսական կենտրոնը: Արարողությանը ներկա են գտնվել ՀՀ կրթության և գիտության, մշակույթի նախարարները, ՌԴ ֆեդերացիայի խորհրդի նախագահի տեղակալը, ինչպես նաև երկու երկրների կրթության և մշակույթի գործիչներ, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան ներկայացուցիչներ և այլն: Կենտրոնն իր տեսակի մեջ առաջինն է հետխորհրդային տարածքում և իր գործունեության տեղեկատվական, կրթական, ստեղծագործական և հաղորդակցային ուղղությունների միջոցով կոչված է օժանդակելու բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են ռուսերեն լեզվով, ռուսական պատմությամբ, մշակույթով և առհասարակ Ռուսաստանի ներկայով:

Միջազգայնացման մեկ այլ օրինակ է ԵՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի նվաճում համարվող և Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից ֆինանսավորվող «Հայկական վիրտուալ համալսարան» նախագծի մշակումն ու իրականացումը: Համալսարանը սկսել է գործել 2008 թ-ի սեպտեմբերից, որի շրջանակներում յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի հայագիտության բնագավառում հիմնավոր կրթություն ստանալու առցանց ուսուցման միջոցով: Համալսարանի գործունեությունը հատկապես խթանում է Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացումը՝ հնարավորություն տալով

սփյուռքահայերին ավելի իրազեկված լինելու իրենց հայրենիքի պատմության, մշակույթի, ինչպես նաև դրան առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ:

2009 թ-ին ԵՊՀ-ում Tempus QATMI ծրագրի մեկնարկով միջազգայնացման գործընթացը որակապես նոր փուլ մտավ: Ծրագիրը, որի հիմնական նպատակն էր կազմակերպական և ծառայությունների մատուցման ենթակառուցվածքը բարելավելու միջոցով ամրապնդել միջազգայնացման քաղաքականությունը, համապատասխանում է Բոլոնիայի գործընթացի որակի ապահովման ռազմավարությանը: Ծրագրի շրջանակներում ԵՊՀ կառավարման վերին օղակների, ինչպես նաև ՄՀՎ որոշ ներկայացուցիչներ վերապատրաստումներ են անցել եվրոպական երկրներում՝ իրենց հետ բերելով միջազգայնացման առաջատար փորձը և դրա իրագործման ժամանակակից մոտեցումները:

2010 թ. հունիսի 19-ին Հայաստանի և Ռուսաստանի նախագահների ներկայությամբ ԵՊՀ-ի և Սանկտ Պետերբուրգի համալսարանների միջև ստորագրվեց համաձայնագիր, որն ուղղված էր գիտնականների և ուսանողների միջև գիտական հաղորդակցության զարգացմանը՝ քիմիայի, տնտեսագիտության, արևելագիտության, միջազգային հարաբերությունների, մաթեմատիկական մոդելավորման և կիրառական մաթեմատիկայի, բանասիրության և գրաքննության, պատմության և լրագրության ոլորտներում: Այս համագործակցության շրջանակներում՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ավարտական կուրսերի երկու ուսանող մեկ ուսումնական տարի են անցկացրել Սանկտ Պետերբուրգի համալսարանում, որի ուսանողները ևս իրենց ուսումնառությունը շարունակում են ԵՊՀ-ում:

ԵՊՀ-ն սերտորեն համագործակցում է նաև տարածաշրջանային գիտակրթական հաստատությունների հետ, ինչի վառ ապացույցն է Թբիլիսիի պետական համալսարանում գործող հայագիտական և ԵՊՀ-ում գործող վրացագիտության կենտրոնները:

Արևելագիտության բնագավառում միջազգայնացման լավագույն օրինակ է ԵՊՀ-ի և Աստանայի Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանի միջև համագործակցության պայմանագիրը: Վերջինիս շրջանակներում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում 2010 թ-ին բացվել է ղազախերենի, ղազախական գրականության և Ղազախստանի պատմության կենտրոնը (կաբինետը), որը կահավորվել է ղազախական կողմի աջակցությամբ և գործում է Ղազախստանի նախագահի բարձր հովանու ներքո:

Հայաստանի և Հնդկաստանի կառավարությունների միջև համագործակցության շրջանակներում, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (հայկական կողմ) և C-DAC կենտրոնի (հնդկական կողմ) կողմից ԵՊՀ թիվ 3 մասնաշենքում 2011թ-ի նոյեմբերի 7-ին պաշտոնապես բացվել և իր գործունեությունն է ծավալում Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, որը ՏՏ ոլորտի դասընթացներ է կազմակերպում ուսանողների, արդեն կայացած մասնագետների, ինչպես նաև հենց ուսուցանողների համար: ԵՊՀ-ն Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, IREX-ի, British Council-ի, OSI-ի, USAID-ի հետ համատեղ ակտիվորեն ներգրավված է բազմաբնույթ միջազգային ծրագրերում, որոնք խթանում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունակությունը:

Ներկայումս ԵՊՀ ում գործում են Տեմպուս 4, Համալսարան-ձեռներեցություն կապի խթանմանը միտված ծրագիրը, որի հիմնական նպատակն է բուհերի և բիզնեսի միջև համա-

գործակցության եվրոպական առաջատար փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանում ևս գիտակրթական ու արտադրական սեկտորների միջև փոխշահավետ ու արդյունավետ գործակցության հաստատումը: ԵՊՀ-ում ստեղծված ձեռնարկությունների հետ համագործակցության հանձնաժողովը կհանդիսանա բուհը ձեռնարկության հետ կապող և գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացումն ապահովող հիմնական օղակը (տե՛ս, ԵՊՀ ՌԾ, Խնդիր IX. ա), 3):

Միջազգային փոխանակումների առումով ԵՊՀ-ում ներկայումս մեկնարկել են Erasmus Mundus ALRAKIS, BACIS, IANUS, WEBB և ELECTRA նախագծերը, որոնք նպատակ ունեն ապահովել կոնսորցիումի անդամ երկրների ուսանողական, դասախոսական և վարչական անձնակազմի շարժունակությունը ԵՄ անդամ երկրներից դեպի զարգացող պետություններ և հակառակը (տե՛ս, ԵՊՀ ՌԾ, Խնդիր IX. բ), 6):

Վերոնշյալ նվաճումների հետ մեկտեղ գոյություն ունեն որոշ դժվարություններ, որոնք ազդում են միջազգային համագործակցության գործընթացի լիակատար արդյունավետության վրա:

Այսպես, հարկ է նշել, որ ԵՊՀ-ի կողմից կնքված և ուժի մեջ մտած մի շարք երկկողմ ու բազմակողմ պայմանագրեր գործում են ոչ պատշաճ կերպով կամ առհասարակ չեն գործում: Սա կապված է երկու հիմնական խնդիրների հետ: Նախ և առաջ որոշ պայմանագրերում նշված չեն դրանցով նախատեսված կոնկրետ գործողությունները, պլանները, կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակներն ու խնդիրները, այսինքն՝ ինքնին պայմանագիրը առոչինչ է, եթե չկա դրա իրականացման տեսլականը: Մյուս խնդիրը կապված է ՄՀՎ աշխատակազմի սակավության հետ: Աշխատակազմը միաժամանակ իրականացնելով բազմաբնույթ տեխնիկական ու կազմակերպական գործառույթներ՝ չի կարողանում արդյունավետ կերպով կազմակերպել պայմանագրերի հետագա իրականացումը և մշտադիտարկումը: Ուստի, այս առումով, միջազգային համագործակցության նոր հնարավորությունների դիտարկումը պետք է համահունչ լինի դրանց իրագործման տեսլականի և անհրաժեշտ ռեսուրսների առկայության հետ:

Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է, վերջին 3 տարիների ընթացքում ԵՊՀ-ում զգալիորեն աճել է ինչպես առանձին ֆակուլտետների կամ կենտրոնների կողմից, այնպես էլ ԵՊՀ անունից միջազգային, տեղական ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությունների քանակը (տե՛ս հավելված 9.5): Սա փաստում է այն մասին, որ ԵՊՀ-ում միջազգայնացման գործընթացը բավականին ակտիվ է ընթանում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ եվրոպական ու այլ արտասահմանյան հարթակներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

ԵՊՀ վարչական աշխատակազմի մոտ 40%-ի շրջանում օտար լեզվի* իմացությունը թույլ է, 30%-ի շրջանում՝ միջին, 20%-ը լեզվին գրեթե կատարելապես է տիրապետում, իսկ 10%-ն ընդհանրապես չի տիրապետում: Ակադեմիական աշխատակազմի շրջանում առկա են հետևյալ ցուցանիշները. 10%-ն ընդհանրապես չի տիրապետում անգլերենին, 25%-ը՝ թույլ է տիրապետում, 45%-ի լեզվի իմացությունը միջին մակարդակի է, իսկ 20%-ը մայրենիին մոտ է հաղորդակցվում անգլերենով:

Միաժամանակ հարկ է նշել, որ ԵՊՀ-ում բոլոր ուսանողների, դասախոսների և ուսանողների համար գործում է լեզվի դասընթացների կազմակերպման համակարգ, որը ուսանողների պարագայում ներառում է ուսումնական ծրագրերում օտար լեզվի դասընթացի ընդգրկումը, իսկ դասախոսական մակարդակում՝ օտար լեզի պարտադիր վերապատրաստումներն ու քննությունները: Վերջիններս կազմակերպվում են հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից անցկացվող՝ ԵՊՀ դասախոսական կազմի պարտադիր վերապատրաստման հնգամյա ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, ներկայումս ԵՊՀ գիտակրթական ու վարչական տարբեր ստորաբաժանումների մեծ թվով աշխատակիցներ արդեն իսկ ներգրավված են անգլերենը ակադեմիական միջավայրում դասընթացում: Պետք է նշել, որ վերապատրաստման շրջանակներում ներառված այլ դասընթացներից՝ դասախոսները առաջնային կարևորություն են տալիս օտար լեզվի դասընթացներին, ինչը վկայում է բուհի միջազգայնացման միտումների մասին:

ԵՊՀ-ում օտար լեզվի իմացությունն անհրաժեշտ է նաև տարբեր արտասահմանյան ԲՈՒՀ-երի հետ համատեղ միջմասնագիտական ծրագրերի մշակման ու ներդրման համար (տե՛ս ԵՊՀ ՌԾ, ԽնդիրIX, բ), 5):

Օտար լեզվի անհրաժեշտ մակարդակի ապահովումը կարևոր նախապայման է հանդիսանում նաև հրավիրյալ դասախոսների ԵՊՀ պարբերական այցելությունների համար:

Ընդհանուր առմամբ, ԵՊՀ ողջ աշխատակազմի լեզվի իմացության մակարդակը կարելի է բնութագրել որպես միջին: Միջազգային համագործակցության վարչության աշխատակիցների 90%-ը տիրապետում է առնվազն մեկ օտար լեզվի՝ բավարար մակարդակով: Ուսանողների լեզվի իմացության մակարդակը միջին է, որոշ ուսանողներ կատարելապես են տիրապետում լեզվին: Դրանք հիմնականում այն ուսանողներն են, որոնք ներգրավված են միջազգային ծրագրերում կամ որևէ կերպ առնչվում են միջազգային կազմակերպությունների հետ:

Այսպիսով, ԵՊՀ-ում օտար լեզվի իմացությունն ապահովելու համար ներկայումս ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Հաշվի առնելով միջազգայնացման գործընթացին լիովին ինտեգրվելու ԵՊՀ նպատակադրումը՝ նախատեսվում է այդ միջոցառումների հետագա ընդլայնումն ու կատարելագործումը:

* Որպես օտար լեզու այստեղ գերազանցապես դիտարկում ենք անգլերենի իմացության մակարդակը:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. Բազմաբնույթ միջազգային կապերը, որոնց մասին վկայում են աշխարհի առաջատար համալսարանների հետ ունեցած երկկողմ ու բազմակողմ պայմանագրերը՝ շուրջ 50 երկրների 200 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ։
2. Մասնակցությունը մի շարք միջազգային ծրագրերին, այդ թվում՝ ներգրավվածությունը միջազգային գիտակրթական ցանցերում և կոնսորցիումներում։ Բարձր մակարդակի վրա է նաև ԵՊՀ-ի կողմից տեղական գործընկեր բուհերի և այլ կառույցների հետ համագործակցությունը, որը կարող է օգտագործվել վերջիններիս գործընկերների հետ ևս փոխշահավետ կապերի հաստատման համար։
3. Տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ԵՊՀ վարչական ու պրոֆեսորադասախոսական աշխատակազմը վերապատրաստումներ է անցել առաջատար գիտակրթական ու հետազոտական կենտրոններում, հմտացել ու մասնագիտացել։
4. Վերջին տարիների ընթացքում աճել է ԵՊՀ-ից տարբեր ծրագրերի շրջանակներում գործուղվող դասախոսների և ուսանողների թիվը։
5. ԵՊՀ դասախոսները ներգրավված են որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներում ներառված անգլերեն լեզվի դասընթացներում։ Նմանատիպ դասընթացներ են կազմակերպվել նաև վարչական կազմի համար։

### Բացթողումները

1. Չնայած ԵՊՀ-ից արտերկիր մեկնող ուսանողների ու դասախոսների թվաքանակի աճին և բարձր շարժունակությանը, դեռևս փոքր է արտասահմանից ժամանող դասախոսների և ուսանողների թիվը։
2. Միջազգային համագործակցության վարչության կողմից միջազգային ծրագրերի ու հնարավոր համագործակցությունների վերաբերյալ ֆակուլտետներին տրամադրվող տեղեկատվությունը միշտ չէ, որ ոչ պաշաճ կերպով է տարածվում համապատասխան հասցեատերերի շրջանում։ Խոսքը հիմնականում վերաբերում է այն ֆակուլտետներին, որտեղ դեռևս նշանակված չեն միջազգային համագործակցության գծով պատասխանատու փոխդեկաններ։
3. ԵՊՀ կայքում միջազգայնացմանն առնչվող գործընթացները, մասնավորապես՝ ֆակուլտետների կողմից իրականցվող դրամաշնորհային գիտահետազոտական ու կրթական ծրագրերը արտացոլվում են ոչ ամբողջական և ոչ պատշաճ ձևով։
4. ԵՊՀ կայքում տեղադրված տեղեկատվությունը ոչ ամբողջությամբ է հասանելի անգլերենով, ինչը բարդացնում է ԵՊՀ-ի և նրա գործառնության մասին տեղեկատվության ձեռքբերումը։

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք համահունչ են որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.3. Որակի ապահովման ռազմավարությունը, քաղաքականությունը և ընթացակարգերն ունեն պաշտոնական կարգավիճակ, հանրորեն հասանելի են և ներառում են ուսանողների ու այլ շահեկիցների դերակատարությունը դրանցում:**

ԵՊՀ ՈԱ ռազմավարությունը ձևակերպված է ԵՊՀ ՌԾ-ի 1-ին ռազմավարական նպատակի խնդիր I բ)-ում՝ «Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան»: Այս խնդրի իրագործման համար ՌԾ-ում սահմանված են 9 ռազմավարություններ, որոնք ներկայումս հետևողականորեն կյանքի են կոչվում: Դրանք նախատեսում են ԵՊՀ ՈԱ նոր հայեցակարգի մշակում, ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացների ներմուծում, կրթական ծրագրերի ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի ընդլայնում, ուսանողների գնահատման արժանահավատ համակարգի օգտագործում, դասախոսական կազմի ՈԱ գործընթացների կատարելագործում, ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ՈԱ, ՈԱ գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում: Ռազմավարությունը նախատեսում է (խնդիր 1բ, կետ 9) ապահովել նաև ՈԱ գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ինչպես նաև ուսանողների, ներքին ու արտաքին շահեկիցների մասնակցությունը և հետադարձ կապը ԵՊՀ ՈԱ գործընթացներում՝ ՈԱ Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ԵՉՈՒ) պահանջներին համապատասխան:

ԵՊՀ կրթության որակի ապահովման առաջին հայեցակարգն ընդունվել է դեռևս 2007 թ-ին: Այն սահմանում էր որակի հասկացությունը բարձրագույն կրթության համակարգում, ՈԱ սկզբունքները ԵԲԿՏ-ում, բուհում որակի մշակույթի ձևավորման սկզբունքները, ԵՊՀ ՈԱ համակարգի կառուցամասերը, ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը, դասախոսական կազմի գնահատման մոտեցումները և այլն: Սակայն այս հայեցակարգում դեռևս ամրագրված չէին ԵՉՈՒ հիմնական սկզբունքները:

Ուստի մշակվեց և ԵՊՀ Գիտական խորհրդի (ԳԽ) կողմից հաստատվեց (2012 թ., սեպտեմբեր) ԵՊՀ ՈԱ նոր հայեցակարգը, որն ամբողջությամբ համապատասխանում է ԵՉՈՒ պահանջներին: ՈԱ նոր հայեցակարգը տալիս է ԵՊՀ որակի սահմանումը և ՈԱ հիմնական սկզբունքները, ԵՊՀ ՈԱ համակարգի նպատակներն ու խնդիրները, ՈԱ հիմնական ոլորտները, ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը, ՈԱ գործընթացները և ընթացակարգերը, ինչպես նաև որակի շարունակական բարելավման մեխանիզմները: Մասնավորապես, հայեցակարգը սահմանում է, որ ԵՊՀ ՈԱ համակարգի հիմնական նպատակը համալսարանում կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումն է, իսկ ինքնագնահատումն ու բարելավումը, անձնակազմի, ուսանողների և արտաքին շահեկիցների ընդլայնված մասնակցությունը, ինչպես նաև ՈԱ ներքին և ար-

տաքին գործընթացների միջև փոխկապվածությունը ԵՊՀ ՌԱ հիմնական սկզբունքներից են: Նոր հայեցակարգը ՌԱ հիմնական ոլորտներ է սահմանում կրթական չափորոշիչները, ծրագրերը և դասընթացները, դասախոսական կազմը, դասավանդումն ու ուսումնառությունը, ուսանողների գնահատումը, ուսումնական ռեսուրսները, օժանդակ ծառայությունները և ենթակառուցվածքները, գիտահետազոտական գործունեությունը: ՌԱ յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված են համապատասխան գործընթացները և ընթացակարգերը, հիմնական դերակատարները: Ընդ որում, հստակ նշված է ուսանողների և արտաքին շահեկիցների (շրջանավարտներ, գործատուներ և արտաքին գնահատողներ) դերակատարությունը ՌԱ յուրաքանչյուր գործընթացում: Հայեցակարգը սահմանում է նաև ԵՊՀ ՌԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը՝ ՌԱ գործընթացներում ներգրավված հիմնական կառույցների և դերակատարների միջև պատասխանատվությունների բաշխումով (տե՛ս հավելված 10.1):

ԵՊՀ-ում ԵԶՌԻ պահանջներին համահունչ ՌԱ համակարգի հիմնումն սկսվել է 2008 թ-ին: Հարկ է նշել սակայն, որ ԵՊՀ-ում ՌԱ առանձին մեխանիզմներ և ընթացակարգեր մինչ այդ էլ գործել են, ինչպես, օրինակ՝ ուսանողական հարցումները (2002 թ-ից), դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերը (2002 թ-ից), հանրային տեղեկատվության համակարգը (2006 թ-ից), շրջանավարտների բավարարվածության հարցումները (2008 թ-ից) և այլն: Բացակայում էին ՌԱ մի շարք կարևոր մեխանիզմներ և ընթացակարգեր, իսկ եղածներն ինտեգրված չէին ՌԱ մեկ ընդհանուր համակարգում: Այդ նպատակով՝ ԵՊՀ-ում վերջին հինգ տարիների ընթացքում նպատակային աշխատանք տարվեց ԵԶՌԻ պահանջներին համահունչ ՌԱ համակարգ ստեղծելու համար: Ներկայումս ԵՊՀ-ում արդեն գործում են (կամ կգործեն 2013 թ-ից) ՌԱ մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը: Դրանք են.

1. Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումները (2002 թ-ից), որոնց օգնությամբ գնահատվում են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, ինչպես նաև առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների մատուցման որակը: Արդյունքներն օգտագործվում են բարելավող միջոցառումների մշակման և իրականացման համար, ինչպես նաև հիմնական դասախոսական կազմի վերընտրության, առաջքաշման և պարգևատրման գործընթացներում («ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ», հաստատվել է ԵՊՀ ԳԽ կողմից 2002 թ., փոփոխվել և լրամշակվել է 2003 թ., 2004 թ. և 2010 թ.):

2. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերը (2002 թ-ից), որոնք նպատակաուղղված են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը: Արդյունքները հաշվի են առնվում դասախոսների առաջքաշման և պարգևատրման ժամանակ («ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ», հաստատվել է ԵՊՀ ԳԽ կողմից 2002թ., փոփոխվել և լրամշակվել է 2007թ. և 2011թ. հուլիսին):

3. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումները (2008 թ-ից), որոնց միջոցով գնահատվում է ԵՊՀ ուսանողների բավարարվածու-

թյան մակարդակը կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդներից, ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ուսանողական ծառայություններից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և ընդհանուր կրթական միջավայրից: Արդյունքներն օգտագործվում են համապատասխան ոլորտների շարունական բարելավման նպատակով («ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ», հաստատվել է ԵՊՀ ԳԽ կողմից 2010 թ. հունիսին):

4. Կրթական ծրագրերի արտոնումը, ներքին փորձաքննությունը և պաշտոնական հաստատումը (2012 թ-ից): Այս գործընթացները նպատակաուղղված են ԵՊՀ կրթական ծրագրերի ՈԱ-ը՝ վերջիններիս մշակման փուլում: Այստեղ գնահատվում է նոր ստեղծվող ծրագրի հիմնավորումը (հասարակական պահանջը, ռեսուրսային ապահովվածությունը), համապատասխանությունը՝ որակավորումների ազգային շրջանակի և կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ծրագրի մշակման որակը: Ընթացակարգերը նոր են գործադրվում և կիրարկվում են միայն նոր ստեղծվող կրթական ծրագրերի գնահատման համար («ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ», հաստատվել է ԵՊՀ ԳԽ կողմից 2011 թ. փետրվարին):
5. Կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկումը և պարբերական վերանայումը (կգործի 2013 թ-ից), որոնց նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին, ինչպես նաև ծրագրի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը: Այս գործընթացների արդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է: Նախատեսված է ՈԱ այս գործընթացներն իրականացնել 2013/2014 ուստարվանից («ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ», հաստատվել է ԵՊՀ ԳԽ կողմից 2011թ. հունիսին):

Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 5.3 չափորոշչին վերաբերող բաժնում, ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ 3.5, իսկ դասախոսական կազմի ՈԱ-ին ուղղված գործընթացները և ծրագրերը՝ 5.4 և 5.5 չափորոշիչներին վերաբերող բաժիններում: Ուսանողների գնահատման համակարգի ՈԱ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 3.3 չափորոշչին վերաբերող բաժնում: Ուսումնական ծրագրերի հաստատման ընթացակարգերը մեկնարկել են 2012/13 ուստարվանից և դրանց արդյունավետության վերաբերյալ տվյալները դեռևս բացակայում են, իսկ ծրագրերի մոնիթորինգի և վերանայման գործընթացները կգործադրվեն հաջորդ ուստարվանից՝ համապատասխան վարչական և դասախոսական կազմի վերապատրաստումներից հետո:

ՈԱ բոլոր վերոնշյալ մեխանիզմներն ու ընթացակարգերը պաշտոնապես հաստատված են ԵՊՀ ԳԽ կողմից, հրատարակվել և բաժանվել են համալսարանի բոլոր ուսումնական և վարչական կառույցներին, իսկ արտաքին շահեկիցներին և լայն հանրությանը հասանելի դարձնելու նպատակով տեղադրված են նաև ԵՊՀ պաշտոնական փաստաթղթերի կայքէջում (www.documentation.ysu.am):

ՈԱ բոլոր վերոնշյալ գործընթացներում որոշակի դերակատարություն է վերապահված նաև ուսանողների և արտաքին շահեկիցների (շրջանավարտներ, գործատուների ներկայացուցիչներ, արտաքին գնահատողներ, ԿԳՆ և այլն) համար: Մասնավորապես, կրթական ծրագրերի հաստատման գործընթացներում ծրագրերի փորձաքննական հանձնաժողովի կազմում ներգրավվում են առնվազն երկու արտաքին փորձագետներ, խրախուսվում է նաև մասնագիտական տարբեր ընկերակցություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև մասնագիտական ոլորտը կարգավորող մարմիններից արտաքին փորձագետների ընդգրկումը: Կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացներում նախատեսված է օգտագործել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները, իսկ պարբերական վերանայման գործընթացներում՝ ծրագրի շրջանավարտների հարցումների և շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումների արդյունքները: Ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգերում կարող են ներգրավվել նաև արտաքին փորձագետներ:

ԵՊՀ ուսանողների ներկայացուցիչները (մեկական ուսանող) ներգրավված են նաև ԵՊՀ ԳԽ-ի և ֆակուլտետների ԳԽ-երի ՈԱ մշտական հանձնաժողովներում, ինչպես նաև ԵՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ինքնագնահատման գործընթացներն իրականացնող և համապատասխան զեկույցները պատրաստող հանձնաժողովի և աշխատանքային խմբերի կազմում (տե՛ս չափորոշիչ 10.2):

ԵՊՀ ՈԱ գործընթացներում արտաքին շահեկիցները ներգրավված են նաև որպես ավարտական ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների նախագահներ և անդամներ: Համաձայն «ՀՀ բուհերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» (ՀՀ ԿԳՆ նախարարի հրաման, 2011 թ.) վերոնշյալ հանձնաժողովների նախագահը և անդամների առնվազն 50%-ը պետք է լինեն արտաքին շահեկիցներ (այլ բուհերի, գիտահետազոտական կազմակերպությունների, գործատուների ներկայացուցիչներ, տվյալ բնագավառի առաջատար մասնագետներ), ինչը հնարավորություն է տալիս հետադարձ կապի մեխանիզմներով արձագանք ստանալ ԵՊՀ-ի մատուցած կրթական ծրագրերի արդյունավետության և պատրաստած շրջանավարտների որակի մասին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը հատկացնում է բավարար ժամանակային, նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:**

ԵՊՀ-ում ՈԱ գործընթացները կառավարող և իրականացնող առանձնացված կառույցներ կամ մարմիններ նախկինում չեն եղել: ՈԱ ընդհանուր վերահսկողությունը, ինչպես և այժմ, իրականացվել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, իսկ ՈԱ առկա գործընթացները (ուսանողական հարցումներ, շրջանավարտների բավարարվածության հարցումներ, դասախոսների որակավորման բարձրացման ծրագրեր և այլն) իրականացվել են Ուսումնամեթոդական վարչության (ՈՒՄՎ), Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի, Համալսարանական կրթության զարգացման բաժնի և Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության աշխատակազմերի կողմից: ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի հրամանով 2008 թ. մարտին ԵՊՀ ՈՒՄՎ վարչության կազմում ստեղծվեց Որակի ապահովման և վերահսկման բաժինը, որի հիմնական գործա-

ռույթը ՈԱ վերոնշյալ գործընթացների կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունն էր:

Սակայն ԵԶՈՒ պահանջներին համապատասխան ՈԱ ներքին համակարգի կառուցումն անհրաժեշտություն առաջացրեց ստեղծելու ինքնուրույն, համահամալսարանական մասնագիտացված կառույց՝ ՈԱ ավելի լայն և մասնագիտացված գործառույթներ իրականացնելու նպատակով: Այդ նպատակով՝ Համալսարանական կրթության զարգացման բաժնի և Որակի ապահովման և վերահսկման բաժնի հենքի վրա ԵՊՀ ԳԽ-ի որոշմամբ (2012 թ. հունիս) և ռեկտորի հրամանով (2012 թ. հուլիս) ստեղծվեց ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ), որի կանոնադրությունը հաստատվեց ԵՊՀ ԳԽ կողմից 2012 թ. սեպտեմբերին: ՈԱԿ-ի հիմնական նպատակը համալսարանում ԵԶՈՒ պահանջներին համահունչ ՈԱ ներքին մեխանիզմների և ընթացակարգերի գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է: Կենտրոնի գործառույթների շրջանակը սահմանված է նրա կանոնադրությամբ, մասնավորապես, ՈԱԿ-ը ԵՊՀ այլ վարչական և ուսումնական ստորաբաժանումների և մարմինների հետ համատեղ կազմակերպում, գործադրում և վերահսկում է ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով սահմանված ՈԱ մեխանիզմները և ընթացակարգերը (տե՛ս չափանիշ 10.1): Քանի որ կենտրոնը նոր է միայն սկսել գործել, նրա գործունեության արդյունավետության մասին դեռևս վաղ է եզրակացություններ անել:

ՈԱԿ-ի տնօրենը ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալն է, ով անմիջականորեն պատասխանատու է համալսարանում ՈԱ գործընթացների իրականացման համար: Կենտրոնում աշխատում են 5 լրիվ հաստիքով աշխատողներ (1 տնօրեն, 2 առաջատար մասնագետ, 1 մասնագետ և 2 մասնագետ՝ 0,5 դրույքով), որոնց միջև աշխատանքների և պարտականությունների բաշխումը սահմանված է ՈԱԿ-ի կանոնադրությամբ: Կենտրոնը ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում ունի 3 գրասենյակ, անհրաժեշտ կահույք և ապահովված է ժամանակակից կազմտեխնիկայով:

ԵՊՀ ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունի ԵՊՀ ԳԽ-ը, որը հաստատում է ՈԱ ոլորտին առնչվող իրավական ակտերը և նոր բացվող կրթական ծրագրերը: ԳԽ-ն ամեն կիսամյակ լսում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաղորդումը ուսանողական հարցումների արդյունքների, իսկ ամեն ուստարի՝ շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում կայացնում է համապատասխան որոշում այդ գործընթացների բարելավման ուղղությամբ: ԵՊՀ ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը ձևավորելու նպատակով 2012 թ. փետրվարին ստեղծվեց «ԵՊՀ Գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովը» (ՈԱՄՀ): Հանձնաժողովում ընդգրկված են վարչական, դասախոսական և ուսանողական (մեկ ուսանող) կազմերի ԳԽ անդամ 7 ներկայացուցիչներ: Հանձնաժողովն ունի իր աշխատակարգը (հաստատված ԵՊՀ ԳԽ կողմից 2012 թ. ապրիլին), որը սահմանում է ՈԱՄՀ-ի հիմնական գործառույթները՝

- ՈԱ իրավական ակտերի նախագծերի մշակում,
- ՈԱ չափորոշիչների, գործընթացների և ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորությունների և առաջարկների տրամադրում,

- համագործակցություն ԵՊՀ ՈԱ այլ կառույցների ու խմբերի հետ (հավելված 10.1):

ԵՊՀ ՈԱ հայեցակարգը սահմանում է ՈԱ գործընթացների կենտրոնացված կանոնակարգում և դրանց ապակենտրոնացված իրականացում: Ուստի, տեղերում (ֆակուլտետ, կենտրոն, ամբիոն) ՈԱ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով ԵՊՀ բոլոր 19 ֆակուլտետներում 2012 թ. մարտին ստեղծվել են «Ֆակուլտետների Գիտական խորհուրդների Որակի ապահովման մշտական հանձնաժողովներ» (ՖՈԱՀ): Այդ հանձնաժողովները բաղկացած են 5 անդամներից, ներառյալ մեկ ուսանող: ՖՈԱՀ-երի հիմնական գործառույթներն են.

- ՈԱ հարցերի վերաբերյալ ֆակուլտետի ԳԽ-ին երաշխավորությունների ներկայացում,
- ուսումնական ծրագրերի և դասընթացների համապատասխանեցում ԵՊՀ կրթական չափորոշիչների պահանջներին,
- ուսանողական հարցումների արդյունքների քննարկում և բարելավող միջոցառումների առաջարկում և այլն:

Որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով՝ ԵՊՀ-ն 2012 թ. մարտին ներմուծեց ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց, իսկ 2012 թ. հոկտեմբերին մեկնարկեց փորձնական ծրագրային ինքնագնահատումը ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում:

Համալսարանի ինքնագնահատման գործընթացն իրականացնելու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամանով 2012 թ. մարտին ստեղծվեց ԵՊՀ ինքնագնահատման հանձնաժողով, որը բաղկացած է 7 անդամներից և ներառում է մեկական ներկայացուցիչ ուսանողական կազմից և արտաքին շահեկիցներից (շրջանավարտներ), իսկ ԵՊՀ գործունեության առանձին ոլորտներում ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան ինքնագնահատումն իրականացնելու և համապատասխան զեկույցների նախագծերը կազմելու համար ստեղծվեցին 10 աշխատանքային խմբեր՝ յուրաքանչյուրում 4-ական անդամ (ներառյալ մեկական ուսանող՝ խմբերից 8-ում): Կենսաբանության ֆակուլտետի ինքնագնահատման աշխատանքային խումբը բաղկացած է 10 անդամներից (ներառյալ մեկ ուսանող): Ինքնագնահատման հանձնաժողովը դիտարկելու է աշխատանքային խմբերի կողմից կազմված ինքնագնահատման զեկույցները, ի մի է բերելու դրանք մեկ ընդհանուր զեկույցում, դիտարկելու է ներքին և արտաքին շահեկիցների դիտողություններն ու առաջարկությունները զեկույցների վերաբերյալ, կազմելու է ԵՊՀ ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակը, որը պետք է հրապարակվի և լինի հանրությանը հասանելի:

ԵՊՀ-ն զգալի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում նաև ուսանողների և շրջանավարտների հարցումների նախապատրաստման, անցկացման, արդյունքների մշակման ու ամփոփման աշխատանքների համար: Մասնավորապես, մարդկային ռեսուրսները ներգրավվում են ոչ միայն ՈԱ գործընթացների համար անմիջականորեն պատասխանատու կառույցներից, այլ նաև ուսումնական գործընթացն ապահովող կենտրոնական և ֆակուլտետային այլ կառույցներից: Հավելված 1.1-ում ներկայացված ԵՊՀ ՈԱ համակարգի կազմակերպական սխեմայում ցույց են տրված համակարգում ներգրաված հիմնական կառույցները և մարմինները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:**

Ինչպես արդեն նշվեց (չափորոշիչ 10.1), ԵՊՀ ՈԱ համակարգը դեռևս գտնվում է կառուցման փուլում և էական վերանայումների դեռևս չի ենթարկվել: Սակայն համակարգի այն բաղադրիչները, որոնք նախկինում էլ գործել են, ժամանակի ընթացքում պարբերաբար վերանայվել և կատարելագործվել են՝ ելնելով դրանց իրականացման արդյունքներից:

Այսպես, ԵՊՀ ՈԱ առաջին հայեցակարգը ԳԽ կողմից ընդունվել է 2007 թ-ին: Քանի որ այն չէր բավարարում ԵԶՈՒ հիմնական պահանջներին, ուստի այն ամբողջովին վերանայվեց և ԳԽ-ի կողմից նորից ընդունվեց 2012 թ-ին:

Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումները ԵՊՀ-ում անց են կացվել դեռևս 2002 թ-ից: Այդ հարցումների իրականացման կանոնակարգը և հարցերի բովանդակությունը (հարցաշարը) ենթարկվել են փոփոխությունների և լրամշակումների 2003, 2004 և 2010 թթ-ին: Հարցաթերթերի բովանդակային փոփոխությունները հիմնականում վերաբերում են դասավանդման որակին առնչվող հարցերին և ուսանողների համար դրանք ավելի ընկալելի դարձնելուն, իսկ հարցերի մի որոշ խումբ էլ վերանայվում է ամեն տարի: Հարցման կանոնակարգի վերանայումների արդյունքում հստակեցվում են հարցումների անցկացման ժամանակացույցը և ընթացակարգերը, արդյունքների մշակման, ամփոփման և օգտագործման ձևերը (տե՛ս չափորոշիչ 5.3):

Ինչպես արդեն նշվեց, ԵՊՀ–ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներն իրականացվում են 2008 թ-ից: Այս գործընթացը պարբերաբար վերանայվելուց հետո՝ ԵՊՀ ԳԽ կողմից վերջնականապես կանոնակարգվեց 2010 թ-ին: Համապատասխան կանոնակարգը սահմանում է հարցումների անցկացման, արդյունքների մշակման, պահպանման և օգտագործման ընթացակարգերը: Հարցումների հարցաշարը 2008 թ–ից ի վեր ամեն տարի ենթարկվել է լրամշակման, որի արդյունքում գնահատումները դարձել են ավելի օբյեկտիվ և հուսալի (տե՛ս չափորոշիչ 3.5):

Դասախոսական կազմի որակավորման բարձրացմանն ու կատարելագործմանն ուղղված գործընթացները ԵՊՀ-ում իրականացվել են 2002 թ-ից, որից հետո համապատասխան ծրագրերը և ընթացակարգերը վերանայվել են 2007 և 2011թթ-ին (տե՛ս չափորոշիչ 5.4 և 5.5):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.5. Որակի ներքին ապահովման համակարգը արժանահավատ և բավարար հիմք է տրամադրում որակի արտաքին ապահովման գործընթացների հաջող իրականացման համար:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.6. Որակի ներքին ապահովման համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ դրա որակի վերաբերյալ տրամադրելով հավաստի և նորացված տեղեկատվություն:**

ԵՊՀ որակի արտաքին գնահատման և/կամ հավատարմագրման գործընթացների հաջող իրականացման համար կարևոր նշանակություն ունի համալսարանի գործունեության

տարբեր ոլորտների ինքնագնահատման (ինքնավերլուծության) մեխանիզմների առկայությունը և դրանց արդյունավետությունը: Ուստի, այդ խնդրին հատուկ ուշադրություն է դարձված ԵՊՀ ՌԾ-ում՝ «Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան» (խնդիր I)բ), ինչը նախատեսում է հետևյալ միջոցառումները.

2) «Մշակել Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները ……. »:

3) «Նախաձեռնել և իրականացնել Համալսարանի … ինքնագնահատման … գործընթաց՝ համապատասխան զեկույցի հրապարակմամբ, որը հիմք կհանդիսանա ինչպես որակի արտաքին ապահովման գործընթացների իրականացման, այնպես էլ որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Նախապատրաստել Համալսարանը որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին …»:

Իսկ արտաքին և ներքին շահեկիցների համար ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով ՌԾ-ի նույն խնդրում սահմանված է՝

9) «Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը համալսարանի ներքին և արտաքին շահեկիցների համար, ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում»:

Ինչպես արդեն նշվեց 10.2 չափորոշչի վերլուծության բաժնում, վերոնշյալ ռազմավարությունների իրագործման նպատակով 2012 թ-ին ստեղծվել են ինքնագնահատման գործընթացի իրականացման հանձնաժողով (որը ղեկավարում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը), 10 աշխատանքային խմբեր՝ ԵՊՀ գործունեության տարբեր ոլորտներում ինստիտուցիոնալ ինքնագնահատում իրականացնելու և մեկ աշխատանքային խումբ (ֆակուլտետի դեկանի ղեկավարությամբ)՝կենսաբանության ֆակուլտետում ծրագրային ինքնագնահատում իրականացնելու համար: Ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը մեկնարկել է 2012 թ-ի մարտին, իսկ ծրագրայինը՝ 2012 թ. հոկտեմբերին: Դրանք իրականացվում են ՀՀ կառավարության կողմից 2011 թ. հունիսին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան:

Ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գործընթացները եզրափակվելու են համապատասխան վերլուծական զեկույցների պատրաստմամբ: Նախատեսվում է ԵՊՀ ներքին շահեկիցների համար դրանց նախագծերը 2013 թ. ապրիլին դնել քննարկման համալսարանի գիտխորհրդում: Զեկույցների վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո դրանց վերջնական տարբերակները կներկայացվեն ազգային հավատարմագրող կառույցին (ՈԱԱԿ) և հասանելի կլինեն նաև արտաքին այլ շահեկիցների համար: Դրանք բավարար հիմքեր կտրամադրեն ԵՊՀ ՈԱ գործընթացների արժանահավատ գնահատման և բարելավող միջոցառումների իրականացման համար:

ՈԱ արտաքին գործընթացներին էապես կարող է նպաստել նաև ԵՊՀ-ում երկար տարիներ գործող «վարից-վեր» հաշվետվողականության համակարգը, որը ներառում է ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն իրենց գործունեու-

թյան արդյունքների վերաբերյալ և ԵՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտորի ամենամյա հաշվետվությունը (որը հրատարակվում և տարածվում է համալսարանում և նրա սահմաններից դուրս): Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ՈԱ գործընթացներին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում և տարածվում են ԵՊՀ ստորաբաժանումներում, ինչպես նաև տեղադրվում են համալսարանի կայքէջում:

Ներքին և արտաքին շահեկիցների համար ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովելու համար կարևոր է նրանց տեղեկացվածությունն ապահովող համակարգերի առկայությունը: Այդ նպատակով ԵՊՀ-ում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

1. ԵՊՀ գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը, որտեղ ամփոփվում են անցնող ուստարում համալսարանի ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները (տե՛ս, օրինակ, ԵՊՀ 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, 716 էջ):
2. ԵՊՀ ռեկտորի ամենամյա զեկույցը Համալսարանի խորհրդին, որտեղ ամփոփվում են համալսարանի նախորդ ուստարվա գործունեության արդյունքները (այդ թվում նաև ֆինանսական), ներկայացվում է ԵՊՀ ՌԾ-ի տարեկան կատարողականը և հաստատվում է ԵՊՀ հաջորդ տարվա բյուջեն:
3. ԵՊՀ ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների (ինստիտուտներ, կենտրոններ) գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:
4. ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը, որը պարբերաբար հրատարակվում է և նպատակ ունի քանակական ցուցանիշների օգնությամբ ներկայացնել համալսարանի գործունեության արդյունքները և «առողջական» վիճակը վերջին 5 տարիների համար և տրամադրել հենանիշեր ԵՊՀ ՌԾ-ի իրականացումն ուղղորդելու համար (տե՛ս ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները 2005-2010 ուստարիների համար, Երևան, 2010, 95 էջ):
5. Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների ամենամյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են ԵՊՀ ԳԽ քննարկմանը:
6. Ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող "SuperVision" համահամալսարանական ցանցային տեղեկատվական համակարգը, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան:
7. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը 2008 թ-ից ամեն տարի հրատարակվում և հասանելի է դարձվում ուսանողներին և ներքին ու արտաքին այլ շահեկիցներին՝ տպագրված, էլեկտրոնային և առցանց տարբերակներով: Այն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում ԵՊՀ-ում ուսման կազմակերպման, կրթական ծրագրերի ու առանձին դասընթացների վերաբերյալ:

8. ԵՊՀ կայքէջում (www.ysu.am) տեղադրվող տեղեկատվությունը, որն առնչվում է ներքին գործընթացներին և կանոնակարգային դաշտին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահեկիցներին՝ ծանոթանալու համալսարանի և նրա տրամադրած կրթական և գիտական ծառայությունների հետ: Կայքէջն ապահովում է նաև հետադարձ կապի (հարց ու պատասխանի) հնարավորություն:

9. Ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական և որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը:

10. Ֆակուլտետների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ներքին ստուգումների արդյունքները, որոնք քննարկվում են ֆակուլտետի, այնուհետև ԵՊՀ ԳԽ-ում և տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ բարելավող գործողությունների իրականացման համար:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ԵՊՀ-ն դեռևս չունի միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ՝ տվյալների մեկ ընդհանուր բազայով: ԵՊՀ-ի համար այն հանդիսանում է ռազմավարական խնդիր, ինչն արտացոլված է ԵՊՀ ՌԾ-ում (խնդիր V)բ)՝ «Ստեղծել ԵՊՀ միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար»: Այս խնդրի իրագործման համար ՌԾ-ում նախատեսված են նաև կոնկրետ քայլեր:

Այս ուղղությամբ աշխատանքներ են նախատեսված նաև Համաշխարհային բանկի՝ «ԵՊՀ ՈՆԱ համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» դրամաշնորհային նախագծով, որը նախատեսում է «Որակի ներքին ապահովման/հավատարմագրման առցանց տեղեկատվական համակարգի և վիրտուալ ռեսուրսային շտեմարանի ստեղծում»: Այն հնարավորություն կտա առցանց հետադարձ կապ ապահովել ուսանողների, շրջանավարտների (հարցումներ և այլն), դասախոսների, որակի արտաքին գնահատում իրականացնող մարմինների և այլ շահեկիցների հետ: Նախատեսվում է վիրտուալ շտեմարանը գործարկել 2013 թ. վերջին: Այն լրացուցիչ հնարավորություն կընձեռի արտաքին գնահատող կազմակերպություններին՝ գործընթացը հիմնավոր կերպով իրականացնելու համար:

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

### Ձեռքբերումները

1. ԵՊՀ-ն ունի ՈԱ հստակ ձևակերպված ռազմավարություն՝ հանգամանորեն մշակված խնդիրներով և դրանց լուծմանն ուղղված միջոցառումներով, որոնք հետևողականորեն իրականացվում են:

2. ԵՊՀ-ն ունի դասավանդման արդյունավետության և որակի բարձրացմանն ուղղված ուսանողական կիսամյակային հարցումների իրականացման տասնամյա փորձ (2002

թ-ից), որի ընթացքում այն շարունակաբար կատարելագործվել է: Ուսանողական հարցումների իրականացման երկարամյա պրակտիկան նպաստել է համալսարանում որակի մշակույթի տարրերի ձևավորմանը:

3. ԵՊՀ արդեն քառամյա փորձ ունի նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան հարցումների անցկացման ասպարեզում (2008 թ-ից), որի ընթացքում այն նույնպես վերանայվել և բարելավվել է:
4. ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի առկայությունը նպաստում է համալսարանի գործունեության առավել նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպմանը: Այդ ցուցանիշների օգնությամբ ԵՊՀ-ն քանակապես գնահատում է իր գործունեության արդյունքները, վերհանում ուժեղ և թույլ կողմերը, համեմատում դրանք նախորդ տարիների իր և «հասակակից» բուհերի ներկայիս արդյունքների հետ՝ բարելավող միջոցառումներն ավելի ուղղորդված իրականացնելու նպատակով:
5. ԵՊՀ-ում գործող «վարից վեր» հաշվետվողականությունը մի յուրահատուկ «հարթակ» է համալսարանի գնահատման գործընթացներում արտաքին և ներքին շահեկիցների ներգրավվածությունն ապահովելու համար: Այն նույնպես հնարավորություն է ընձեռում վերհանել ուժեղ և թույլ կողմերը՝ իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով:
6. ԵՊՀ թափանցիկ գործելաոճը նույնպես նպաստում է շահեկիցների հետ հետադարձ կապի ձևավորմանը: Այդ թափանցիկությունն ապահովվում է ԵՊՀ-ի և ֆակուլտետների խորհուրդներում հաշվետվությունների և այլ կարևոր հարցերի բաց քննարկումներով, ԵՊՀ ցանցային տեղեկատվական համակարգով և ինտերակտիվ կայքէջով, ուսումնառության կազմակերպման բազմաթիվ ուղեցույցերով ու տեղեկագրքերով և այլն:
7. Ուսանողները ներգրավված են ԵՊՀ և ֆակուլտետների ԳԽ-երի ՈԱ մշտական հանձնաժողովներում, ԵՊՀ ինքնավերլուծության իրականացման հանձնաժողովում և առանձին աշխատանքային խմբերում, իսկ ամենակարևորը՝ ուսանողական տարբեր հարցումներում:

**Բացթողումները**

1. Որակի ներքին մշակույթը դեռևս լիովին չի ձևավորվել, ինչը պայմանավորված է ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության դեռևս ցածր մակարդակով: Այդ նպատակով ԵՊՀ-ն որդեգրել է ՈԱ համակողմանի հայեցակարգ՝ ներդնելով ՈԱ ցանցային կառուցվածք, որտեղ ներգրավված են ՈԱ կենտրոնը, ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովը և 19 ֆակուլտետների ՈԱ հանձնաժողովները: ՈԱ այս շրջանակը հնարավորություն կտա ՈԱ կենտրոնացված կանոնակարգումն ապակենտրոնացած կերպով իրագործելու ֆակուլտետներում և ամբիոններում:

2. Ուսանողները կրթության որակի հարցում ոչ միշտ են պահանջատեր, ինչը պայմանավորված է երկրում գործազրկության բարձր մակարդակով և մասնագիտական աշխատուժի շուկայի դեռևս չձևավորված լինելու հանգամանքով, որի պարագայում մասնագիտությամբ աշխատանք գտնելը ոչ միշտ է պայմանավորված մասնագիտական կարողություններով: Այս հանգամանքը ուսանողների մոտ առաջացնում է մոտիվացիայի անկում և որակյալ կրթություն ստանալու հարցում պահանջատիրության բացակայություն:
3. ԵՉՈՒ պահանջներին համահունչ ՈԱ համակարգը ԵՊՀ-ում դեռևս կայացման փուլում է, ուստի ներկայումս ՈԱ ոչ բոլոր ընթացակարգերն են գործում, մասնավորապես՝ ուսանողների գնահատման, ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների, հետազոտական աշխատանքների ոլորտներում:
4. ՈԱ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու համար առկա է համապատասխան ներուժով և մոտիվացվածությամբ մարդկային ռեսուրսների պակաս: Այս նպատակով նախատեսվում է մինչև տարեվերջ իրականացնել ֆակուլտետների վարչական և դասախոսական կազմի լայնածավալ վերապատրաստումներ:
5. Որակյալ կրթության ապահովումը մեծապես կախված է բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումից, ինչն առաջին հերթին ենթադրում է պատշաճ վարձատրություն: Չնայած ԵՊՀ ծախսերի գրեթե 70%-ը բաժին է ընկնում դասախոսական կազմի վարձատրությանը, այնուամենայնիվ այն դեռևս հնարավոր չէ հասցնել բավարար մակարդակի՝ պայմանավորված խիստ ցածր պետական ֆինանսավորմամբ և ուսման ցածր վարձաչափերով:
6. ԵՊՀ կարևորագույն արտաքին շահեկիցները՝ նախկին շրջանավարտները, հիմնական գործատու կազմակերպությունները և աշխատաշուկայի ներկայացուցիչները հանձնառություն չունեն մասնակցելու կրթական ծրագրերի մշակման, գնահատման և վերանայման գործընթացներին՝ նպաստելու համար ԵՊՀ-աշխատաշուկա համագործակցության կայացմանը:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.1. ԵՊՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՀԱՎԵԼՎԱԾ 3.1. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԵՊՀ-ն ունի 19 ֆակուլտետ և ավելի քան 100 ամբիոն: ԵՊՀ-ում գործում են 1 գիտահետազոտական ինստիտուտ, 9 հետազոտական և կրթական կենտրոններ, 24 գիտահետազոտական լաբորատորիա և 51 գիտահետազոտական խմբեր: Համալսարանն ունի 60 բակալավրի, 130 մագիստրոսի և 70 ասպիրանտական կրթական ծրագրեր: Ուսանողների թվակազմը մոտ 18000 է (ներառյալ 5000 ուսանող՝ հեռակա ուսուցմամբ), որից 13500՝ բակալավրիատում, 4000՝ մագիստրատուրայում, 400՝ ասպիրանտուրայում, իսկ Իջևանի մասնաճյուղում՝ 1600: ԵՊՀ-ում սովորում են նաև 500 օտարերկրացի ուսանողներ (2013 թ. հունվարի 1-ի դրությամբ):

ԵՊՀ դասախոսական կազմը ներառում է մոտ 1300 դասախոս, որից՝ 166 պրոֆեսոր, 461 դոցենտ, 639 ասիստենտ և դասախոս: Դասախոսների մոտ 67%-ն ունի գիտական աստիճան, 23-ը Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսներ են, իսկ 26-ը՝ թղթակից անդամներ:

### ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Հայոց լեզու և գրականություն
- Սոցիալական մանկավարժություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Հայ գրականության պատմություն
- Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն
- Համաշխարհային գրականություն և գրականության տեսություն
- Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ
- Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն
- Բարձրագույն կրթության կառավարում
- Հանրակրթության կառավարում
- Սփյուռքագիտություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 1059 է, որում ներառված են բակալավրիատի 509 և մագիստրատուրայի 179 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 306 ու մագիստրատուրայի 66 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 6 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 17 պրոֆեսոր, 42 դոցենտ, 26 ասիստենտ և 14 դասախոս:

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Կենսաբանություն
- Կենսաֆիզիկա
- Կենսաքիմիա
- Կենսաինֆորմատիկա

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Բուսաբանություն
- Կենդանաբանություն
- Գենետիկա և բջջաբանություն
- Մարդու և կենդանիների ֆիզոլոգիա
- Կենսատեխնոլոգիա
- Էկոլոգիա և բնության պահպանություն
- Կենսաքիմիա
- Բժշկական կենսաքիմիա
- Կենսաֆիզիկա
- Կենսաինֆորմատիկա
- Կիրառական կենսաբանություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 605 է, որում ներառված են բակալավրիատի 363 և մագիստրատուրայի 127 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 115 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 23 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ 3 թղթակից անդամ, 22 պրոֆեսոր, 31 դոցենտ, 33 ասիստենտ և 2 դասախոս:

## ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Քիմիա
- Էկոլոգիական քիմիա
- Դեղագիտություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Ֆիզիկական քիմիա
- Օրգանական քիմիա
- Անօրգանական քիմիա

- Էկոլոգիական քիմիա
- Դեղագիտություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 611 է, որում ներառված են բակալավրիատի 343 և մագիստրատուրայի 66 ուսանող առկա ուսուցմամբ, հնգամյա կրթական համակարգով սովորող 69 և բակալավրիատի հեռակա ուսուցմամբ սովորող 133 ուսանող: Ֆակուլտետն ունի նաև 12 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս և 1 թղթակից անդամ, 15 պրոֆեսոր, 27 դոցենտ, 21 ասիստենտ և 4 դասախոս:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Տնտեսագիտության տեսություն
- Կառավարում

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Տնտեսական քաղաքականություն և իրավունք
- Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
- Գործարար կառավարում
- Ինովացիոն կառավարում
- Միջազգային տնտեսական հարաբերություններ
- Մոդելավորումը ֆինանսատնտեսական համակարգերում
- Կառավարման ինֆորմացիոն համակարգեր
- Հաշվապահական հաշվառում և աուդիտ:

Ուսանողների ընդհանուր թիվը 1679 է, որում ներառված են բակալավրիատի 802 և մագիստրատուրայի 202 ուսանող առկա ուսուցմամբ, բակալավրիատի 360 և մագիստրատուրայի 317 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի ավելի քան 60 ասպիրանտ, որոնցից 40-ը օտարերկրացիներ են:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, 14 պրոֆեսոր, 38 դոցենտ, 57 ասիստենտ և 8 դասախոս:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Երկրաբանություն
- Աշխարհագրություն
- Ջրաօդերևութաբանություն

- Քարտեզագրություն և կադաստրային գործ
- Սերվիս

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Երկրաֆիզիկա
- Միներալոգիա, պետրոգրաֆիա և երկրաքիմիա
- Ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն
- Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում
- Հասարակական աշխարհագրություն
- Քարտեզագրություն
- Բնօգտագործում և բնապահպանություն
- Պատմական և ռեգիոնալ երկրաբանություն
- Ֆիզիկական աշխարհագրություն և լանդշաֆտների էկոլոգիա
- Գեոմորֆոլոգիա
- Ջրաօդերևութաբանություն
- Սերվիս
- Կադաստր:

Ուսանողների ընդհանուր թիվը 910 է, որում ներառված են բակալավրիատի 562 և մագիստրատուրայի 87 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 261 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 11 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, 10 պրոֆեսոր, 29 դոցենտ, 9 ասիստենտ և 12 դասախոս:

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Պատմություն
- Արվեստաբանություն
- Մշակութաբանություն
- Կովկասագիտություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Ազգագրություն
- Հնագիտություն
- Հայոց պատմություն (նոր և նորագույն շրջան)

- Հայոց պատմություն (հին և միջին դարեր)
- Հայաստանին հարակից երկրների պատմություն
- Արվեստաբանություն
- Համաշխարհային պատմություն
- Մշակութաբանություն
- Կովկասագիտություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 1150 է, որում ներառված են բակալավրիատի 557 և մագիստրատուրայի 224 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 343 ու մագիստրատուրայի 26 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 9 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ 5 թղթակից անդամ, 15 պրոֆեսոր, 48 դոցենտ, 4 ասիստենտ և 13 դասախոս:

## ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Մաթեմատիկա. Համակարգչային գիտություններ

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում
- Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում
- Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա:

Ուսանողների ընդհանուր թիվը 645 է, որում ներառված են բակալավրիատի 490 և մագիստրատուրայի 72 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 83 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 12 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոս, 8 պրոֆեսոր, 31 դոցենտ, 17 ասիստենտ և 8 դասախոս:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Միջազգային հարաբերություններ
- Քաղաքագիտություն
- Հանրային կառավարում

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Միջազգային հարաբերություններ

- Քաղաքագիտություն
- Հանրային կառավարում
- Տարածաշրջանային քաղաքականություն
- Ազգային անվտանգություն
- Համաշխարհային քաղաքականություն
- Միջազգային իրավունք
- Քաղաքական տեխնոլոգիաներ և մարկետինգ:

Ուսանողների ընդհանուր թիվը 2009 է, որում ներառված են բակալավրիատի 890 և մագիստրատուրայի 322 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 574 ու մագիստրատուրայի 223 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 37 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 7 պրոֆեսոր, 27 դոցենտ, 52 ասիստենտ և 5 դասախոս:

## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Լրագրություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Լրագրություն
- Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն
- Հանրային կապեր և լրատվամիջոցների հետ հաղորդակցություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 424 է, որում ներառված են բակալավրիատի 194 և մագիստրատուրայի 91 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 110 ու մագիստրատուրայի 13 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 16 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 3 պրոֆեսոր, 8 դոցենտ, 9 ասիստենտ և 6 դասախոս:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Իրավագիտություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն և պատմություն
- Քաղաքացիական իրավունք և դատավարություն
- Քրեական իրավունք և դատավարություն
- Միջազգային իրավունք

- Եվրոպական իրավունք
- Գործարարական իրավունք
- Կրիմինալոգիա:

Ուսանողների ընդհանուր թիվը 1131 է, որում ներառված են բակալավրիատի 500 և մագիստրատուրայի 150 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 480 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 35 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ, 9 պրոֆեսոր, 32 դոցենտ, 3 ասիստենտ և 19 դասախոս:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Մաթեմատիկա
- Մեխանիկա
- Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա:

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Դիֆերենցիալ հավասարումներ
- Ֆունկցիաների տեսություն
- Կիրառական հանրահաշիվ և երկրաչափություն
- Օպտիմիզացիայի մեթոդներ
- Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն
- Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա
- Շարժման ղեկավարում և կայունություն
- Ակտուար և ֆինանսական մաթեմատիկա
- Ռիսկերի կառավարում:

Ուսանողների ընդհանուր թիվը 605 է, որում ներառված են բակալավրիատի 485 և մագիստրատուրայի 120 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 59 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 24 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս և 4 թղթակից անդամ, 21 պրոֆեսոր, 45 դոցենտ, 20 ասիստենտ և 10 դասախոս:

## ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Ֆիզիկա

- Միջուկային ռեակտորների ֆիզիկա
- Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Տեսական ֆիզիկա
- Մակրոմոլեկուլների ֆիզիկա
- Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա
- Մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդներ, գծային և ոչ գծային մոտարկումներ
- Օպտիկա
- Պինդ մարմնի ֆիզիկա
- Աստղաֆիզիկա
- Օպտոէլեկտրոնիկա և ֆոտոնիկա:

Կան բակալավրիատի 323 և մագիստրատուրայի 93 ուսանող: Ֆակուլտետն ունի նաև 34 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս և 5 թղթակից անդամ, 30 պրոֆեսոր, 45 դոցենտ, 21 ասիստենտ և 5 դասախոս:

## ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Արաբագիտություն
- Իրանագիտություն
- Թյուրքագիտություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Իրանական բանասիրություն
- Իրանի պատմություն
- Արաբական և սեմական լեզվաբանություն
- Արաբամուսուլմանական քաղաքակրթության պատմություն և իսլամագիտություն
- Արաբական արևելքի արդի հիմնախնդիրներ
- Թուրքական բանասիրություն
- Օսմանագիտություն
- Իրանի էթնոլեզվական հանրույթներ:

Ուսանողների ընդհանուր թիվը 555 է, որում ներառված են բակալավրիատի 455 և մագիստրատուրայի 100 ուսանող առկա: Ֆակուլտետն ունի նաև 6 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 2 պրոֆեսոր, 20 դոցենտ, 19 ասիստենտ և 26 դասախոս:

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Փիլիսոփայություն
- Հոգեբանություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Փիլիսոփայություն
- Բարոյագիտություն
- Կառավարման և կազմակերպչական հոգեբանություն
- Արտակարգ և ճգնաժամային իրավիճակների հոգեբանություն
- Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա
- Սոցիալական և քաղաքական հոգեբանություն
- Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն
- Զարգացման հոգեբանություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 621 է, որում ներառված են բակալավրիատի 355 և մագիստրատուրայի 164 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 114 ու մագիստրատուրայի 34 ուսանող՝ հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 29 ասպիրանտ և 28 օտարերկրացի ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ, 10 պրոֆեսոր, 21 դոցենտ, 16 ասիստենտ և 13 դասախոս:

### ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա
- Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա
- Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում
- Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա
- Ալիքային պրոցեսների տեսություն և տիեզերքի ֆիզիկա
- Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում

- Գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկա և հեռահաղորդակցություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 357 է, որում ներառված են բակալավրիատի 252 և մագիստրատուրայի 62 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 28 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 15 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս, 14 պրոֆեսոր, 32 դոցենտ, 8 ասիստենտ և 8 դասախոս:

## ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Անգլերեն լեզու և գրականություն
- Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում (անգլերեն լեզու)
- Թարգմանչական գործ՝ անգլերեն լեզու և հայոց լեզու
- Թարգմանչական գործ՝ ֆրանսերեն լեզու և հայոց լեզու
- Թարգմանչական գործ՝ գերմաներեն լեզու և հայոց լեզու
- Թարգմանչական գործ՝ իսպաներեն լեզու և հայոց լեզու
- Ֆրանսերեն լեզու և գրականություն
- Գերմաներեն լեզու և գրականություն
- Իսպաներեն լեզու և գրականություն
- Իտալերեն լեզու և գրականություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Գերմանական լեզուներ (անգլերեն)
- Գերմանական լեզուներ (գերմաներեն)
- Ռոմանական լեզուներ (ֆրանսերեն)
- Ռոմանական լեզուներ (իսպաներեն)
- Թարգմանչական գործ (անգլերեն)
- Թարգմանչական գործ (ֆրանսերեն)
- Արտասահմանյան գրականություն
- Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում (անգլերեն լեզու)
- Իտալերեն լեզու և գրականություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 1893 է, որում ներառված են բակալավրիատի 1149 և մագիստրատուրայի 307 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 437 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 14 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 6 պրոֆեսոր, 46 դոցենտ, 40 ասիստենտ, ինչպես նաև 175 դասախոս:

## ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Ռուսաց լեզու և գրականություն
- Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն (ռուսաց լեզու)
- Թարգմանչական գործ՝ ռուսերեն և հայերեն
- Հունարեն լեզու և գրականություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Ռուս գրականություն
- Ռուսաց լեզու
- Թարգմանչական գործ՝ ռուսերեն և հայերեն
- Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն (ռուսաց լեզու):

Ուսանողների ընդհանուր թիվը 474 է, որում ներառված են բակալավրիատի 308 և մագիստրատուրայի 57 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 109 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 3 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 5 պրոֆեսոր, 32 դոցենտ, 22 ասիստենտ և 11 դասախոս:

## ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Սոցիոլոգիա (սոցիոլոգիա, հասարակայնության հետ կապեր և կոնֆլիկտաբանություն մասնագիտացումներով)
- Սոցիալական աշխատանք

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Սոցիալական հետազոտությունների մեթոդաբանություն
- Սոցիալական աշխատանք
- Սոցիալական քաղաքականություն և վարչարարություն
- Միգրացիայի և կոնֆլիկտի ուսումնասիրություններ
- Հասարակայնության հետ կապեր (PR):

Ուսանողների ընդհանուր թիվը 423 է, որում ներառված են բակալավրիատի 266 և մագիստրատուրայի 105 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 46 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 20 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 3 պրոֆեսոր, 12 դոցենտ, 8 ասիստենտ և 28 դասախոս:

## ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Աստվածաբանություն
- Եկեղեցաբանություն

*Մագիստրոսի կրթական ծրագրեր.*

- Վարդապետական աստվածաբանություն
- Կրոնագիտություն
- Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 242 է, որում ներառված են բակալավրիատի 193 և մագիստրատուրայի 17 ուսանող առկա ուսուցմամբ և բակալավրիատի 32 ուսանող հեռակա ուսուցմամբ: Ֆակուլտետն ունի նաև 8 ասպիրանտ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, 4 պրոֆեսոր, 5 դոցենտ, 8 ասիստենտ և 6 դասախոս:

## ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Էկոլոգիական քիմիա

Ուսանողների ընդհանուր թիվը 115 է:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 1 պրոֆեսոր, 16 դոցենտ, 4 ասիստենտ և 2 դասախոս:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Տնտեսագիտության տեսություն
- Սերվիս

Ուսանողների ընդհանուր թիվը 194 է:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 2 պրոֆեսոր, 7 դոցենտ, 8 ասիստենտ և 6 դասախոս:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Հայոց լեզու և գրականություն
- Պատմություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Անգլերեն լեզու և գրականություն
- Ֆրանսերեն լեզու և գրականություն:

Ուսանողների ընդհանուր թիվը 391 է:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 3 պրոֆեսոր, 18 դոցենտ, 17 ասիստենտ և 19 դասախոս:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

*Բակալավրի կրթական ծրագրեր.*

- Կիրառական արվեստ:

Ուսանողների ընդհանուր թիվը 94 է:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 1 դոցենտ, 11 ասիստենտ և 2 դասախոս:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3.2. «ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐԸ (ՍՊԵՑԻՖԻԿԱՑԻԱՆ)

| | |
|---|---|
| 1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | Կիրառական կենսաբանություն |
| 2. Բուհը | Երևանի պետական համալսարան |
| 3. Ծրագիրը հավատարմագրված է | – |
| 4. Շնորհվող որակավորումը | Մագիստրոսի աստիճան |
| 5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին | 2011/12 |
| 6. Ուսումնառության լեզուն | Հայերեն |
| 7. Ուսուցման ձևը | Առկա |

**8. Ծրագրի ընդունելության չափանիշները**

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- բակալավրի դիպլոմ բնագիտական որևէ մասնագիտությամբ,
- բարձր գնահատականներ կենսաբանության, բժշկության, գյուղատնտեսության, էկոլոգիայի ոլորտներին առնչվող առարկաներից և համակարգչի իմացությունից,
- անգլերենի իմացություն եվրոպական լեզվական փաթեթի առնվազն B2 մակարդակով:

Ընդունելությունը կատարվում է հարցազրույցի հիման վրա:

**9. Ծրագրի նպատակները**

Ծրագիրը նպատակ ունի նախապատրաստել մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում, հիմնարար գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

1. Վերլուծել և համակարգել բժշկական, գյուղատնտեսական, սննդի և շրջակա միջավայրի պահպանության կենսատեխնոլոգիաների ոլորտներին առնչվող տեղեկատվական տվյալները,
2. Կիրառել միջառարկայական գիտելիքներն ակադեմիական, կլինիկական և արդյունաբերական ոլորտներում, ներառյալ` բժշկական, դեղագործական, գյուղատնտեսական և սննդի արտադրության ոլորտները,
3. Կիրառել արդի կենսաբանության յուրահատուկ հետազոտական մեթոդները՝ մարդու, կենդանիների և բույսերի հիվանդությունների ախտորոշման, սննդի և պարենի անվտանգության, շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիաներում,
4. Նախագծել և իրականացնել տարբեր կենսաարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացմանը և որակի ապահովմանն ուղղված ծրագրեր,
5. Ձևակերպել, մշակել և զարգացնել հետազոտական ծրագիր, ինչպես նաև արդյունավետ աշխատել և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար:

| 10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները | |
|---|---|
| **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br>Ա1. կտիրապետի գյուղատնտեսության, կենսաէներգետիկայի, բժշկության, սննդի արդյունաբերության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում կենսատեխնոլոգիայի կիրառման տեսական հիմունքներին.<br>Ա2. ծանոթ կլինի գենոմի կառուցվածքի ու ֆունկցիայի ուսումնասիրության և վերլուծության արդի մեթոդներին.<br>Ա3. ծանոթ կլինի մանրէաբանական կենսատեխնոլոգիայի և արդյունաբերության տեխնիկական սարքավորումներին.<br>Ա4. ծանոթ կլինի գլոբալ էկոլոգիական խնդիրների, աղտոտիչների կենսական ցիկլերի առանձնահատկություններին և շրջակա միջավայրի պահպանության համար կիրառվող կենսատեխնոլոգիական մեթոդներին.<br>Ա5. կտիրապետի հետազոտության նախագծման և իրականացման տեսական հիմունքներին.<br>Ա6. կտիրապետի կենսաքիմիական, արյունաբանական, բջջաբանական, սաղմնաբանական, գենետիկական և մոլեկուլային կենսաբանության հետազոտությունների մեթոդներին.<br>Ա7. ծանոթ կլինի կիրառական կենսաբանության բնագավառում իրավական գործընթացներին և էթիկայի նորմերին: | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br><br>Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա7 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.<br><br>Ա1, Ա2, Ա3, Ա4.<br>▪ դասախոսություններ՝ նյութի մանրակրկիտ մեկնաբանությամբ,<br>▪ փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,<br>▪ հետազոտական խմբերում ուսանողների աշխատանք,<br>▪ ուսուցողական այցեր գիտահետազոտական ինստիտուտներ և արտադրություններ.<br>Ա5, Ա6.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ լաբորատոր աշխատանքներ,<br>▪ գիտական սեմինարներ.<br>▪ խմբերում հետազոտական նախագծերի առաջադրում գիտահետազոտական պրակտիկա.<br>Ա7.<br>▪ դասախոսություններ՝ նյութի մանրակրկիտ մեկնաբանությամբ,<br>▪ առաջադրանքներ և նախագծեր,<br>▪ փոքր խմբերում իրավիճակների առաջադրում և քննարկում:<br><br>**Գնահատման մեթոդները**<br><br>Ուսանողների Ա1-Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.<br>Ա1, Ա4.<br>▪ առաջադրանքներ,<br>▪ ստուգարքներ և քննություններ.<br>Ա5-Ա6.<br>▪ առաջադրանքներ,<br>▪ ուսումնական նախագծեր,<br>▪ ստուգարքներ և քննություններ,<br>▪ մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն.<br>Ա7.<br>▪ խմբային նախագծեր.<br>▪ մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն: |

| Բ. Գործնական մասնագիտական կարողություններ | Դասավանդման/ուսումնառության մեթոդները |
|---|---|
| Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Բ1. կիրառել հետազոտության արդյունքների վերլուծության որակական ու քանակական մեթոդները, կատարել արտադրական գործընթացների արդյունավետության վիճակագրական վերլուծություն.<br><br>Բ2. կիրառել ռիսկի գնահատման մեթոդները հանրային առողջությանը վերաբերող կարևորագույն խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող գործողություններում.<br><br>Բ3. աշխատել ախտաբանական լաբորատորիաներում և կիրառել մարդու որոշ հիվանդությունների կլինիկական, արյունաբանական, կենսաքիմիական, հյուսվածքաբանական, քրոմոսոմային և իմունոլոգիական մեթոդները.<br><br>Բ4. մշակել առողջ սննդակարգի ռազմավարություններ.<br><br>Բ5. աշխատել սննդի և շրջակա միջավայրի կենսաանվտանգության լաբորատորիաներում և կիրառել օտարածին կենդանի օրգանիզմների (այդ թվում՝ գենետիկորեն ձևափոխված) հայտնաբերման և քանակական անալիզի ժամանակակից մեթոդները.<br><br>Բ6. կիրառել սննդում ախտածին մանրէների որակական և քանակական վերահսկողության մոտեցումները և մեթոդները.<br><br>Բ7. աշխատել ֆերմենտների, մետաբոլիտների , կենսապեստիցիդների արտադրության բնագավառներում և կիրառել գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի մեթոդները.<br><br>Բ8. մշակել միջավայրի աղտոտիչների կենսաքայքայման և կենսաբանական | Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ13 կարողությունները հետևյալ մեթոդներով.<br><br>Բ1 – Բ10.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ լաբորատոր աշխատանքներ,<br>▪ գիտական սեմինար,<br>▪ գիտահետազոտական պրակտիկա,<br>▪ ուսումնական նախագծեր,<br>▪ գիտահետազոտական աշխատանք,<br>Բ4, Բ10.<br>▪ առաջադրանքներ,<br>▪ գիտահետազոտական պրակտիկա.<br>Բ12-13.<br>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,<br>▪ գիտահետազոտական պրակտիկա,<br>▪ գիտական սեմինար:<br><br>**Գնահատման մեթոդները**<br><br>Ուսանողների Բ1-Բ13 գործնական կարողու-թյունները գնահատվում են<br><br>հետևյալ ձևերով.<br>Բ1-Բ10.<br>▪ առաջադրանքներ,<br>▪ ստուգարքներ և քննություններ,<br>▪ ուսումնական նախագծեր,<br>▪ մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն.<br>Բ11.<br>▪ առաջադրանքներ,<br>▪ ստուգարքներ և քննություններ,<br>▪ ուսումնական նախագծեր.<br>Բ12, Բ13.<br>▪ խմբային նախագծեր,<br>▪ մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն: |

| | |
|---|---|
| վերականգնման նոր եղանակներ և կատարելագործել գոյություն ունեցողները.<br><br>Բ9. գնահատել կենսավառելիքի օգտագործման հնարավորությունները, մշակել կենսավառելիքի ստացման նոր տեխնոլոգիաներ.<br><br>Բ10. իրականացնել արտոնագրման համար անհրաժեշտ գործընթացներ և մշակել կենսատեխնոլոգիայի ոլորտի բիզնես պլաններ.<br><br>Բ11.կիրառել գյուղատնտեսական արտադրության և սննդամթերքի որակի բարձրացմանն ուղղված բույսերի և սննդի ֆունկցիոնալ գենոմիկայի մեթոդները.<br><br>Բ12. վերլուծել շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառում տարբեր իրավական համակարգերի կիրառման հնարավորությունները.<br><br>Բ13. անել առաջարկներ ակադեմիական, կլինիկական և արդյունաբերական ոլորտներում աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ.<br><br>Բ14. դրսևորել աշխատանքի բարձր արդյունավետություն՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար: | |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br><br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ).<br><br>Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,<br><br>Գ3. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br><br>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.<br><br>Գ1.<br><br>▪ օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում և համացանցից օգտվելով՝ անհատական հանձնարարությունների կատարում.<br>▪ բանավոր ներկայացումներ,<br>▪ գիտական սեմինար.<br>Գ2.<br><br>▪ դասախոսություններ, |

| | |
|---|---|
